



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- 1.— Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ Բիրտ իրականութեան
ներքին քանաստեղծականութիւնը
- 5.— Լ. ԱՅԱՏԱ Մարդը՝ որ ինքն իր դէմ պատերազմեցաւ
(հայացուց՝ Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ)
- 15.— Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ Խաչածեւոզ ձայներ
- 18.— Ս. ԱՍԱՏՐԵԱՆ Ապրող կակաչներ
- 24.— Փ. ՃԵՐԱՆԵԱՆ Երեք ֆերբուած
- 26.— Յ. ՕՇԱԿԱՆ Սահակ Պարգեւեան
- 43.— Բ. ՓԱՓԱԶԵԱՆ Անցեալ հարիւրամեակի
հայ քատերական գրականութեան
կշիռը ճշդելու փորձ մը
- 58.— Լ. ՄԿՐՏՁԵԱՆ Ում են վերաբերում
Զարենցի 1936ի Սեպտեմբեր 27ի տողերը
- 64.— Ե. ԶԱՐԵՆՑ Մասունք մը՝ Ե. Զարենցի անտիպներէն
- 66.— ԵՐ. Տ. ԳԱՐԱՃԵԱՆ Նկատումներ՝ ժըպրան իսլիլ ժըպրանի
«Մարգարէն» հատորի
քարգմանութեան մասին
- 71.— Ս. Պ.—ՏԱՏՈՅԵԱՆ Լիբանանահայ նկարչութիւնը
- 80.— * * * Մշակութային լուրեր



Քաղաք

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԷՍՏԻ

Ք. Գ. Թ. Բ. Բ. Մ. Կ. Ս. Ս. Ս. Ս. Ս. 1984 Գ. Լ. Ե. Բ. Կ. Բ.

Ս. Կ. Ի. Բ. Ա. Կ. Ո. Ս. Ե. Ա. Ն.



ԲՒՐՏ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Իրականությունն անլի ճշգրիտ, անլի իրա-
զույցալ համար՝ միայն մէկ ձև կայ, մէկ մի-
շուց, — բանաստեղծ ըլլալ:

-ԲԼՕՏ ԲՈՒԱ

Սուրիացի երիտասարդ քատերագիր Լուիյ Այասա մէկն է այն նորագոյն անուններէն, որոնք հրապարակ իշամ եօթանասունական թուականներում, սուրիական մամուլին եւ գրական հանդէսներու էջերում ստորագրելով արձակ գործեր, բանաստեղծութիւններ, ուսումնասիրութիւններ եւ քնննադատական փորձեր: Պայմանական ընտրագրումով մը «Եօթանասունական թուականներու սերունդ» կոչուած այս տղոց քատերական փորձերը գլխաւորաբար առաջնորդուեցան երկու ուղղութեամբ՝ անեքեքի, բայց մանաւանդ յանձնառու քատերի գասակոմացած հասկացութիւններէն թելադրում: Հաւանաբար այս եղաւ պատճառը, որ հակառակ ինքնուրոյն քատերնի մը ստեղծումը նպատակադրով իրենց նիգերուն, անոնք չյաբոգեցան բօքալիել բացայայտ ազդեցութիւնները մէկ կողմէ Սամուէլ Ռէէքի, Էօժէն Խոնեսոյի, Արքիւր Ազանովի, Էտուրքտ Ալայիի եւ, միւս կողմէ՝ Պերթալտ Պոնիթի, Փիբըր Վայսի եւ այլ հեղինակներու: Մանաւանդ վերջին երկուքը՝ Պոնիթի եւ

9934-859

Վալս, եզան դժուար յաղթահարելի մարտահրաւեր մը, երբ Պրեխթեան Դրպ-
րացի փորձաքննիչն զարնուելով՝ անձեզ տեղի տուին պրեխթեան դիւցազմեր-
գութեան, ծիսակատարութիւններու օգտագործումին եւ կաշառող այլ յատ-
կանիչներու առջեւ:

Քաղաքական եւ ընկերային նկատառումով քատերախաղեր մշտնադ հե-
ղինակներու գործերուն մէջ, Լուէյ Այատայի «Մարդը, որ ինքն իր դէմ պատ-
տերազմեցաւ»^(*) անուն քատերակը նկատառելի յաջողութիւն մը արձանա-
գրեց յանձնառու քատրանի երիտասարդական միւս փորձերուն հաշուոյն՝ իր
ինժնուրոյն դիմագիծին, Պրեխթեան Դպրոցէն արձանագրած շեղումներուն եւ
բիրտ իրականութիւնները բանաստեղծականօրէն գարգացնող կայտառ կըռոյ-
թին շնորհիւ:

Գրանկան որոշ արժէք մը ունեցող այս հայանպաստ քատերախաղի պա-
րագային, ինչ որ կը հետաքրքրէ մեզ եւ Լ. Այատայի գործը կ'անցատէ իր
սերունդին այլ յաջողութիւններէն՝ անոր ընդգրկած ճիւրօն է եւ հարցերը
գարգացնելու համամարդկային պարկեշտութիւնը: Այս իսկ պատճառով մեծ
ձեռնարկեցինք յիշեալ գործի քարգմանութեան, յետ-եղեւնեան մթնոլորտէն
վերցուած «Մարդը, որ ինքն իր դէմ պատերազմեցաւ»ը հայ ընթերցողին
հրամցնելու նպատակով:

Լ. Այատայի այս քատերակը իբրեւ ճիւր կը շօշափէ յետ-եղեւնեան
մթնոլորտը՝ իր մարդկային եւ դասակարգային շերտերով: Դէպքերը կը սկը-
սին անսպաստային տեսարանով մը, որ մեզի կը ներկայացնէ վիրատու հայ ե-
րիտասարդի մը (Յակոբ) եւ անոր բրոջ (Միլվա) փախուստը: Փախուստական
այս գոյգիծ կը յաջողեն զանոնք հալածող թուրք եւ արաբ զինուորներ ու
սպաններ, որոնք «Հողը կը հերկեն, այս կեանքին հետքը դաննելու համար»:
Ապա բեմ կը մտնեն դրամատէր եւ կալուածատէր դասակարգերու ներկայա-
ցուցիչները՝ Օսման ազան, Ռաշատ էֆէնտին, Սուլէյմանը, համեստ գիւ-
ղացիներ եւ ուրիշներ:

Հագիւ բեմ մտած՝ այս տիպարները քատերախաղի դիպաշարին վրայ
կը դնեն իրենց դրոշմն ու նկարագիրը, ինչ որ «Մարդ մը, որ ինքն իր դէմ
պատերազմեցաւ»ը կ'առաջնորդէ նոր կացութիւններու եւ տարբեր մտանա-
զութիւններու:

Այսպէս, Առաջին արարի առաջին տեսարանին մէջ Յակոբին եւ այդ
«ստանան» հետապնդող զինուորներուն միջեւ ծագած բուռն վիճարանու-
թեան ծանօթանալէ ետք, Ամէտի «Նասաման... դինուորը գուժ ըստածը
պէտք չէ ճանչնայ... դինուորը դինուոր է» յամառումին առիթով Նասամին
ընդվզումին ակամջալուր ըլլալէ յետոյ («Չինուորը մա'րդ է»), երկրորդ տես-
արանը մեզ կը փոխադրէ թրքական գիւղ՝ պարգելու համար ընկերային նե-
խած մթնոլորտը թրքական միջավայրին: Կարճ տեսարան մը, որ եւ սա-
կաշմ կը պարգուի անմարդկային պարունակը դաւադրութիւններով եւ շահա-
գործումներով քանձրացուած թրքական հեղձուցիչ միջավայրին: Ու ասոր
կը յաջորդէ Տեր-Ջօրը՝ թրքական միջավայրէն ծառանգած իր թարգմանով ու

(*) Այս քատերախաղը առաջին անգամ ներկայացուած է 1 Մայիս 1961ին, Դամասկոսի
«Ալ-Համբա» քատերախաղի թմին վրայ, հեղինակին թմադրութեամբ եւ իրադրու-
թեամբ «Համալսարանական հեղրեական քատերախաղի» ղեկաւանդաբանութիւնով:

նենգութիւններով, շահակցական մտեցումներով եւ իրենց էութեան հաւատարիմ տնտեսական ընդլուծումներով: Հաս կը տեսնենք իր հարագատ եղբայրն իսկ կեղեքող վաճառական Սուլէյմանն ու անոր անիրաւուած եղբայրը՝ Սալէմը, իր ամուսնոյն արարքին դէմ ծառայող գտարիւն Ջահրան եւ անոր շունչով նկարագիր կազմած Ֆաթիմէն, որոնց տունը, տակաւ առ տակաւ, պիտի դառնայ առանցքը Քատերայտղին՝ Քէ՛ մերքին եւ Քէ՛ արտեֆին բազմագոյն բախումներով ու հոգեքանական լարուած վիճակներով:

Յատերակին այս երկնիւզ գարգացումը, պիտի ըստինք՝ կրկնակ ժամանակը պիտի ստանայ անլի գոտարակուած բաւի ու տարողութիւն, երբ Յակոբն ու Սիլվան պիտի ապաստանին յիշեալ յարկէն ներս, ինչ որ առանկ եւս պիտի օրէ Սուլէյման-Ջահրա, Սուլէյման-Ահմէտ (Ֆաթիմէի սպայ Նշանաժը), Ահմէտ-Ջահրա, Ահմէտ-Ֆաթիմէ յարաբերութիւնները՝ բացայայտեալով նկարագրային հատու գիծերը իւրաքանչիւր տիպարին: Ըսենք ամմիջապէս, որ շնորհիւ իր ճարտար կարողութեան՝ Լ. Այստա այս եւ յաջորդ արարներուն մէջ պիտի յաջողի պահել գրող-տիպար անբութեշտ հետաւորութիւնը, հակառակ այն բացայայտ իրողութեան, որ մենք պիտի տեսնենք իր տնտեսական արարքներուն ետին կանգնած գաղափարական յստակ դիմագիծ ունեցող յանձնառու Քատերայի մը:

Ճիշդ է, որ Քատերակին տողըմէջ «գրութեան» ընդմէջէն ի յայտ կու գայ ընկերվարական համագումներով քրժուած յանձնառու Քատերայի մը, սակայն նոյնքան նիշդ է, որ Լ. Այստա իր համագումներուն համաձայն հերոսներ չի ձեւեր, այլ թեմ կը հանէ այնպիսի՝ տիպարներ, որոնք իրենց տարբերով եւ կացութիւններէն բխած արտայայտութիւններով, այսինքն՝ իրենց էութեան ճառագայթումներով կը հարստացնեն դէպքերուն հովովոյթը: Անլի՛մ. Լ. Այստա կը յաջողի տեղծել համազօր ու կուռ այնպիսի՝ դիպաշար մը, որուն պարզ հերոսները չեն սայթափըր գաղափարական մարզանքներու հրապուրիչ քակարդներուն մէջ, այլ, ընդհակառակն, կենսէն ծրնունք առած իրենց պարզ կեցութեաններով ու ելոյթներով մեզի կը պարզեն իրական վիճակներու *կենդանի արամը*՝ ամենաբարդ հարցերն իսկ կեանքի տուրայէն անցընելէ ետք:

Կեանքի բիրտ իրականութեանց ներքին բաճաստեղծութիւնը բացայայտող արուեստագէտի իր հեզասահ այս կարողութեան շնորհիւ՝ Լ. Այստայի «Մարդ մը, որ ինքն իր դէմ պատերազմէցաւ»ը կը դառնայ «Իրականութեան անկի ճշգրիտ, անլի իրաւ» իրականութիւնը, ինչպէս կը սահմանէ Բյուտ Բուս: Այս պարագան անլի շեշտուած տարողութիւն կը ստանայ մանաւանդ ստացին արարէն ետք, երբ բազմահանգոյց կացութիւնները լուսարձակի տակ կ'առնեն ամբողջ ժամանակաշրջանը՝ մեզի ներկայացուած պատկերներուն ընդմէջէն: Կարծես բոլորն ալ ժամանակը ձեռքակալել կը փորձեն, բայց ժամանակ-կեանքը անգիկի պէս կը սահի իրենց մտտներուն արանէէն, գիրենք տրամին հոսքին մէջ առնելէ ետք: Այսպէսով, երեսն կու գայ, որ ժամանակի ծառը դատապարտուած է չորացման, որովհետեւ ծառը կրժուած է ներսէն, հարուածուած՝ իր իսկ արմատներէն, որուն հետեւանքով անոնք կը սկսին կրել իրենց իսկ բնադրած ռոքերգութիւնը: Ու կը մտնի Ահմէտ-Ֆաթիմէ սիրոյ պատմութիւնը, Սուլէյման-Ջահրա համաձայնուած համակեցութիւնը կը վերածուի անտանելի մթնոլորտի մը, զաւարդութիւններն ու կեղեքումները կ'անցնին մարդկային բոլոր սահմաններէն անդին, որովհետեւ կ'անհետանայ նոյնիսկ սիրոյ յայտը, որ վիճակ է, ապրում է եւ ո'չ Քէ եսակեղքան անձ մը:

Արդարեւ, ասիկա ա՛յն մակարդակն է, որ բազմաֆակտային ընկերային մեկնակետերէ ճամբայ ելած քատերագիրը կը յաջողի միաձուլել պահերն ու հոգեվիճակները՝ շրջանցելով անոնց միջեւ տարազնուելու վտանգը: Աւելի պարզ խօսեալ՝ ԽՍՀՄ-ի արտադրողի արտադրանքն ու դաւածին մթնոլորտին ֆուրսէն անցնելով, Լ. Այստա կը յաջողի մերկացնել ո՛չ միայն քուրքին միասնականն ու նեղ մկարագիրը, կը յաջողի ֆանդակել ո՛չ միայն անոր ժառանգութեամբ աշխատած տէր-գործի վաճառականին ողջ էութիւնը, այլեւ՝ հասանքն ի դէմ քիավարող Զահրայի, Ֆաթիմէի, Հատ Մարտի, Սալէմի եւ Լմ Ամէտի անխաբար ու ասպնջական *հասարակաց տէպարը*:

Գեղարուեստական այս որակը կը ստանայ աւելի պայծառ տարողութիւն, երբ պահերը, վիճակները, նկարագիրներն ու անոնց հակադիր ինքնակները քատերագիրը կը միաձուլէ մէկ ամբողջութեան մէջ, այսինքն՝ կը նշանակէ քատերական ա՛յն ընթացիկը, որ բարձրագոյն թայց հաւասարակշռւած պարբերական մը կը խօսի անաբատ ընկերութեան եւ ցեղապաշտ ու ծաւալապաշտ հակամակերու վրայ հաստատուած ամբողջ վարչակարգերու տրամն ու պատուհասները: Եւ քատերագիրը կը դառնայ աւելի իրական, հարածմէն ու իշխանատեղութիւնը, սէրն ու շահամտութիւնը, նեղութիւնն ու վեհանձնութիւնը, անմեղութիւնն ու բոտութիւնը կեանքը կը գրեն ցցուն տառերով, ազդու շունչով, համոզիչ բանաստեղծականութեամբ:

Որովհետեւ՝

Իրաքանչիւր արտրֆի եւ արտայայտութեան մէջ ներկայ է կեանքը, այլ խօսեալ՝ ներկան եւ անոր հակասական բեւեռները, իշխանութիւնն ու ազատութիւնը, արդարութիւնն ու անարդարութիւնը, կեզծիւքն ու իբարը, սէրն ու հաշիւը, գոտիւնն ու փտածը, առաքինութիւնն ու տմարդութիւնը, որոնք կը դառնան մէկ ակնթարթ, *մէ՛կ ժամանակ*, որ կը շրջանցէ նոյնիսկ իր նկարն ու առիթը եւ այս բոլոր տարրերը կը միաձուլէ իր մէկ ու ամբողջական ժամանակին մէջ:

Այդ իսկ պատճառով, Լ. Այստայի *«Մարդը, որ ինքն իր գէժ պատերազմէր»* քատերակը կը դառնայ միանիւս ամբողջութիւն մը, կուս ու խոսքափանց յանդուգն ստեղծում մը, որ երբ քատերագիրը վախճանական տեսարանին կը հասնի *«անտեղ»* եւ *«անժամանակ»* աւարտին, երբ երեք դասակարգերը՝ կեզեքողը, միջնորդն ու գահինը խորհրդանշող եռամակարդակ աստիճանին վրայ կը բարձրանան Ռաշատ էֆէնտին, Օսման ազան եւ Վեհմ իր դէմ պատերազմած» Ամէտը, երբ կը լսուին երեսակայական կրակոցները եւ գոհերը իրարու ետեւէ գետին կը փուսին, կը պարզուի կեանքին քանձաքանջայ անհեթեթը, կը ճանդուին բոլոր պատմէջները, խաւարը կը տարածէ իր մտաւախութիւնը, կը լսուին անաբանի մշակներուն ձայները...

...եւ ողբերգութիւնը կը շարունակուի:

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Լ Ո Ւ Է Յ Ա Յ Ա Տ Ա

Մ Ա Ր Դ Ը՝

ՈՐ ԻՆՔՆ ԻՐ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԵՑԱԻ

— ԵՌԱՐԱՐ ԹԱՏԵՐԱԽԱՂ —

Հայացուց՝ ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

- ՍՈՒՎԱ — Հայ երիտասարդուհի մը, մտաւորապէս քսան տարեկան:
- Յակոբ — Հայկական բարոյեղէն ճողոպրած հայ փախստական մը, Սիլվայի եղբայրը:
- ԱՇԲԱՏ — Օսմանեան բանակին մէջ ծառայող նոր պինուոր մը:
- ՀԻՔՄԷԹ — Օսմանեան բանակին մէջ ծառայող հին պինուոր մը:
- ԱՎՄԷՏ — Օսմանեան բանակին մէջ ծառայող նոր սպայ մը, գիւղացի ծագումով:
- ՆԱԱՄԱՆ — Օսմանեան բանակին մէջ ծառայող պինուոր մը, որ բարեկամական կապեր ունի Ահմէտի հետ:
- ՍՈՒԼԷՅՄԱՆ — Վաճառական, Տէր-Զօրի ընակիչներէն, յիսունը անց տարիքով:
- ՋԱՀՐԱ — Սուլէյմանի կինը:
- ՖԱԹՄԷ — Իրենց աղջիկը, որ Ահմէտի նշանածն է:
- ՀԱԺ ՄՈՒՐԱՏ — Սպայ Ահմէտի հայրը, գիւղացի, որ իր զավէն նիւթական օժանդակութիւններ կը ստանայ:
- ՍԱԼԷՄ — Վաճառական Սուլէյմանի կրտսեր եղբայրը:
- ԱՂԱ ՕՍՄԱՆ — Հայերուն լքած հողերէն օգտուող աղաներէն մէկը:
- ԷՏԷՆՏԻ ՌԱՇԱՏ — Իսթանպուլ բնակող էֆէնտի մը, որ քաղաքականութեամբ կը պաղի:
- ԽԱԼԻԼ — Օսման աղային մօտ աշխատող երիտասարդ մը:
- ԸՄ ԱՎՄԷՏ — Գիւղացի Մուրատի կինը:
- ՕՍՄԱՆՅԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ:

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

Տ Ա Փ Ս Ս Տ Ա Ն Ը

(Ամապատային տափաստան մը՝ Տէր-Ջօր քաղաքի կողքին, ուր կը տեսնե՞ք ապառաժեայ բարձրաբլուճներ, բնմի՞ն խորը կը լսուի՞ն հովերու ձայներ, որոնք կ'ընդմիջուի՞ն կրակեցներով...: Յակոբ, վիրաւոր, ներս կը մտնէ, իր քրոջը՝ Սիրվայի ուսին յենած):

Սիրվայ.— Հոսկէ, Յակոբ... (Յակոբ կը դիտէ՝ զննելով շրջանը):
ՅԱԿՈԲ.— Ո՛չ, հոս պիտի սպասենք (ցոյց կու տայ ժայռերը), մինչեւ որ խաւարը տիրէ:

Սիրվայ.— Հո՞ս, ժայռերո՞ւն մէջ...
ՅԱԿՈԲ.— Այո՛...:

Սիրվայ.— Բայց մեր առջեւ ունինք ընդարձակ ճամբայ մը եւ հիմա անցնող ոչ մէկ տրորած կը տեսնե՞մ այդ ճամբուն վրայ:

ՅԱԿՈԲ.— Հո՛ս պիտի սպասենք՝ ըսի:
Սիրվայ.— Մի՛ յամստիր, Յակոբ, վերաւոր ես եւ չես գիտեր, թէ ինչ կ'ընես կոր:

ՅԱԿՈԲ (կրամայական շնչով). — Սիւլա, հետս մի վիճարանիր:
Սիրվայ.— Ինչպէ՞ս հետը չվիճարանիր... Ապառաժեայ այս անցքը տեսուհի չըջան մըն է, եւ տրամարանական չէ, որ հոս պահուրտինք՝ սպասելով որ խաւարը տիրէ:

ՅԱԿՈԲ (զայրացած). — Կամ ան...
Սիրվայ.— Ձգէ, որ դիմացի ընդարձակ կողմը երթանք: Հոս միայն քանի մը ժայռեր կը գտնուին, անոնց միջեւ՝ մեզ որեւէ վայրկեան կըրնան գտնել:

ՅԱԿՈԲ.— Ո՛չ, Սիւլա, հոս պիտի պահուրտինք, հո՛ն՝ ուր անոնք չեն նախատեսեր, որովհետեւ անպայման դիմացի դիւրին գտանելի կողմը պիտի երթան եւ պիտի մոռնան, որ մենք ժայռերուն մէջ պահուրտած ենք, իրենց քիթին տակ:

(Քոյր ու եղբայր կ'անհետանան: Ներս կը մտնեն երեք քուրք զինուորացիներ, որոնցմէ մէկուն ձեռքերը կալանուած են):

ՀԻՔՄԷԹ.— Մինչեւ որ միւսները դան, հոս պիտի սպասենք:
ԱՇՐԱՑ.— Բայց մեր սպան՝ Ահմէտը մեզի ըսաւ. «Ձերնք տարէք եւ ճամբան մենք ձեզի կը հանդիպենք»:

ՀԻՔՄԷԹ.— Կը կարծե՞ս, որ մինչեւ Տէր-Ջօր ճամբան այնքան մը կարճ է, որ կրնանք մեր ուղեւորով կտրել: Հոս սպասէ եւ Աստուծոյ գառակէ:

ԱՇՐԱՑ.— Հի՞քմէթ, կը կարծե՞ս, որ այդ հայ փախստականը ա՛յդ աստիճանի վտանգաւոր մէկն է:

ՀԻՔՄԷԹ.— Այո՛... այլապէս, գտնոնք գտնելու համար, մեր սպան այս բուրբ տառապանքը յանձն պիտի չառնէր:

ԱՇՐԱՑ.— Ի՞նչ տեսակ վտանգ կը ներկայացնեն:

ՀԻՔՄԷԹ.— Չեմ գիտեր... Բայց եթէ վտանգաւոր չլլար՝ անոր մասին Կոստանդնուպոլսէն յատուկ հետազոտ պիտի չհասնէր:

ԱՇՐԱՑ.— Իսկ ասիկա՞ (ցոյց տալով ձեռնակապուած զինուորը)...
ՀԻՔՄԷԹ.— Սուս... Նասման, նստէ՛ եւ հանգստացիր:

ՆԱԱՄԱՆ.— Նստելու ուխտով շուրջիմ:

ԱՇՐԱՆ.— Ճի՛շտ է, որ նորինքն ջու Նաամանդ է այդ վտանգաւոր հայուն փախուստին պատճառը, զոր հիմա մեր սպան կը հետապնդէ:

ՀԻՔՄԷԹ.— Ինչո՞ւ ինծի կը հարցնես...

ԱՇՐԱՆ.— Որովհետեւ երբ դէպքը պատահեցաւ, զուն այդ ընկաւորն մաս կը կազմէիր:

ՀԻՔՄԷԹ.— Մէկէ աւելի պատճառներ հայուն փախուստը դէւրացուցին եւ Նաամանը անոնցմէ մէկն էր (կը տեսնեմք պատասխանել խառնափն- լու անոր ճիշդ):

ՆԱԱՄԱՆ.— Հիշե՛ք, գաւաթ մը ըստ տուր ինծի (Հիմնէք կու տայ անոր պահանջած ջուրը):

ԱՇՐԱՆ.— Կը կարծե՞ս, որ Ահմէտը պիտի կարենայ բռնել փախստականն ու անոր քոյրը:

ՀԻՔՄԷԹ.— Անշուշտ, եթէ նոյնիսկ ան կախարդական հագուստ հագնի (զըն- պանէն կը հանէ ծխախոտի տուփը եւ կը սկսի սիկարէթ մը փաթեթել):

ԱՇՐԱՆ.— Պիտի չկրնան բռնել... հետս գրաւի կու զա՞ս:

ՀԻՔՄԷԹ.— (ճանճարանալով դիմացիմիմ խօսքերէն, կը փորձէ փախուստ տալ քիչ մը՝ անոր շաղակրտուտիմը մեղմացնելու նպատակով)։— Լա հաուլա ուլալա բուաթա իլլա պիլլահ...

ԱՇՐԱՆ (շարունակելով)։— Որովհետեւ, ինչպէ՞ս լսեցիր, փախստականը սո- տանայ մըն է, որ մարդու հագուստ կը հագնի. ան մինչեւ հիմա սպան- անց երկու սպայ եւ քանի մը զինուոր:

ՀԻՔՄԷԹ.— Եթէ այդքան բան գիտես, ինչո՞ւ համար ինծի հարցումներ կ'ուղղես...

ԱՇՐԱՆ.— Այս իսկ պատճառով, մեր զինուորները հողը կը հերկեն՝ փնտե- լով զինք:

ՀԻՔՄԷԹ.— Մա՛րդ, ձգէ գիտ...

ԱՇՐԱՆ.— Ճի՛շտ է, որ իրեն ընկերացող քոյրը գեղեցիկ է...

(Հիմնէք Նաամանիմ կու տայ իր փաթեթած սիկարէթը):

ԱՇՐԱՆ (կը հասնի անոր ետեւէն)։— Իսկապէ՞ս գեղեցիկ է...

ՀԻՔՄԷԹ.— Ի սէր երկինքին, ջիղերս թունդ մի հաներ:

ԱՇՐԱՆ.— Ինչո՞ւ երեսս ի վեր այդպէս կը պոռաս...: Ես հարց կու տամ քեզի, որպէ՞տի օգտուիմ ջու փորձառութենէդ: (Շարունակելով):

Նաամանը ինչպէ՞ս անոնց փախուստին պատճառ եղաւ:

ՀԻՔՄԷԹ.— Լա հաուլա ուլալա բուաթա իլլա պիլլահ...: Եղբայր, եխքերիք նուայ մը ունեցաւ, որուն պատճառով սկսաւ մեր վրայ կրակել՝ փա- խուստականին եւ անոր քոյր վրայ փամփուշտներ արձակելու փոխարէն:

ԱՇՐԱՆ (հեզմանով)։— Իսկակա՞ն զինուոր մը...

ՀԻՔՄԷԹ.— Թող, Ալբաթ, զուն զինք լաւ շես նանչնար:

ԱՇՐԱՆ.— Կը կարծեմ, որ զընտրի զգացումն է անոր լուռութեան պատճառը:

ՀԻՔՄԷԹ.— Շողակրատել շատ կը սիրես, մարդ, ձգէ՛ որ հանդիմնէ:

ԱՇՐԱՆ (կարծես թէ դիմացիմը կը գատէ... ծիծաղելի լրջութեամբ մը)։— Պատերազմական ատեան պիտի դրկեն զինք, կաշին պիտի քերթեն, ու- րովհետեւ մեր զինուորներէն մէկուն վրայ կրակեց... եւ եթէ Աստ- ւած չզթար՝ ան մեռած էր: Հետեւաբար, մահուան պիտի դատու- պարտուի:

(Հիմնէք դժգոհ կը մայի Ահմէտիմ):

ԱՇՐԱՑ.— Հիբմէթ, մեր բարեկամը կախաղան պիտի բարձրացնեն, թէ փամփուշտով մահուան պիտի դատապարտեն:

ՀԻՔՄԷԹ.— Ինչո՞ւ ազնաւի պէս կը կոնչառ այս ժարդուն վրայ:

ԱՇՐԱՑ.— Որովհետեւ մահուան պիտի դատապարտուի...: Ես վստահ եմ, որ կթէ դատուելէ առաջ բանակէն վտարուի, զինք կախաղան պիտի բարձրացնեն կամ պիտի նստեցնեն ցիցի մը վրայ (կը խնդայ, քայց առանձինն):

ՀԻՔՄԷԹ.— Եթէ չլսես՝ պիտի վարնեմ:

ԱՇՐԱՑ.— Ինչո՞ւ համար երեսս ի վեր կը պոռաս, կարծես թէ սպան գունես...

ՀԻՔՄԷԹ.— Լսէ՛, պիտի շպտաստխանեմ, եթէ նոյնիսկ երկինքն ու երկիրը իրար անցընես (ձևոճեք կը դնէ ակամօզներում վրայ):

ԱՇՐԱՑ (կը լռէ, յետոյ կը մտնեայ Նաամանին եւ կը շարունակէ գրոյցը).— Դուն ո՞ր երկրէն ես, Նաման:

ՆԱԱՄԱՆ (կը փորձէ քննել մեծ էար մը, կապկապուած ձեռքերով եւ Աշրափ կը փախչի).— Կորսուէ՛ առջեւէս, բողբ՛ ծնունդ...: (Աշրափ կը փախչի, Հիբմէթ կը ծիծաղի եւ Աշրափ նեղուքիւն կը գգայ Հիբմէթի հեգնանքէն...: Կը լսուի ձիու սմբակներու դռփիւններ: Ակնքարք մը, եւ սպան՝ Անմէտը ներս կը մտնէ):

ՀԻՔՄԷԹ.— Ձերբակալեցի՞նք, տէր իմ:

ԱՀՄԷՏ.— Ո՛ւ:

ՀԻՔՄԷԹ.— Ուրե՞մն...

ԱՀՄԷՏ.— Մեր զինուորները հողը կը հերկեն, այս կեաւուրին հետքը պըտնելու համար:

ՀԻՔՄԷԹ.— Հիմա զորանոց վերադառնա՞նք:

ԱՀՄԷՏ.— Մեր զինուորները պիտի շարունակեն իրենց փնտրուողները, իսկ ձեռք զորանոցին մէջ իրենց պիտի սպասենք: (Կը մտնեայ Նաամանին): Ինչպէ՞ս ես, Նաման, հանդարտեցա՞ր:

ՆԱԱՄԱՆ.— Այո...

ԱՀՄԷՏ.— Քաղցրեցի՞ր կապանքները: (Աշրափ կը քակէ Նաամանի կապանքները. ապային ուշադրութիւնը կը գրաւէ): Դուն նո՞ր ես մեր շարքերուն մէջ:

ԱՇՐԱՑ.— Այո, տէր իմ:

ԱՀՄԷՏ.— Ուրեմն, լսէ՛, եթէ Նամանին հետ պատահած դէպքին մասին լսած ես՝ չեմ ուզեր, որ այդ մասին որեւէ բառ արտասանես... Հասկընալի՞ է:

ԱՇՐԱՑ.— Անշուշտ, տէր իմ, անշուշտ:

ԱՀՄԷՏ.— Բարբոս ալ իրեն պէս ջիղերու քայքայում կրնանք ունենալ:

ՀԻՔՄԷԹ.— Միւսներուն ալ թելադրեցի՞ր, տէր իմ:

ԱՀՄԷՏ.— Այո, Հիբմէթ: Գացէք, փախտականը փնտրեցէք եւ ինծի տուէք Նամանին հետ խօսելու առիթը, Տէր-Ձօր հասնելէ առաջ:

ՀԻՔՄԷԹ.— Հրամանդ, տէր իմ:

ԱՀՄԷՏ (անոնց մեկնումը ստուգելէ ետք).— Խենթացա՞ր, Նաման:

ՆԱԱՄԱՆ.— Կամքէս անկախ...

ԱՀՄԷՏ.— Նաման, եթէ տղաքը աշնուտորտ շըլլային՝ արդէն դատարան հասած պիտի ըլլայիր, եւ դուն գիտես, թէ հոն ինչ ճակատագիրի պիտի հանդիպէիր:

ՆԱԱՄԱՆ.— Խնդրեմ, մի յիշեցներ:

ԱՀՄԷՏ.— Պէտք է ինձի ըսես պատճառը, որ չեզ մղեց այս արարքը դործելու:

ՆԱԱՄԱՆ.— Այլեւս գիտութեան օգտակար չեմ կրնար բլլալ:

ԱՀՄԷՏ.— Ես ալ այդպէս կը տեսնեմ:

ՆԱԱՄԱՆ.— Ուրե՛մ...

ԱՀՄԷՏ.— Քեզի համար լուծում մը պիտի գտնեմ: Բայց անկեղծ խոստովանէ ինձի. ինչպէ՞ս կատարեցիր այդ արարքը, ինչո՞ւ: Որովհետեւ երբ հարց տուի գիտութիւն, զոր չի՛լ առաջ պիտի սպաննէիր, թէ՛ մեր միջեւ թշնամութիւն կա՞յ, ան բացարձակապէս ժխտական պատասխան տուաւ:

ՆԱԱՄԱՆ.— Իսկապէ՛ս որ մեր միջեւ թշնամութիւն չկայ:

ԱՀՄԷՏ.— Ուրեմն ինչո՞ւ ըրիր:

ՆԱԱՄԱՆ.— Ձիս պիտի չհասկնաս, Ահմէտ:

ԱՀՄԷՏ.— Իբրաւ կ'ըսեմ, իսկապէս կ'ուզեմ պատճառը հասկնալ:

ՆԱԱՄԱՆ.— Լաւ, պիտի խօսիմ:

ԱՀՄԷՏ.— Հրամէ:

ՆԱԱՄԱՆ.— Պատմութիւնը սկսաւ քանի մը օր առաջ, Մարգարէի(*) մէջ, ուր զործադրուեցաւ հայերուն մեծ ջարդը...: Ի՞մ պարտականութիւնս չորս հոգիէ բաղկացած բնտանիք մը հարցաքննելն էր...: Գիտես, որ հարցումներու խաղը կը խաղայինք, մեր հարցումներուն պատասխանէին թէ՛ ոչ՝ նոյն արդիւնքին կը յանդէ՛նք (ձեռքով մարտիլով գործողութիւնը կը կապիլէ): Կարելորդ ա՛յն է, որ ես իրենց մտեցայ եւ անոնք ոտքի ելան...: Հարցաքննեցի հայրը... մայրը... զոյրը՝ Գրիգոր անունով ըմբոստի մը թագաւորացին շուրջ եւ անոնք պատասխանեցին: Այն ատեն, բռնեցի պզտիկ տղան եւ սպաննացի մորթել զինք, եթէ իրենցմէ պահանջուած պատասխանը չտանայի. բոլորը պտոցին՝ վախնալով պզտիկին կեանքին վրայ, մայրը ոտքերուս փաթթուեցաւ եւ երգում-պատաս եղաւ, թէ իրենք Գրիգորին բռնած ուղիին մասին բան մը չեն գիտեր, թէ՛ մանուկը մորթելու էթէ մտաբերութիւն ունիմ, նախ զինք մորթեմ: Այն ատեն, մանուկին վարուելակերպը ուշադրութիւնս գրաւեց... ան չէր լար, չէր դիմադրեր, այլ, ընդհանրապէս, սկսաւ ինդալ, ինդալ, ինդալ, եւ սիրտս չհամակերպեցաւ ինձի՝ պզտիկին որեւէ միտա հասցնելու ուղղութեամբ... որովհետեւ ես հասկցայ տնոր խնդուքը, Ահմէտ, ես հասկցայ այդ խնդուքը, հակառակ անոր, որ հայերէն չեմ հասկնար...: Հաւատա՛ ինձի, որ ճիշդ ու ճիշդ փոքրիկ եզրօրս խնդուքն էր: Մանուկը գրկեցի զուրգուրանքով եւ ան զուրգուրանքին զուրգուրանքով պատասխանեց, իր փոքրիկ մեքերով սկսաւ խաղալ գլխուս հետ, դէմքիս հետ, կուրծքիս հետ, իսկ ես սկսայ խածնել իր փափուկ թաթիկները...: Բոլորը հանգստացան, վառահեցան ինձի... բայց, յանկարծ, սպաներէն մէկը երեսն էր վեր պտոց՝ զճիմա՛ր, կեւուրներու դաւակնե՛րը կը շոյես, անմիջապէս ճեղքէ՛ փորը...: Պզտիկը գետին նետեցի եւ ձեւացուցի, թէ հրացանիս աւելնը պատրաստելու վրայ եմ... երեսնան գէպի ոտքս սողաց, յենեցաւ ոտքիս... սկսաւ հետս խօսիլ հասկնալի բառերով... ինչ ընելու չգիտցայ...: Ի՞նչ ընէի, երբ այդ վառամած, անիծեալ տղան

(*) Տեր-Ջօր եւ Հասիչէ քաղաքներում միջի գտնուող վայր մը:

հոխ կանգնած էր... Նայեցայ մանուկին եւ սպային... Ինչպէ՞ս սպաննէի, Ահմէտ, երբ խնդուքը նոյն խնդուքն էր, Թուրքերոյ բռնոր մանուկներուն խնդուքը... Ինչպէ՞ս սպաննէի, երբ մարդկային բարեկամութեան երկհասուութիւնը, որ մեր միջեւ կը հասէր, դեռ չէր աւարած... Սպան նկատեց տատամտումս, հրացանս ձեռքէս առաւ, պատռեց մանուկին փորը եւ խնայց... Անոնք պոռացին... Իսկ մայրը հանդարտ քայլերով մօտեցաւ սպային եւ ըսաւ. Ձերոք զուգուակդ ալ մորթեն, ճիշդ այնպէս՝ ինչպէս դուն իմ տղաս մորթեցիր... Թող զուգուակդ ալ մորթեն՝ ինչպէս դուն իմ զուակս մորթեցիր: Նայեցայ մանուկին, որ կը լողար իր արեան մէջ, իր վերջին շունչը կը փչէր եւ յանկարծ... սկսաւ խնդալ... այո՛, ան կը խնդար... Ենթա տեղէն թաւ, ազնեցայ: Ան այպանող հայեացքներով ինծի կը նայէր... ա-յո... ինծի կը նայէր... հաւատա՛, Ահմէտ...

Ինչո՞ւ կը մեռնէր, Ահմէ՛տ. ո՞վ էր օչտուղը անոր մահէն... Եւ այո՛ր, երբ կիրճին մէջ թակարդ կը լարէինք՝ հայը սպաննելու կամ ձերբակալելու համար, երբ հայն ու իր քոյրը կիրճէն անցան, պահ մը ինծի թուեցաւ, թէ մանուկին ղէժը ոկոսայ տեսնել, եւ ան կ'այ-պանէր զիս... Այդ իսկ պատճառով, անոնց վրայ կրակելու հրահանգը չգործադրեցի, եւ երբ ետեւէս այս զինուորը դրկեցիր, որ գլուխս ար-դուկէլ սկսաւ, երբ ստուգեց, որ անոնց վրայ չեմ կրակած՝ վերցուց իր հրացանը եւ փորձեց կրակել, այն ատեն անոր վրայ կրակեցի, ս-բովհետեւ ժպտուն մանուկին ղէժը դեռ աչքերուս առջեւն էր:

ԱՀՄԷՏ — Այլեւս զինուորութեան օդակար ըլլալ, Նաթման... զինուորը գուժ ըսուածը պէտք չէ ճանչնայ... զինուորը զինուոր է...

ՆԱԱՄԱՆ — Զինուորը մա՛րդ է:

ԱՀՄԷՏ — Զինուորը պետութեան մեքենան է. անոնք կուռեցան մեր պետու-թեան ղէժ, փորձեցին քայքայել զայն եւ անոնք մեր կրօնքէն չեն: Եթէ զինուորը մեքենայ ըլլար՝ անոնք յաղթած էին. այդ իսկ պատ-ճառով, անոնց հետ երբեք թոյլ պէտք չէ դանուինք: (Աւարտելով խօս-քը): Լաւ, պիտի վերադառնաս զօրանոց եւ կարծես թէ բան չէ պա-տահած. անկէ հոք թեզի արձակուրդ պիտի տամ, մեր գիւղը կ'երթաս եւ քանի մը շաբաթ հոն կը հանգչես:

ՆԱԱՄԱՆ — Զինուորութեանն դանեցայ:

ԱՀՄԷՏ — Պիտի վերադառնաս եւ քեզի պիտի վստահիմ վարչական պատաս-խանատուութիւն մը, որ պատերազմին եւ փամփուշտներուն հետ ոչ մէկ կապ ունի... (Կը յառաջանայ դէպի քիմիկ խորք եւ կը կամչէ): Հիքմէ՛թ, դուն եւ ընկերդ հոս եկէք: (Ահմէտ եւ Նաաման կը քայնն-քնի կը մտնեն շիմիկի եւ Աշրաֆ):

ԱՇՐԱՖ — Իր ազդակո՞ւնն է:

ՀԻՔՄԷԹ — Ո՛ր, իր համազօրացին է եւ մանկութեան ընկերը:

ԱՇՐԱՖ — Լաւ բախտ ունի...

ՀԻՔՄԷԹ — Այս խօսքին իմաստը պիտե՞ս:

ԱՇՐԱՖ — Այո՞րնքն...

ՀԻՔՄԷԹ — Այսինքն՝ այս մասին մէկ բառ իսկ պէտք չէ արտասանես, այ-լսողէս՝ դինը կը վճարես, որովհետեւ բոլորն ալ սպան շատ կը սի-րեն... Հասկնալի՞ է...

ԱՇՐԱՖ — Հասկնալի է...

ԵՐԿՐՈՐԻ ՏԵՍԱՐԱՆ

ԹՐԲԱԿԱՆ ԳԻՐՂԸ

(Ազա Օսմանի տունը, ուր տանտէրը կը տեսնենք ճառած իր արտոնքն վրայ, ճաշի պահուն: Ծառան ներս կը մտնէ եւ բաներ սը կը փսփսայ ազային ախանջին):

ԱՂԱ.— Ներս մտցուր:

ԾԱՌԱՅ.— Ներս մտիւր, Խալիլ: (Խալիլ ներս կը մտնէ):

ԱՂԱ.— Այսքան արած վերադարձար...

ԽԱԼԻԼ.— Դեռ գիւղ չդացի, աղա...

ԱՂԱ.— Ինչո՞ւ...

ԽԱԼԻԼ.— Որովհետեւ լսեցի, թէ Ռաշառ էֆէնտին իր գիւղը չէ:

ԱՂԱ.— Լսեցի՞ր... որմէ՞ լսեցիր:

ԽԱԼԻԼ.— Քամէլ փաշայէն, տէր իմ:

Աղա (իրիւ գայրաջի սաստկագոյն ճշամ՝ Խալիլի ներս մտնելէն առաջ սնախ առած իր գաւազանը գետին կը նետէ).— Քամէլ փաշա ըսածդ ո՛վ է որ, յիմա՛ր:

ԽԱԼԻԼ.— Մի՛ գայրանար, տէր իմ. անոր առջեւ մէկ հատիկ բառ իսկ բերանս չառի:

ԱՂԱ.— Մաշալլա... մաշալլա...: Երբուքնէ՞ ի վեր դուն Քամէլ փաշային հետ բարեկամ ես, որ ան սիրալիբ կերպով կը զրուցէ Քեզի հետ՝ առանց որ մեր դաղանիքներէն մէկ հատիկ բառ իսկ չարտասանես ունոր առջեւ...

ԽԱԼԻԼ.— Հաւատա՛, աղա, զինք զիպուածով տեսայ, եւ ան ինծի պատմեց պատմութիւն մը, որմէ հասկցայ, թէ Ռաշառ էֆէնտին իր գիւղը չէ, այլ մայրաքաղաք կը գտնուի:

ԱՂԱ.— Խալիլ, առջեւ կեղծաւարութիւն մի խոզար:

ԽԱԼԻԼ (խանդարտօրէն կը ծռի գետին, կը վիրցնէ գաւազանը եւ գայն կը վերադարձնէ ազային).— Աղա, էլ մը չեմ, որպէսզի չհասկնամ, թէ դուն զիս Ռաշառ էֆէնտին քով դրկեցիր՝ իրիւ թշնամութիւն Քամէլ փաշային...: Այդ մէկուն ապահով եղիր...

ԱՂԱ.— Լաւ, Խալիլ... դուն զիտես, որ այս հարցին մէջ պէտք է գիմենք ամբողջական զազանապահութեան, այլապէս մեր երեսն կերակուրը կ'այրի. հայերուն տեղահանութենէն ետք անոնցմէ իմ բոնազբաւած անջրդի արտերուն սիրոյն...: Հետեւարար, եթէ զայլապայ՝ ներողամիտ եղիր:

ԽԱԼԻԼ.— Հող չէ, աղա... Թիւրիմացութիւն է... եւ ես, իմանալէ ետք, որ Ռաշառ էֆէնտին իր գիւղը չէ, ահաւասիկ հոս վերադարձայ, որպէսզի հրամաններս Քեզմէ ստանամ:

ԱՂԱ (խանդարտօրէն).— Իսպանապուլ պիտի երթաս...

ԽԱԼԻԼ (ամակնկալի եկած).— Ի՞նչ...

ԱՂԱ.— Իսթանպուլ, Խալիլ, չլսեցի՞ր. հոն պիտի անցընես այնպիսի գեղեցիկ օրեր, որոնցմէ երկար ժամանակէ ի վեր հետու կը մնայիր...

ԽԱԼԻԼ.— Բայց, տէր իմ (ազան կ'ընդմիջէ զինք եւ գաւազանը կը դնէ իր ընթացին վրայ):

ԱՂԱ. — Իսթանպուլը Իսթանպուլի կը նշանակէ եւ այս հարցը ոչ մէկ ձեռ-
 ձրգում կրնայ հանդուրժիլ: Չեմ գիտեր, թէ հայերէն գրաւած անջրդի
 հողերը ինչպէ՞ս պէտք է ցանկեմ... անջրդի՞ ցանեմ՝ ինչպէս որ պէտք
 է, թէ ջրարփի, ինչպէս որ է այն կերակուրին մէջ, զոր մենք հիմա
 Ռաշաա էֆէնտիին հետ սկսանք պատրաստել: Յետոյ, կ'ուզեմ գիտ-
 նալ, թէ ինչպէ՞ս պէտք է վարուիմ այդ աղտոտ գիւղացիին՝ Մուրա-
 տի հետ...:

ՅԱԼԻԼ. — Միտմ, աղա, պիտի երթամ...:

ԱՂԱ. — Այսօր...:

ՅԱԼԻԼ. — Այսօր, աղա...:

ԱՂԱ. — Քեզի պիտի տամ հասցէները այն վայրերուն, ուր Ռաշաա էֆէնտին
 կը դրօսնու Իսթանպուլի մէջ:

ՅԱԼԻԼ. — Միտմ:

ԵՐՐՈՐԿ ՏԵՍԱՐԱՆ

(Վտնասահան Սուլէյմանի բնակարանը, ուր կը տեսնենք Զահրան եւ Սալէմը):

ՅԱԼԵՄ. — Ժամանակը բաւական անցաւ, Զահրա, կը վախնամ, որ Սու-
 լէյմանը չգայ...:

ԶԱՀՐԱ (կատակելով) — Այն ատեն ո՞ւր պիտի երթայ:

ՅԱԼԵՄ. — Կը վախնամ, որ նեղութիւն զգայ իմ ներկայութենէս...:

ԶԱՀՐԱ. — Այս ի՛նչ խօսք է, դուն միակ եղբայրն ես, որ տէրն է... եւ արեւ-
 նը ջուր չի գտնար:

ՅԱԼԵՄ. — Կը թօւի, թէ դարձա՛ւ ալ, վերջացաւ ալ:

ԶԱՀՐԱ. — Վախդ հանդարտեցուր եւ ամէնէն մեծ հարցերն իսկ պիտի լուծ-
 ւին:

ՅԱԼԵՄ. — Ինչպէ՞ս հանդարտեցնեմ վախս, երբ տունս պիտի քանդուի, իսկ
 քանդողը ո՞վ է, Զահրա... եղբայրս, փա՛ռք Աստուծոյ:

ԶԱՀՐԱ. — Հարցերը այս աստիճանի պիտի չհասնին...:

ՅԱԼԵՄ. — Հասա՛ն ալ, վերջացան ալ...:

ԶԱՀՐԱ. — Մա՛րդ, Աստուծոյ գոտահէ:

ՅԱԼԵՄ. — Այո, դատախազը երէկ իր որոշումը տուաւ եւ ան արտը պիտի
 առնէ, բարձր պղտիկ հողակտորէ մը, որ ինծի մնաց... եւ անոր բերքը
 չի կրնար անօթութեան ուրուականը զաւակներէս հետացնել (Ֆաթի-
 մէն քէյը կը դնէ հօրեղբորը առջեւ եւ կ'երթայ իր գործին): Զահրա,
 դուն քու արդարադատութեամբդ եւ քաջութեամբդ յարդուած ու նշա-
 նաւոր կին մըն ես Տէր-Չօրի մէջ... այդ իսկ պատճառով կը խնդրեմ,
 որ ամենայն հաւատարմութեամբ իմ կողքիս կենաս:

ԶԱՀՐԱ. — Հանգստացիր, Սալէմ, իրեն պիտի պարտադրեմ, որ նահանջի:

ՅԱԼԵՄ. — Ասիկա խոստում է...:

ԶԱՀՐԱ. — Ասիկա Զահրային խոստումն է. այն կնոջ (կարտաբնամբ),
 զոր հոս հողամարդոց քոյրը՝ կը կոչեն... ահա կու գայ... (կը լսուի
 դրոն միզիմ ձայնը), փորձէ տարհամոզել զինք, բայց հետը խօսիր ա-
 մենայն յատակութեամբ եւ մի՛ ամչնար... ես դացի: (Զահրա դուրս
 կ'ելլէ բեմէն եւ Սալէման մերս կը մտնէ):

ՍՈՒԼԵՅՄԱՆ. — Բարեւ ձեզ:

ՅԱԼԵՄ. — Աստուծոյ բարին:

- ՍՈՒԼԵՑՄԱՆ.— Նիւթին շուրջ անշուշտ Զահրային հետ խօսեցար :
- ՍԱԼԷՄ.— Ինչու ուրիշ նիւթ ունի՞մ, որ անոր մասին խօսիմ :
- ՍՈՒԼԵՑՄԱՆ.— Սալէմ, ինչո՞ւնք, եւ հիմա ուրախ եմ եւ արամադրութիւնս մի պղտորեր :
- ՍԱԼԷՄ.— Սուլէյման, ինձի համար ճտկատարի հարց է. մի՛ մոռնար, որ գաւակներու պատանն է :
- ՍՈՒԼԵՑՄԱՆ.— Իրաւունքը իրաւունք է եւ դատարանը ինքն է որ այսպէս որոշեց... յետոյ, գաւակներու վրայ վախճալու պատճառ չունիս այնքան տանն, որ ես ներկայ եմ... ես իրենց Նորեղբայրն եմ :
- ՍԱԼԷՄ.— Ինչու չեկայ, որպէսզի քեզմէ գաւակներու պատառը մուրամ :
- ՍՈՒԼԵՑՄԱՆ.— Ուրեմն ի՞նչ կ'ուզես :
- ՍԱԼԷՄ.— Իրաւունքս կ'ուզեմ :
- ՍՈՒԼԵՑՄԱՆ.— Ո՞ր իրաւունքը :
- ՍԱԼԷՄ.— Հողի իրաւունքս, այն հողին, որ մեր հայրը ձգեց... ան մեր երկուքին Փզեց :
- ՍՈՒԼԵՑՄԱՆ.— Բայց երբ դուն փոքր էիր, ես չու վրադ ծախսեցի. այդ մէկը հաստատող փաստաթուղթեր ունիմ :
- ՍԱԼԷՄ.— Դրամը, որ իմ վրաս ծախսեցիր երբ փոքր էի, մեր երկուքին ծառանց ձգուած հարստութեան շահէն ծախսեցիր :
- ՍՈՒԼԵՑՄԱՆ (հեզմանով).— Եւ ո՞վ աշխատեց այդ դրամը, այլքի՞ս լոյսը. (հաս երեսն կու գայ, որ Զահրա գաղտագողի մտիկ կ'ընէ տնանց զըրոյցը, առանց որ երկու կարայրները բան մը գրան) :
- ՍԱԼԷՄ.— Անշուշտ դուն... :
- ՍՈՒԼԵՑՄԱՆ.— Ուրեմն, դուն իրաւունք չունիս, որովհետեւ ես նակտի ջրբախտով աշխատեցի դրամը... Իսկ եթէ ես չըլլայի՝ ծախուած վերջացած էր... Մնաց որ, խորքին մէջ, չու վրադ մանկութեանդ ընթացքին ծախսած դրամս ո՛չ թէ մեր հօրը ձգած ժառանգին կէսն էր, այլ՝ աւելին... :
- ՍԱԼԷՄ.— Դրամը դրամ էր ծնի եւ դուն իմ վրաս ծախսեցիր այդ ծնած դրամէն... :
- ՍՈՒԼԵՑՄԱՆ.— Օհո՞, վերադարձանք ծանօթ պատրուակիդ :
- ՍԱԼԷՄ.— Ո՞ր է խիզ՞ող, Սուլէյման :
- ՍՈՒԼԵՑՄԱՆ.— Զիտ անխի՞ղճ կ'որակես :
- ՍԱԼԷՄ.— Քաւ լիցի, դուն մեծ եղբայրս ես եւ ես չեմ յանդգնիր չու ներկայութեանդ նման խօսք մը արտասանել :
- ՍՈՒԼԵՑՄԱՆ.— Ուրեմն, չովս իրաւունք չունիս, Այդ մէկը դատարանը որոշեց :
- ՍԱԼԷՄ.— Ուրեմն, իմ ու չու միջեւ քաղաքին երեսելիները կան :
- ՍՈՒԼԵՑՄԱՆ (չղայիմ քաղի կ'ելլէ).— Կորսուէ՛ տունէս եւ գէժքը անգամ մըն ալ ինձի ցոյց մի տար :
- ՍԱԼԷՄ.— Զիտ տունէ՞դ կը վրձնես... :
- ՍՈՒԼԵՑՄԱՆ.— Այո՛, որովհետեւ կըրայրս չես... եւ կ'ուզես զիս խայտառակել վաճառականներուն եւ քաղաքի երեսելիներուն մօտ (Սալէմ կը մեկնի դառնացած օրտով. Զահրա անմիջապէս ներս կը մտնէ) :
- ԶԱՀՐԱ.— Գնա՛ց... :
- ՍՈՒԼԵՑՄԱՆ.— Վաճակեցի... :
- ԶԱՀՐԱ.— Իրաւունք չունիս :
- ՍՈՒԼԵՑՄԱՆ.— Ծախալք է :

ՁԱՀՐԱ.— Ո՛չ, Մուլէյման, քանի մը տարի առաջ մենք ալ իրեն պէս էինք. հողը իր իրաւունքն է...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Այս հարցին շուրջ քեզի հետ վիճարանելէ մանձրացայ. դուն իմ կինս ես, Չահրա... դատարանը ինձի ի նպաստ վճիռ արձակեց եւ ես կ'ուզեմ ապագաս կերտել... Հողը արդէն ծախեցի, գումարը դանձեցի եւ զայն պիտի բարդեմ իմ քովս գտնուող գումարին վրայ, իսկ մէկ ամիս չամբողջացած՝ դէպի Շամ հօտ մը ոչխար պիտի քլեմ:

ՁԱՀՐԱ.— Այդ ապագան այս աղքատին զբտինքին մէջ խեղդուած է:

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Մօտս եղած գումարին հետ համեմատած՝ հողին դինը ոչ մէկ նշանակութիւն կը ներկայացնէ. ասիկա դուն լաւ դիտես, բայց իրաւունքը իրաւունք է:

ՁԱՀՐԱ.— Մարդոց խօսքերէն չե՞ս վախնար:

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Դատաւորն էր, որ սրտչում տուաւ:

ՁԱՀՐԱ.— Իսկ Աստուծմէ՞, անկէ՞ ոչ չես վախնար:

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Անշուշտ կը վախնամ... բայց իրաւունքը...

ՁԱՀՐԱ (ընդմիջելով).— Իրաւունքը իրաւունք է... դուրսս դարձուցիր այս իրաւունքով... Հողը մեր երկուքին կը պատկանի, իսկ եղբայրդ մտնուկ եղած ասան անոր վրայ ծախսելը քեզի չի թոյլատրեր, որ անոր արեւը ծծես:

ՍՈՒԼԷՅՄԱՆ (զուլրացած).— Չահրա, հետս մի խօսիր թշնամիի մը պէս, դուն իմ կինս ես, կինս...

ՁԱՀՐԱ.— Իսկ տն ալ եղբայրդ է, պէտք է սրբապրեմ սխալդ (Մուլէյման կը ճեղգուի եւ կը մեկնի): Պաթիմէ, Պաթիմէ... (Պաթիմէն բնմ կը մտնէ):

ՏԱԹԻՄԷ.— Այո, մայր...

ՁԱՀՐԱ.— Աղջիկս, Մայիմ Հօրեղբորդ հետ հօրդ ունեցած պատմութեան լաւ ծանօթ ես. հետեւաբար, ուրախ պիտի ըլլայի, եթէ սակեղէններուդ մէկ մասը ինձի առջիւր. զայն պիտի դնեմ իմ ունեցած սակեղէններուս մէկ այլ մասին վրայ, որպէսզի բոլորը մէկ Հօրեղբորդ ասանք: Գիտես, որ Հօրեղբորդ գաւակներուն կեանքի հարցն է...

ՏԱԹԻՄԷ.— Սիրով, մայր... բայց հարցում մը ունիմ...

ՁԱՀՐԱ.— Հրամէ, աղջիկս...

ՏԱԹԻՄԷ.— Հօրեղբորս մեր տալիք սակեղէններուն արժէքը կը համապատասխանէ՞ հայրիկէն անոր պահանջած գումարին:

ՁԱՀՐԱ.— Մօտաւորապէս...

ՏԱԹԻՄԷ.— Մայր, հայրս անգութ անձ մըն է եւ ես լսեցի Հօրեղբորս հետ իր ունեցած բոլոր խօսակցութիւնը:

ՁԱՀՐԱ (փախուտ տալ փորձելով).— Ո՛չ, ո՛չ... հայրդ անգութ անձ մը չէ... դուն դժուար թէ այս հարցերը հասկնաս... կարելորը՝ հիմա սակեղէններն են. կարելորը՝ վաղը առտու գանոնք ինձի տուր, առանց որ մէկը զգայ:

ՏԱԹԻՄԷ.— Սիրով, մայրիկ...

ԼՈՒՅՑ ԱՅՍՍԱ

(Շար. 1)

Յ. Պ Ե Ր Պ Է Ր Ե Ա Ն

ԽԱՂԱՉԵԻՈՂ ՉԱՅՆԵՐ

— Ինձի այնպէս կը թուի,
 թէ աստղերը կղզիներ են՝
 այնքան անջատ, այնքան հեռու իրարմէ,
 իսկ մենք... աստղեր պարզապէս —
 արշիպեղազոս,
 համաստեղութիւն մարդոց անհամար,
 որոնք աստղերու փունջերուն նման,
 կը թուին այնքան խճողուած ըլլալ,
 աննուաճելի
 բայց այնքան միջոց
 ունին կտրելիք
 հասնելու իրար:
 — Կրնա՞ս դուն ներել մոլութիւններու...
 — Արեւին տակ՝ պրոնպագոյն
 ելեկտրական ծով է խորունկ,
 երգեհոն է
 իմ կնոջս մարմինը:
 — Ժամանակը՝
 արեւի տակ,
 ինչպէս փռուած զգեստներ,
 ամէն ինչ կը զուսթափէ:
 — Պիտի ծաղկիմ
 միտերուդ եւ աչքերուդ մէջ

քաղցկեղի պէս...

— Պէտք է սպասել գարուն մը տարբեր,
պէտք է ետ դառնալ
եւ վերապննել
բորբ վզայնութեանց ցանցերը խորունկ,
քալել բոլոր ճամբաներէն,
վզալ անցած փորձառութեան
ապրումները վերստին,
նետել պահերու խորութիւններուն
տարբեր ուղեաններ...

— Իմ ձայնիս մէջ
բազմաթիւ այլ ձայներ կան,
տարբեր երանգներ, շափոյներ տարբեր,
տարբեր պահերու, ժամանակներու
մէջ կազմաւորուած...

— Բայց արդէն ուշ էր...

Այդ թակարդին մէջ
պէտք չէ քալէիր,
կամ երբ առիթ կար,
պէտք է ձգէիր ամէն ինչ ետիդ,
լռելու գնով եւ արիւնելու
անդարձ մեկնէիր...

Բայց արդէն ուշ էր:

— Դուն ընկալող
ծով ես անյագ՝
չապականած
աշխարհով մը վարմանալի,
ուր բուստերու
դանդաղ աճած գաղութներ կան,
որոնք կը մնան
ծովու խորերուն,
ապահով, հեռու՝
ծովահէններու, փերեզակներու
շահատակումէն...

— Նորանոր սէրեր կը ծաղկին հիմա:

— Ես չեմ կրնար հաւատալ,
թէ մենք կրկին
օր մը կրնանք հանդիպիլ,
բարեւել եւ խօսիլ այնպէս՝

Ինչպէս ամէնուն պիտի խօսէինք,
 Ինչպէս ամէնուն պիտի ժպտէինք:
 — Կը խլրտին վերստին
 զգացումներ խելայել:
 Ինչ որ մեռած կը թուէր,
 դուրս կը ժայթքէ
 ջուրերու պէս բանտուած,
 կը բանայ հին շաւղներ,
 իր տարերքին
 մէջ կը տանի մեզ առաջ:
 — Իմ ձայնիս մէջ հազարաւոր ձայներ կան:
 Մարդաբանական
 անցեալ մը ամբողջ
 ապրած եմ կարծես՝
 հասնելու այստեղ:
 Այդ բոլորն յանկարծ
 երբեմն կ'արթննան
 եւ կը խեղդեն զիս:
 — Ես ունկնդիրն եմ պարզապէս ձայներուն:
 — Կը կոչէին քեզ անկէպ մորենի,
 ե՞րբ սպառեցար:
 Արդէն այնքան
 տխուր տեսք մը կը պարզես՝
 տերեւներով եւ ոստերով ածխացած:
 — Կը ծաղկէիր դուն բառերէն,
 բառերն քեզմէ կը ծաղկէին...
 — Այդ օրերուն՝
 ծխամշուշը գործատուներուն
 սեւ դիմակ էր մեր դէմքին,
 իսկ արիւնը՝ հմայիլ
 մեր նայուածքը պղտորած...
 Եւ մենք մոլուցքով
 կը կրակէինք
 մեզի նմանող ոեւէ անձի:
 — Կրնա՞ս դուն ներել մոլութիւններուս...
 — Պէտք չէ քալէի այդ թակարդին մէջ...
 — Բայց արդէն ուշ էր...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՊԵՐԵԱՆ

Ս. Ա Ս Ա Տ Ր Ե Ա Ն

Ա Պ Ր Ո Ղ

Կ Ա Կ Ա Չ Ն Ե Ր

Արեւը դիպաւ սայլապան Յովնանի մէջքին, մտաւ քարտաշ Գառնիկի զոռուզ մազերի մէջ ու տարածուեց սայլի, եզների եւ զաւտի վրայ:

Աւաւտա է:

Նրանք զիւզից ճանապարհուել էին մթնշաղից եւ հիմա բարձրանում են քարահանք տանող ճամբան, որի պոռուկին կպած է Յովնանի եղբայր՝ վարպետ Աւետիքի տունը:

— Հրէ՛ն, մութ կանաչին տուողը պապիս տնկած ընկուզի ծառն է, — ձախ ձեռքը երկարելով ցոյց է տալիս Յովնանը:

Գառնիկը հեռուում տեսնում է մի կանաչ մշուշ եւ նրանից վեր ձիւնազազաթ լեռներ:

— Է՛ն ընկուզի ծառի տակ, մեր պապենական տունն ա, հիմա ախպէրս ա

ապրում ազնկայ հետ, նա քար ա տալում, ես էլ տալած քարերը քաղաք տանելով ծախում եւ դրոս վաստակով ապրում ենք:

Գառնիկը լսում է սայլապանին, բայց հայեացքով հետեւում է կապոյտում, արեւի մէջ լողացող հսկայ թռչուններին եւ զարմացած հարցնում.

— Էդ ի՞նչ ղշեր են...

— Էդ ղշերը, — վեր նայելով ասում է Յովնանը, — էդ ղշերը քարահանքի արծիւներն են:

Գառնիկը երկար նայում է սուստնող արծիւներին, որոնք երբեմն մտանում են նրանց սայլին եւ հեռանում մինչեւ ձիւնազազաթ սարերը:

Սայլը աղմուկով անցնում է չորացած հեղեղատը եւ մտնում է ծաղկախիտ մի հովիտ, որի ծայրին երեւում է ընկուզենու ծառը ու նրա շուաքում՝ վարպետ Աւետիքի տունը:

Արահետը ճամբից զատուելով՝ բարձրանում է քարահանք: Ամէն առաւօտ վարպետ Աւետիքն ու իր օգնականը՝ քանաձեւայ Գառնիկը այդ արահետով գնում են քար կոտրելու, խաչքար տաշելու:

Վարպետի պապը տունը սարքել է ճամբի պոռուկին՝ աղբիւրի մօտ ու տնկել է մի ընկուզենի, որ հիմա ճիւղերը տաշանել է տան վրայ:

Քարտաշ Աւետիքը ծնուել է այս տան մէջ եւ իր նախնիքները՝ նոյնպէս քարտաշ, քարից հաց են հանել, ժամանակի հետ ծերացել, մեռել, թաղուել են ընկուզենու տակ, յիշատակ թողնելով դերեզման ու խաչքար:

Վարպետի աղջիկ Յասմիկը, ամէն Շաբաթ իրիկուն, մոմ է վառում եւ խունկ ծիւսում այդ հարազատ դերեզմաններին ու երբ բուրում է խունկը եւ կապոյտ ծուխը բարձրանում է վեր, լուծւում ընկու-

զենու սաղարթների մէջ, ջերմոսանդ աղօթում է վարպետը եւ խօսում Աստուծոյ հետ, արդար քարտաշ մարդու անպաճոյճ խօսքերով... Այդ պահին գողունի նայում է Գառնիկը վարպետի նորահաս աղջկան եւ ծարաւում... ծարաւում՝ անձանօթ տենչանքներով, որոնք գունաւորում են նրա խենթ սպրումները, Յասմիկից թաքուն, աշխարհից թաքուն:

Լուծւում է իրիկնային կապոյտ մըլուշը, մթնում է ընկուզենու տակ: Աւետիքի տան մէջ վառւում է ճրագը, երբ զեռ ձիւնադադաթ լեռներում վերջալոյս կայ:



Վարպետը, արեւի տակ, ճերմակ մարմարից խաչքար է տաշում, տաշում է նաեւ ոսկոյզներ, մետաղեան տառեր, իսկ Գառնիկը՝ քարէ ծաղիկներ:

Հատիչին հարուածնէիս զնգում է պողպատը եւ ճերմակ մարմարինի մասնիկները քարից պոկուելով՝ թափում են ցած, մեռնող թիթեռների պէս:

Վարպետ Աւետիքի յոնքերին ծիւն է նստել, բայց զեռ աչքերում կրակ կայ, կոնքերում՝ եռանդ եւ հարուածում է տակտով, որոնք բախում են մարմարի զանգուածին եւ ստեղծագործութեան թափը ձեւաւորում նրա վրայ:

Արեւը զրկում է վարպետին, զրկում է շառլորէն, խճճւում մազերի մէջ եւ մազերի արանքում փայլում է քրտինքը:

Արեւը խառնում է Գառնիկի էութեան եւ արեւի պէս տաք տենչանքները երանդում են կարմիր... Յասմիկի հազած հազուստի պէս կարմիր, ու ինչպէս քարահանքի ճամբի վայրի կակաչները:

— Բալա ջա՛ն, էն ջրի կուլան տուր, էրուեցի, — պահանջում է վարպետը:

Լոււմ է քարի ձայնը, Եփոթում են Գառնիկի երազները եւ լոււմ է փարչից հասող ջրի կլկլոցը, որ համաշափ շարժում է վարպետի թրայաւած աղամատրնձորը:

— Օխա՛յ, հովաքայ, — ու կրկին հառաչում է մարմարը:

Ստեղծագործութեան հարուածներից շարահանքը լցւում է զնգոցով, արեւը այրում է անխնայ եւ արդար վաստակի քրտինքը անմրեւում է տաշուող քարի վրայ:

Կրկին ծարաւում են վարպետ ու աշակերտ:

Նորից կլկլում է ջրի փարչը:

— Օխա՛յ, — հառաչում է ծարաւը կոտրած վարպետը եւ ասում է, — արեւը զեռ բարկ ա, զնա՛ ախից ջուր բեր:

Իջնում է Գառնիկը քարահանքից՝ կուժն ուսին, իջնում՝ մաքերում մտւոր... մտածում է վարպետի աղջկայ՝ Յասմիկի մասին...



Լերան բարձունքից պոկւում է մի արծիւ եւ կառաչելէն սաւառնում է լայնաթեւ: Գառնիկը չի դարձնում հրեա, քարահանքի ծերպերում արծուի բնիք եւ ընկերում թռչելու անկարող ձագեր կան:

Աղբիւրի ափի մօտ, վայրի կակաչների մէջ կարմիր բոցի նման շարժւում է մի մեծ կակաչ... Իս Յասմիկն է, որ խնամում է արծիւների յօշոտուծից հազիւ ազատած քարայծի ուլին...

Թպրտում է Գառնիկի սիրտը, խենթանում, ափին հասնելով՝ խնդում է փարչը ջրի մէջ ու նայում քարայծի մազին բուժող աղջկան:

Մկկում է վերաւոր ուլը, Յասմիկի մասններից արիւն է կաթում: Գառնիկի մասնները սառում են աղբիւրի ստոր ջրում, դանդաղում է. կուժը լցուել է, ծանրացել, նստել է յատակի խիճերի վերայ: Արեւը հալում է ժամանակի մէջ: Յասմիկը նկատում է Գառնիկի քարացումը, սիրտը լցւում է տազնապով, մտածում է իր սիրած Թովնէփի մասին:

Առաջին անգամն է այսպէս պատահում, որ Գառնիկը օրուայ այս ժամին տուն պայ, ջուր տանի: Մարաւում է, կարօտում Յովնէփին, որ հիմի ով գիտի ո՞ր շէնում, բարկ արեւի տակ քար է քանդակում, քանդակում ծարաւ... — Գառնիկ ախպէր, կաթը մակարդ-

ւել ւա, կ'ուզե՞ս թան սարքեմ տանես հանք, — հարցնում է անսպասելի:

Կծկում է Գառնիկի սիրտը յուզմունքից, մոռանում է կուժ ու ջուր, մոռանում է զարահանքը եւ մակարդւում ժամանակին, հալւում երջանկութեան մէջ:

Յանկարծ, փախչում է վիրտուր ուլը Յասմիկի ձեռքից, փախչում է հեռւում մղկտացող մայր զարայծի մօտ, որ սկսում է լիզել ձագի արիւնքտ վէրքերը, լիզում է խնամքով եւ լեզուն բոցի նման մտնում է ույի մազերի արանքը, մարում, բոցկլտում:

Այի մօտ՝ Յասմիկը մակարդուած մածոնից թան է պատրաստում, Գառնիկը լսում է շերտիկ բուլթ ձայնը, որ տակաւով ջուր է կաւէ անօթի պատերին: Գառնիկը տեսնում է ջրում լուծուող մածունի դոյնը, որ երթալով թանձրանում, դառնում է կաթնագոյն եւ Գառնիկը այդ թանի մէջ կարծիք կահայ է տեսնում:

— Յասմիկ, դու կահայի նման ես, — կահայը այրում է լեզուն... եւ լիկնող հայնոցքը տանում է ջուրը:

Կարմրում է Յասմիկի դէմքը կահայի նման եւ դողում է ձեռքը- թանը լափին աւլով թափոււմ, խառնում է հոսող ջրին:

Ընկուղենու դաղտնապահ տերիւնները խեղդե՛ւմ են հովի բամբասող շշուկը:

* * *

Գառնիկը բարձրանում է զարահանք: Տաք է:

Ասոր թան է տանում վարպետին եւ ամօթախածութեամբ մեղադրում ինքն իրեն.

«Իմ բերան պիտի խուփ պահեմ, Յասմիկ Յովսէփին կը սիրի... Ինձիկ ախպէր կ'սպի, եւ փորձում է զսպել զբասանածայ խենթ սէրը, վարարած էութեան մէջ, բայց չիտթ յուսահատութեամբ շնջում է՝ «ես կը մեռնեմ», ու մահուան եւ կեանքի ալիոճութեան մէջ բարձրանում է զարահանք:

Նա առում է Յովսէփին, որ մի տա-

րի առաջ գրուել է Յասմիկի սիրտը...: Պանդում է վարպետի նախկին աշակերտին, որ սիրում է իր սիրած աղջկան...: Յասմիկի պատմելով՝ Յովսէփը հիմա քաղաքում խաղողի ողկոյններ է քանդակում մարմարի վրայ: Վարպետի եղբայր՝ Յովնանը տեսել է նրան մի տան շքամուտքի վրայ տշխատելիս: Յովնանը էլի բան է իմանում նրա մասին, բայց չի ասում:

Արահետը ծուռումուռ քարերին զբուռնելով՝ բարձրանում է զարահանք:

Մարմարի ճերմակ երակը ձիու բաշի նման, մութ պղնձագոյն քարերի արանքից ցցուել է վեր: Գառնիկը նայում է կաթնաթոյր մարմարին, մոռանում է Յովսէփին եւ խաղաղուած մտածում է՝ «ի՞նչ լաւ խաչքարեր կարելի է տաշել...»: Եւ մտքում պատկերանում են խաղողի ողկոյններ, վարդեր, ծաղիկներ:

Յանկարծ, ընդհատում են մտքերը, այնտեղ, ուր աշխատում է վարպետը, սառնանում են հսկայ դիշակերները: Արահայցնում է զայլերը, արծիւները պարտում են խաչքարի լուսքում քնած Աւետիքի վրայ: Կուլան ցած դնելով՝ դուր խարկը նետում է դէպի թեւաւորները:

— Քր՛ւ, հա՛, զը՛ւ, անտէրներ, վարպետա հօ մեռած չի:

Աղմուկից ընդոստ արթնանում է զարտաչը եւ զարմացած հարցնում.

— Ի՞նչ կայ, բալա ջան, — ու երբ տեսնում է ծանր ու դժկամ հեռացող դիշակերներին, ժպտալով ասում է.

— Դեռ չեմ սատկել, անիրաւենի... Յօրանջելով աշխուժանում է վարպետը, սրբում է գէմքի զրտինքը եւ ասում.

— Կարծես թէ երկար եմ զնել, որ էդ հայվանները իջել են ցած...:

Գառնիկը նայում է հեռացող արծիւներին, որոնք սառանում են աննյանքներին պէս եւ անհաստանում ստուկերների մէջ:

— Կուլան տո՛ւր, բալա՛ ջան, — պահանջում է վարպետը:

— Օխա՛յ, էս ինչ անուշ թան է... Եւ ստեղծագործութեան ալիքը զարկւում է քարերին, քարերի երդից ծըն-

ւում են իրիկնային կապոյտ ստուերները, եւ արեւը յոգնած ննջում է քարերի վըրայ...

Վերջալոյս է :

Հովտում բարակ ծուխ կայ, գունատ մշուշ, լեռնազագաթներում մայրամուտի ոսկէ փոշի :

Վարպետը քայլում է աղջեւից, Գառնիկը յետեւից՝ մտքերը շփոթ...

Իրիկնային հովը մտնում է փարթամ օրէն բուսած աւելուկների ծոցը. վարպետի հայեացքը սահում է նրանց կանաչ ալիքների մէջ :

— Գառնիկ, բալա՛ս, սիրտս աւելուկով ապուր ուզեց, քաղի՛ր տաննէք :

Բաղում են :

Աւելուկի բուրմունքից դժուար է հո՛վը, մտնում Յասմիկի ծոցը եւ տարածւում օճախի շուրջ :

Իրիկնային աղլամուղլում, խաբոյիկի վրայ թշուր է թանկ ապուրը եւ Յասմիկը շաղուում է խաբոյիկի ցուքերով :

Գառնիկը մթնում նստած՝ դիտում է նրան, որ խառնում է թանապուրը եւ օրորում իր կարօտների վրայ բրնձի գոյներով :

Ընթրիքի պահին Յասմիկի մերկ բազուկը քուտում է Գառնիկի թեւին... սարսըտում է Գառնիկը անսովոր յուզումից, զոռում, այրւում... : Գունասուում է Յասմիկը շտապունոց լուսաբացի պէս...

Երկնքում հասունանում են աստղերը եւ նրանց լոյսը ծանրանում է Գառնիկի թարթիչների վրայ :

Գիշերը աշնան բոյր ունի :

— Գիշերը ցուրտ կ'անի, կը մբսես, — անսպասելի ասում է աղջիկը եւ տալիս է իր բրնձի ծածկոցը :

Ծածկոցը Յասմիկի բոյրն ունի եւ նրա շունչը Վեր մբսես ու... արսիւմ է աղան մինչեւ լուսաբաց կամարուոց երազների տակ :

Առաւօտը՝ Գառնիկին թւում է երազների շարունակութիւնը :

Յասմիկը կուտ է շաղ տալիս հաւեւրին : Կովը բառաշեղով կանչում է նրան : Լուսաբացի շողերը դիպչում են Յասմիկին, այրւում են նրա հազուատի կարմիր քոցով եւ առաւօտը ծնւում է Յասմիկի էութիւնից :

Վարպետ Աւետիքը ծխամորճը բերնին, ծուխը աղօթքին խառնելով՝ բարձրանում է քարահանք :

Գառնիկը հետեւում է նրան, բայց ստէպ-ստէպ յետ է նայում՝ ընկուզնուտակ կանգնած, իրենց ճամբու դնող Յասմիկին :

Քարահանքում մարմարների վրայ ցող է նստել, երկնքի կապոյտը արդարութեամբ խառնուել է լեռնազոգոթների միւնին, Արեւը ճգնում է մտնել այդ ճերմակի եւ կապոյտի արանքը եւ վաղորդեան այդ կուսական լուսթեան մէջ զընդում է մուրճի հարուածը :

Գառնիկին ամէն ինչ երազ է թւում, երազ է՝ մարմար, երկնքի այգեան մօտ՝ կապոյտը, սարերի միւնը եւ թառած արծիւների մօտիկութիւնը, Երազ է ինքը՝ վարպետ Աւետիքը, որ խօսում է քարի հետ : Երազ է Յասմիկը, որ մտել է իր սրտին մէջ եւ այրում է իրական բօցով...

Գառնիկը յղկում է մարմարը երազի մէջ. իւրի պուլիկից մէթ է կաթեցնում մարմարի վրայ, յետոյ մի բուռ կայծքարէ փոշի խառնում մէթին եւ այրում քարի երեսը : Քրտինքը ծլում է դէմքին եւ խառնում յղկի խիւսին : Յղկուած մարմարէ հոյակաւ մէջ իր պատկերն է տեսնում, արեւը, եւ լոյս է յորդում յըլկւած քարից :

— Ապրես, բալա՛ս, ապրես, էդ ինչքա՛ն լաւ ես յղկել. դե՛հ, հիմա քանդակիր արտիղ ուզած ծաղիկը, վարդը, տաւար, խօսքը...

Գառնիկի երազանքին է խառնւում վարպետի գովասանքը եւ զարտիղ ուզած խօսքը կրկնում է ու էլի՛ կրկնում : Զընդում է հատիչը մուրճի հարուածներով : Սակզճագործութեան երկունքից ծնւում է կակաշի նման Յասմիկը՝ լուսէ դժերով քանդակւում է մարմարի վրայ... : Գառնիկի ահանջներում՝ երգ, արուած՝ զու-

նաւորուող մուրազ, որ կեանք է տալիս քարին:

— Էդ ի՞նչ ես դուք բերում, — ըզմայլուած հարցնում է վարպետը:

— Դրուստը չգիտեմ, — շիկնում է Գառնիկը երազից սթափուած:

Վարպետ Աւետիքը նայում է երկար, որքան նայում է՝ այնքան հմայւում:

— Մտանքերիդ ծայրին հիւնար կայ, բալա՛, քանդակի՛ր, — խրախուսում է վարպետը սգեւորուած:



Աղջամուղջի լուսթեան մէջ, Աւետիքի տան պատուհանից փախչում է լոյսը: Ընթրիչից յետոյ ծիւղում է վարպետը եւ պատում աղջկան Գառնիկի քանդակած դարձանահարաչ կտկանների մասին:

Գովասանքից հարբում է Գառնիկը, սիրտը թալարում է կակաչի ծաղկերածաղիկը մտած մեղուի պէս եւ երանութեան սաքսուտով նայում է սրած աղջկան:

Շիկնում է Յասմիկը՝ Գառնիկի կըրակուող հայեացքից...: Սիրոյ դողը յուշերի ճամբով դնում է հեռունները, մտածում է Յովսէփի մասին, որ քաղաքում աշխատում է մեծահարուստ տան շքամուտքի վրայ, երեւի նա էլ սղիտյոներ է քանդակում դարձանահարաչ:

— Համա՛, կակաչ ա դուք բերել, հոգի ու շունչ ունեն, — ասում է վարպետը, կտրելով Յասմիկի յուշերի թելը: Միտքում է աղջիկը հոր հայեացքից, մտքերը փախչում են յուշերի ճամբից ու մտքն մէջ մնում են միայն սեւաշեւայ կակաչները:

Գոմից լուսում է կոլի բառալը, որ կանչում է հորթին: Քարասալը թոնթորում է աղջկայ վրայ, որ դեռ չուտ է հորթին կաթից կտրել, ու յողած քայլերով գծում է կովին տեսնելու:

Փամանուկը մայնիսանում է, լուսթիւնը՝ երկարում:

Յասմիկը զխաճակ շիկնում է, է՛լ աւելի քաղցրանում:

Գառնիկի մտքում շտա խօսքեր են հուշաբուս, խօսել է ուղում, բայց վախենում է խօսքից...

Յասմիկի հակուած աչքերից դուլալալ աղբուր է կաթում...:

Գծում է Գառնիկը. ուղում է ճշալ հալիտով մէկ, որ սիրում է Յասմիկին...:

Վարպետը վերադառնում է դոմից եւ յանդիմանում աղջկան՝

— Կովը մեղք ի...:



Քանդակում է վարպետ Աւետիքը եւ զարմանում, թէ ինչո՞ւ իր քանդակած կակաչները շունչ չունեն...:

— Բա էդ ո՞նց կը լինի, էդ մի մաս երեխեն, — ու չի շարունակում, խելքը չի հասնում Աստուծոյ բանին:

Գառնիկը լուսում է վարպետի արտունը՝ դուրսը կախ, մտքում կարօտ ու երազ:

Վարպետ Աւետիքը սպասում է սայլապան եղբորը՝ Յովնանին, որ պիտի գայ եւ տանի վերջին քանդակած քարերը:

Այդ սայլով Գառնիկն էլ պիտի վերադառնայ, ցուրտ է, քարահանքում աշխատել չի լինում:

Յասմիկի սեւ աչքերում տխրութիւն կայ, սրտում՝ անթեղուած կարօտ...:

Վարպետ Աւետիքը ծխում է եւ մտածում Գառնիկի քանդակած կակաչների մասին ու ինքն իրեն հարց տալիս.

— Բա՛ էդ ո՞նց եղաւ...:



Սայլը բարձում են քանդակած քարերով: Վարպետ Աւետիքը տխուր է եւ ջշային կարողադրութիւններ է անում սայլապան եղբորը:

— Էս քարերը արժէքին կը ծախես. որանք ուրիշ բան են, — ցոյց է տալիս Գառնիկի քանդակածները:

Գառնիկը այլեւս չի խայտում վարպետի դովասանքից...: Տխո՛ւր, տխո՛ւր նայում է մարմարաքանդակ կակաչներին եւ յուղւում:

— Իմ սէր քանդակ քարին. քարի պէս էլ մունջ կ'երթամ, — խօսում է ինքն ինն եւ լցում է սիրտը:

Ճանչում է սայլը՝ Գառնիկի նուա-
ցող սրտի նման եւ նուրբ, թափանցիկ
ճամբի փոշին օրօրում է օդի մէջ:

Վերջին անգամ նայում է վարպետի
մոայլ դէմքին, ծանօթ ձորերին, քարերի
վրայ թառած արծիւներին ու գլուխ, որ
սիրոյ կարօտին խառնում է մի ուրիշ կա-
րօտ:

— Տուն որ հասանք՝ էդ Գառնիկի
տաշած քարերից մէկը վեր կը դնես, —
կարողազրում է վարպետը եղբայր Յով-
նանին, — յիշատակի համար ա, թո՛ղ
մնայ... հրաշք ա:

Ընկուզենու տակ, աղբիւրի ակի մօտ,
կանգնած է Յասմիկը՝ լուսացուած, մա-
քուր կարմիր հաղուստով:

Վարպետը հետուից ձայն է տալիս
աղջկան.

— Էն ամսուաքը բե՛ր:

Յասմիկը խոնարհ մտնում է տուն եւ
բերում ժետաքէ թաշիինակի մէջ փա-
թաթած կապոցը:

Գառնիկը նայում է նրա աչքերի հը-
մայիլ խորութեան եւ իսկոյն շուտ է տա-
լիս հայեացքը, կարօտն այրում է սիրտը,
բայց էլի՛ նայում է... Յասմիկի աչքերը
թայց են:

— Էթաս բարով, բալա՛ վան, — բա-

րեմաղթում է վարպետը, — «սարը սա-
րին չի հանդիպի, մարդը մարդուն կը
հանդիպի», — եւ մատի ծայրով կարում
է ակնադրիւրում կուտակուող արցունքը:

— Դէ, ուշացանք, մնա՛ք բարով, —
տսում է սայլապան Յովնանը եւ «հօ՛»
անելով քշում եղները:

Յասմիկը դնում է ընկուզենու տակ
եւ նստում է մօր շիրմաքարին:

Գառնիկը շտապում է սայլին հասնե-
լու, բայց էլի՛ մի անգամ յետ է նայում:
Վարպետը կանգնած է արեւի տակ,
ձեռքով աչքերին հովանի տրած՝ նայում
է հեռացող սայլին:

Ընկուզենու տակ վառւում է մի խո-
նարհ կակաչ եւ այրում Գառնիկի սիրտը:

Հեռում հազիւ երեւում է ընկուզե-
նին՝ լուծուած կապոյա մուշում, իսկ
ընկուզենու տակ ոչինչ, ոչինչ չի երե-
ւում: Գառնիկը բացում է Յասմիկի տը-
ւած կապոցը: Ձեռքում են մի քանի ար-
ծաթ դրամներ եւ յետոյ բացում է հնա-
մաշ, սերունդներ ճամբու դրած Աւետա-
րանը: Սեւաշեայ, չորացած հին կակաչ-
ները թափում են ցած: Վերցնում է եւ
դրոյշ, շա՛տ դրոյշ դնում Աւետարանի
մէջ, փակում...

Թեհրան
(Համաձայն անտիպ հատրէն)

ՍՈՒՐԻՆ ԱՍՍՏՐԵԱՆ

ԵՐԵՔ ՔԵՐԹՈՒԱԾ



Անտարքեր շուրջի
անուր ժխտքին,
հայրս պիտե՛ր՝
յուշեր կը քերթէ
օրուան աւարտին:

Ծառ մը
շուքը իր
մարդերուն բաշխած՝
գաղթող քաջունի դատարկ հետքերով
աշնան կը սպասէ...

Ու փայտահատը
երգ մըն է սխուր,
մեծաւոր ծռռի կոճղին մէջ փակուած:



Հանապարհը
աշնանային ծառերու չվերջացող ուրուագիծ,
ուր ժամանակն անդռնէ,
մայրիներու կտխարդական բոյրով օծում
ուռկաններն իր կ'արձակէ:

Միջօրեի աչքերուն մէջ,
դուռ մ'անդադար
մեր վազեմի տարիներուն
ծածկոցները կը բանայ...
Անտառին մէջ,
քաջունները սարսափահար
ա'լ չեն փախչիր,
երբ կը տանինք մեր խրտուիլակ սուօրեան:

Փակուած օրուան մէջ ամայի,
դեռ կը սպասենք այցելուներն,
որոնք օր մը պիտի գան,
իրենց դողող մատներով
ծերունագարդ մեր մանկութեան
տօնածառերն յարգաբերու:

ԽՈՂ ՕՐԱՑՈՅՑԻՆ ԴԻՄԱՅ

Թիւերուդ տակ
կրակներ կան անթեզուած,
որ հայեացքիս սեւեռուն
քախանձանճէն բոցավառ՝
կը բարբոսին
մինչեւ ակերն անբեւոյթ գիշերուան:
Հեռուէ հեռու տարացող
սարհանդակներ կ'ուրուագծուին
կը բառերու մշուշին մէջ պարուրուած՝
կ'անհետանան ամայքին մէջ ակերուս,
նամակի պէս էջ մը գիշեր ներփակող:

Ու կը գաղթեն քոչուններ
դատարկուող բոյներու
երամներով անընդհատ:
Անոնց քերանք քիւերուն տակ
կը մտի մերի երկինքը փետրաթափ:

Կը սպասեմ հիմա
կանգնած քիւերուդ խառուղիներում՝
գարնան մեղեդիին,
որ պիտի գայ խոհերուս
անկերպարան տազնապէն:

Մանուկները
դեռ ինձմէ ներս չսթափած,
բող պահ մըն ալ գրուցեն
երազներուն հետ իրենց՝
բիլ բառերու վաղնջական դիւքանճով:

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ

Յ. Օ Շ Ա Կ Ա Ն

Ս Ա Հ Ա Կ Պ Ա Ր Գ Ե Ի Ե Ա Ն

Ե.

Ձգատասխանեց անոր հարցումին: Կտարած բաներուն բախտն է նետուիլ, անդրի թէ սիրտ, կուտութիւն թէ պտտաութիւն, — նոյնն է գումարը սա աշխարհին բոլոր փառքերուն, վայելքներուն, պատրանքներուն ու երազներուն համար ալ:

Ատենէ մը ի վեր, զլայն լոյսիչ կարօտ մը դրագէտին լամբը ենթարկած էր քմահան փոփոխումներու: «Շատ պիտի նոտինք մուրին մէջ», կ'ըսէր անիկա, ժպտելով ցաւոտ աչքերուն խորէն, սըրտում, ահամայ: Մա'նաւանդ կէս զիշերուան ժօտ, անիկա իր առանձնութիւնը կ'ուզէր լուսալիր եւ փակ: Ինչ կը հետապնդէին սա փափաքները, — ասիկա պիտի չհարցնէր ինքը իրեն: Գիտէր միայն, որ յիսուննոց լամբին տակ այդ աղջկան մարմինը կը հաղնէր ուրիշ ոտի: Ու անոր աչքերը թարթիչներուն թեւաւոր շուքին մէջ կ'աճէին: Այսքան: Ո՛վ գիտէ: Մանր, շիշիկ մը թթու շնչառութիւնը կը թուէր ազդուիլ նուազումէն, ձեւի թէ լոյսի, նոյնն էր կշիռը: Յետոյ՝ բնադրական վախի ունէր անկողինին: Սրտի յառաջացած, բայց դադտ հիւանդութիւններուն խուլ վախն էր ասիկա երկայն Յստիւն:

Անոր մահիճը՝ ճճուռ-ճճուռ: Բարձերը՝ գրիթէ կոխկուտած, հաւաքունէն ընդոտտ, գայրացկոտ արթնցողի մը թաւալումներով: Նոյն ատեն կծու շունչը, եղկ մարմաչը ըսես չբարինքին, որ ծանր բան մը կ'ընէր ո՛չ միայն անկողինը, այլեւ՝ փակ սենեակը: Տարիէն աւելի կայ, բարեկամ մասնագէտ բժիշկներու թելադրանքը սա զիշերները վերածեր էր ողջ կիզումի: Գոմոտին վրայ տասնով, քսանով սրտակներ, ցպիկներ, Փարիզէն ու Պերլինէն նոր ժամանած specialitները, որոնք մէկ-երկու զիշեր կը նուաճէին անոր մեծաազանդ խոնջէնքը, բայց շուտով կը նուաճուէին իրենց կարգին, անոր մեծ ուղեղին անասնձ բարձրովը: Որո՞ւ հպատակած էր այդ ուղեղը, որպէսզի հպատակէր ճանճի գլուխով բժիշկներուն: Թճրեցուցիչներէն մորֆինը վախ կու տար իրեն:

Սոնան պիտի բանար պատուհանները, ներս առնելու շիշիկ մը շոր, լայն, զով ու թեւաւոր ազատութիւն: Պիտի փոխանակէր նուոզ լոյսը աւելի դորաւորով: Պիտի տեղաւորէր խարխուլ բազկաթոռը սնարքին հզրին ու երկարէր իր մատները դրագէտին պսակաւոր գըլխուն, որ մէկէն կը գտնէր հրաշալի հանգարտութիւնը գառնուկին:

Յետոյ, այլ մատները պիտի դառնային նախի պայծառ դժբեթին, ուր կոհակ կազմած կարծր գիծեր (երկուքն ալ կը զգաւշանային ճիշդ բառը գործածելէ, խորշովը) ծալել, մասամբ իւզոտած, սահաստարակ խոնաւ, կը հարթուէին, կը յարդարուէին նոյն արագութեամբ: Գունքերուն վերեւ երակին կարծր թելը կ'անհետանար քիչ մը աւելի ուշ: Ատիկա դասած էր Սոնան:

Սահակ Պարգեւեան մեծահարուստ վաճառականը չէր ծխախտի, կամ Փարիզի իշխան մը, որոնք այդ մասազ մատներու զգուանքը կը զննէին սովորով: Խոր արհամարհանքով դատելով հանդերձ այդ սովորուած ծերութիւնները, մուշտակաւոր անասնաբիւնները, իր մէկ հատիկ օգնութիւնը պիտի չփորձէր դինի վերածել: Երջանիկ էր, որ Տիկին Գոհարեանին գտածութիւնը կը խնայուէր իր անկողինին: Երջանիկ էր, որ իր սիրտին ամէնէն մօտ բանը, ասկաւին աս աշխարհին վրայ, մօտ էր իր անկողինին: Աւելի'ն: Այսինքն այն ասնկանքը՝ որ կրնն է մեր զգայարաններուն վրայ: Ստոյգը ա'յն է, որ այս գիշեր, Սահակ Պարգեւեան կը տատաւէր, ինքն ալ յընտակ չէր զգար, ուրկէ՛, իր ո՛ր մասերէն, մանաւանդ ինչու:

Սոնային մատները անոր դանկին — զոր չէր վարանած իր տաղանդին պատուանդան որակել, զուարթ օրերուն — վրայ լայն, դաղջ, դողար ու մեծ համբոյրի մը նման դասած իրենց խմաստը, արժեցուցին իզութեանն անդին այն օրտագին բանը, որ խաղաղութիւնն է աշխարհի երեսին կամ մարդոց սրտին: Սահակ Պարգեւեան խոր, ապառժիտ շնչառութեամբ մը, ինքն իր մէջ կը հաւատար, թէ կը տեսնուէր: Սպասեց: Ու ահա աւելին: Աւելի զգիշեր, այդ զգուանքը կը բերէր անշուշտ սա հանգիստը, յետոյ՝ թմբերը ու մշուշուո՛ր, մեղմով կոտորելով անոր ջիզերուն պրկուած, կոծկոծուն խորութիւնը, օրտան տաղաուկներով, հոս ու հոն հանդուրժուած խուլ, վրափշուռն ակնարկութիւններուն թոյնովը այդպէս երկաթ դարձած՝ իր միտքուն խորը: Անիկա պիտի խաղար քունին վրայ ու քունին մէջ, ափը առած փափուկ մասներու: Սահակ Պարգեւեան նոր անդրազարձաւ, որ դանկին վրայ այդ զգուանքը ընդունեւ էր հծծագին, կարօտէն վեր ընդառուցումով: Յիշեց, որ երկար էր եղած աղջկան բացակայութիւնը, մէկէ աւելի անգամներով իր միջամտութիւնը: Ու, մանաւանդ՝ անոր աչքերը փակուելու տեղ լայնցան: Աւելի քան արթուն: Ու արթուն՝ իր բոլոր մասերէն, մասնիկներէն: Այս զգայութիւնը անիկա կ'ունենար ծոցերէն առաջ, իր երիտասարդութեան ամէնէն հուրքոտ ծարաններուն: Ջանաց հասկնալ: Դեղարանի մը մէջ, իր մէկ ընթերցումը եղաւ միացին բաց էլ մը նորէն: Փարիզէն նոր ժամանած մասնակի դեղի մը օճելամն էր, ուր խոշոր գիծերով կը գրուէին ասրիքի գարնիմ, ինք հայացուց՝ դարձարին մարդոց մէջ երեսան բերուած զգայունքները: Ատոնցմէ մէկն էր փայլակնային բխումը մարմինին՝ ծերութեան խորերէն քանի մը ամուր, խոր քաշուած հոգեվիճակներու: Այս մտածումով անիկա կարծեց, թէ կը բացատրէր իր արթնութիւնը, որ կը մնար աւելի քան յօտակ, իրաւ, պահանջկոտ: Անհանգիստ, սակայն, կը բռնանար այդ վիճակը հեռու երիտասարդութեան, աղջկան մատներէն կարծես կաթիլը կաթիլ իր միտքուն խորքը թափուող: Դարձուց իր միտքը ուրիշ ուղղութեան: Սա պայծառազգայութիւնը չէ՞ր կրնար դինը ըլլալ օրտան անսովոր ապրումներուն: Ինչե՛ր չէին դարձուած իրեն, մինակ

կանխող քանի մը ժամերու ընթացքին: Յետոյ փակեց թարթիչները, բռնի սակայն: Անոնք կրակէ շարժի մը նման թօթուեցին իր աչքերը, որոնք աւելի ուժով քայուեցան, սեւեռուեցան: Յատա՛կ՝ տանոց լեզուն, որպէսզի երկուքն ալ վախնային զրեթէ:

Գիշերը շատոնց տեսեր էր կէսէն: Բաւ մը քանի մը կառուց բան նեանց, մեծ էջալիւրթոսներուն սիրտէն ու իրենց պարտէզին մէջէն կտրեց սև ջուրը մուրին, որոշ շրջանով: Պարզեւեան, յառաջամարտիկ զբաղէտ, ծաղրած էր, տարիներով, թռչունի զուգորդ նախապաշարուածը: Բայց այս դիշեր անկարող եղաւ թեթեւ մը պղտորուելէ: Մոնան հասած էր ծոծրակին քովնստի կորացումներուն: Քըրտինքը, առատ, պայծառ՝ որպէսզի նորածնութեան վարկաւոր մէկ փռչին մատներուն հետ սրուէր այդ եղկութիւնը չորցնելու: Նոր փռչին, զաղցրարայր, աղուամտային ու է՛գ, ինչպէս դասաւորեց տնիկա այդ զգայութիւնները, շկրնալով վատել սակայն այդ խոթքէն ազնկան մատներուն բաժինը: Ու կը շողար, հանոյթէ՞, հեշտանքէ՞, վախէ՞՝ Զուգեց խորանալ:

Ուրախ էր ու առապագին նոյն ատեն: Ուսկին անոր երիտասարդութիւնը, իր աղուն պատկերովը ողջուներ էր զինքը այնքան վաւերատիւ վաւերականութեամբ մը, որ տնկողինէն առաջ անիկա պահ մը զգացեր էր ինքզինքը բոլորովին ազատագրուած զառորդ զարեան իր մանգրէն, հոգիին՝ որքան մարմինին բոլոր խորշերէն: Եզեր էր, մութը շփոթած, թեթեւ, հզօր, ամենազօր նոյնիսկ, ինչպէս է կեանքը մեր ներսը, երբ մեր արիւնը կայտառ է դեռ, զերծ՝ տարիքին ամենազիւ ծորումներէն, գէշ բառով մը՝ թոյներէն: Ջրեւ ջրէն էին իրմէ իր բոլոր կորանքները, ահաւոր իր մաղձովը դեղնած իր տրամութիւնը, ազրելու տեղ ամէն օր պոռնկանալու իր նակարտազիրը, անբաւ իր սուգը, որ անոր ժուժ մը հաց չարտօնեց առանց նախատինքի, ժուժ ծոց, ուր ինչպէս առանց տառապանքի, պահ մը փառքի, աաղանդին ճամբաներէն, առանց շահերտի: ..Վիլլայի պատշաճմին, անիկա նայեր էր լոբցած, գրեթէ ճերմկած կէտրիկօւնային, որուն մայրութիւնը, շուրսէն, անհաւատալի, նոյնիսկ սուտ թուեցաւ իրեն, այնքան այդ աւերակը կը նմանէր հազարներու, թուրիթ, իրենց լիբբ զոտաքներով, իրենց ճերմկած մազերը աւ անտատամ շրթները ցուցադրելու մէջ այնքան այլօրային, վսեմ աւ ահաւոր կերպով տգեղ մանաւանդ: Մա՛յր: Կրցեր էր այդ սրբազան, աշխարհին ամէնէն սրտատուչ պատրանքը ընական ըլլալ սա յիմար պառաւութեան նախամուտին, որ Անգան էր նայուածքին դիմաց: Մաս հակ Պարզեւեան հայր չէր եղած, այդ զգուցումին հաղորդ իրակաւ նութիւնները զատելու համար միւսներէն, որոնք արուն են, անասունը մեր մէջ, միեւնոյն ատեն: Ատ էր թերեւս պատճառը, որպէսզի գի փակէր իր ամբարշտ աչքերը, բանալու համար զանոնք իր ներսի աշխարհին վրայ ու հոն վայելելու տեսիլքը, անորակելի հրաշքը, որ մարմինն էր անշուշտ այդ կնոջ, զառորդ դար առաջ ու էր նոյն ատեն անպատմելի անուշութիւնը մեր միտներուն դարունքին, զոսկի բզզիւնս ու, մա՛նաւանդ՝ հեղուկ հողի, անպակ կուտութիւնը, որ աչքէն ու փայտէն կը հոսի ու կ'ըլլայ... մեր զաւակը: Խոտովքը, առաջը, գինովութիւնը, թեւաւորումը մեր զգայարանքներուն, որպէսզի չհաւատանք, — ըսեր ու գրեր են մարդիկ, բոլոր զբախանութեանց մէջ, գրեթէ համարժէ բառերու փունջով: Յիսունէն վեր ու մահէն

քանի մը ժամով միայն հետո այդ թշուառականին համար, այդ զոռ-
կի օրերուն, առ ձեռ վերձատուցումը, այդ անդարձ նկատուող
«զրախտին» առ ուրուային փայլակումն ու հետախաղաղ սուզումը
պարտաքն ի վար, թերեւս գերազոյն միթաւրութիւն մըն էր ընորհը-
թած, իրեն դէմ այնքան ծլատ ձաղախադրէն: Մահակ Պարզեւեան
խմած էր այդ մաքրութիւնը, կուսութիւնը, դեղձան բզդիւնը, ոսկի
ըմպանակէ մը ինչպէս, վայելքէն, հեշտանքէն շատ վեր, տարբեր
հոգեմիտնակով մը, կիներէ իր փորձառութիւնները այնքան ալլապէս
զուսուտորոզր խենթութեան շատ մօտիկ, յուզումի մը մէջ, ինքն
ալ առնուելով այդ աղջկան անճառ երանութեան ալիքին մէջ, դէժ
մէկ անգամ հասկնալով կեանքին ամէնէն օտւղ պահը: Ուրիշ ձաղա-
տադիր, այդ մարդէն իր յիշողութեան չարայար պակասը: Ի՞նչ հարկ
բացատրել ջանալ կարգ մը վճիռներ, որոնք կը շահին այսպէս փակ,
ողջ-ողջ, թաղուելով: Կարծեմ տեղը չէ Մահակ Պարզեւեանը ներ-
կարացնել, կիներու կրկէսին վրայ, աւելորդ անգամ մըն ալ: Բայց
պարտաւոր ենք հետեւիլ սա մարդուն ներքին նայումը: Ար վէպի
մը համար դիւրին թեմաներ չի տար միայն, այլ կը կազմէ թերեւս
մեր ամէնուն մէջ ամէնէն իրաւ, իտր ապրումներուն կտաւը: Աւելի:
Այդ նայումներն ասի դարձող կախարդական այդ աշխարհը ուրիշ
անխուսափելի աղղակ՝ որպէսզի ըլլան հասկնալի շատ թշուառ, շատ
մարդկային ուրիշ ալ կորսանքներ, տապնապներ, որոնք հանդոյցը պի-
տի քակուէր քանի մը ժամէն, կործանած լերան մը նման, իր կարօ-
տին, կիրքերուն, իր ամէնէն աննահանջ էութեան համարտի գըրը-
զումն մէջ, վերջնապէս թաղուելու համար ինքզինքը կրծած, սպա-
ռած սա միայն կտորը, որուն սիրտ անունը կու տանք:

Հելուանի մէջ անոր Փարիզը: Գարձեալ աւելորդ է խորանալ,
շատ ու լաւ տեսնելու համար, թեղքին ճամբաները: Բայց եղէք ա-
րաւ: Մահակ Պարզեւեանին տեղ ուրիշ Պարզեւ մը. — Այտանը:
Հասկնալի անշուշտ, բայց ո՛չ մեր ամէնուն մէջ ընթացիկ եղանակով
մը: Գրադէսը այդ անձանութիւն առջիւ պիտի գոյար շատ ու շատ բա-
նիւր, հակասական, անիմաստ նոյնիպէ: Բայց ամէնէն աւելի ան ինք-
զինքը զգաց: Ու խոսովք ու տառադանք էր իր մէջ, այդ պատկերը:
Բայց մեր տառադանքին ճակատագիրն է կարծեա միշտ ամբողջ ընել
ինքզինքը: Ու այդ օրէնքին գնովն էր, որ Անգալ Կէօրկէօֆնային մօ-
տիկ, անկէ բխած ուրիշ մարմնատուութիւն մը կը տեսնէր անիկա, —
Սոնա Գոհարեանը: Եղբրական բաները ո՛ր կը դատուին անոնցմէ,
որոնք պիտի կրենք պարզութեամբ, բնականութեամբ, անուտոյն ա-
ռանց արցունքի: Ո՞վ կարգադրեց, որպէսզի այնքան ընտանի այս
պատկերէն, այդ մօտիկութենէն երազի մէջ ապրուած ուրիշ պատ-
կերէ մը երեւան գար առանձին կարծրութիւն մը: Ու ժգին ու բիրտ,
անապարտ ու բարբարոս նոյնիպէ, — աղջիկը, որ կը գրաւէ ո՛չ
միայն իր իմաստը, այլեւ՝ մեր իմաստը: Տարիներով կը կրենք տե-
սիլը ու կու դաշ վայրկեանը, երբ ստիպուած կը բզկտենք գոյն:
Սոնա Գոհարեանը յունութիւն էր ու կրակ: Ու, ինչպէս իր քառորդ
դարու կորանքները կը մեկնէին փարիզեան զուսի որշալոյտէն, մաք-
րամաքուր աղջկան մը, հիմա անճանաչելի, զգուելի ու կրակ, նոյն
կղերականութեամբ ու նոյն սմանակով, անոր մերձաւոր քանի մը
տուրքերը, պատերազմին գարտափնէրէն ու անոր յաջորդ իր ընդար-
ձակ արտմութիւնները հազած իրենց վայել, հասկնալի իմաստը, իր-

մէն մինչեւ սա բոլորէն գրեթէ վրիպած, բայց վերջնականապէս ալ լուծուած: Արշալոյսի իր օրերուն առջէն, պայծառ ու թեթեւ գինովութենէն բոլորովին տարրեր բխում մը, բունկում մը, հրդեհ մըն էր Սոնա Գոհարեանը: Որ կը դառնար իր հարազատ դերին, փառքին, սա գարնանամուտ գիշերով: Կեղծաւոր մը չէր անիկա, զգացական ժարդին վրայ, որպէսզի չհաստատէր, թէ այդ աղջնակը ուրիշ բան չէր եղած արդէն իր զգայութեան խուլ, խորունկ անդունդներուն ծոցը: Տղու չափ ու պէս միշտ անհամբեր, Սահակ Պարզեւեան չըբաւ խաչելութիւնը իր խղճմասնքին, ինչպէս կ'որակէր իր ամէնազգի ասխորժակներուն, քնազներուն իրմէ կամ զուրաէն պարտադրուած ամէն գրկանք: Ի՞նչ հետութեամբ անիկա ընդունեց տղուն անապատաբար չեղանքները, փախուտը գրեթէ, երբ պահ մը ժտագրած էր վար դենը գոյն, իր չունեցած յարկին տակ, իրեն համար իմաստէ զուրկ, բայց ժարդոց գերազանց գունդուններուն մօտ ամէնէն սըրտատուչ հանդիման, գաւկի հանդիման համե ալ կուշտ ապրած ըլլալու: Բանաստեղծը թելագրեր է ասիկա, ան ալ այդ գաւկի վայելքին վրայ խոր իր յուշումին փաստը տուած, անմահ քերթուածի մը մէջ ու իր գրկանքը այդպէս բիրեղացուցած: Մեր գանկին տակ մեզմէ իսկ հազիւ կասկածուած աշխարհ մը կ'ապրի սակայն: Սահակ Պարզեւեան չըսաւ, չարձակեց իր սրտուցը: Անապատի ժամը իրեն համար եղեր էր իր ամէնէն ծանր ողորդութիւններէն մէկը, ամէնուն աչքին դիմաց, բայց բոլորովին միակ: Անիկա ձեռքով դրուածի պէս տեսեր էր մտքէն քարը, հովը, մութը, քով քովի երկու պարձանները, որոնցմէ մէկուն մէջ իր արիւնը, այսինքն՝ բոլոր խենթութիւններուն համադրուածը, արուեստով ալ լուսապատկ: Ինչո՞ւ, հակառակ հզօր փափաքին, չձգեց իր աթոռը, զանկ շունչ մը առնելու համար, ելլել անապատ, ինչպէս կ'ընէր այնքան անզամներ, աղջիկը զարկած թելին, մութին թանձրանալէն վերջ... Սահակ Պարզեւեան յոգնութիւն, յուզում ժանաւանդ չէր շահագործած, երբ ուզեց հանդիման: Մարդիկ մեղքեցան մեծ գրուակներ անշուշտ, երբ պըտրացուցին աչք մը քանի մը շատ հակադիր պատկերներու: Արտեմիս Գահարեանը սկսած Անգա Միրոսիմա մը: Արժան Պարզեւը՝ ուրիշ բոկիդը մը: Այս բոլոր առեղծուածներէն ամէնէն խոտովի: Սոնա Գոհարեանը, որուն օրային մէջէն կը տեսնէին Արտեմի Պասպարեան անունին տակ երկու տարուան յուսախարութիւնը, յիմար սիրահարութիւնը, բայց ժանաւանդ դինքը, մեծատաղանդ արձակագիրը: Ու տակաւին անոնք չէին խորացափած անոր սիրտին մէջ չիկացած երկաթին աւերը: Կէս ժամը կ'ընէ երբեմն, աւելի կործանում, քան կէս դարը: Ու այդ ժարդիկը նորէն չհասկցան իր հարազատ իմաստին մէջ այն ալլուրութիւնը, որուն մէջ փաթեցուած մնաց անիկա ընդունելութեան առաջին անակնկալէն վերջ: Ու իրենց միամիտ յիմարութեան մէջ սովորական դտան անոր աչքերուն չբացուիլը, անապատի ժամուն ամբողջ տեւողութեանը, ցաւեցան նոյնիսկ, որ ըլլար հասկած անոր գլուխը գէպի գուռը, անապատ հանող ճամբուն: Ան կը սպասէր: Ունեւանը երբեմն տրամա մը կը պատմէ: Խուլ էր, գեղարդուած՝ չպատասխանելու չափ սանկ ու նանկ նկատումներու: Սաստեր էր Արտեմի Գասպարեանին շղայնուտ անհամբերութիւնը, որով կը պարզուէին ուշացող զոյգին շուրջը դառնալու վախեր: Այնքան՝ որ շուրջ ամբացուած իր սւսերուն, զկծկուած արձանի մը նը-

մանն, մնաց լուռ ու վանող: ... Այս ամէնը, վերաբող թէև, բայց նոյն ատեն ապրում: Սոնային մասները դասն ուսերը զբաղէտին: Այդ անցեալը տակաւին կ'աղօտէր: Բայց աղջկան մատի ամէն հպու- մէն կը զորանար դարձնալ:

— Ի՞նչ վատ է սա:

Սոնան արտաւայ: Հարցումին հետ, մէջէն, անոր մտքին եղեր էր անուար իրողութիւնը անպատին: Բոպէական սա շընումը, ինքն իր ներքը ապաստանելու, շմտանուելու փոյթը սուտի զիչ վարժ աղ- ջըկան համար արժէք էին յսփառանց, որպէսզի կարենար պատասխա- նը ճարել: Փառւ, որ յիմար էր եղած շուտացուելով — տաք ջուրը գժուար, լիւքս քան մըն էր այդ տունին մէջ, ուր խնայողութիւնը զարճեր էր պարտադիր՝ կեանքի սոյորտական կարիքներուն, նոյնիսկ սիրտին վրայ — անհետ ընելու համար իր մարմինէն հեռոյքը Փա- շերէի մէջ անծանօթ հոտուէտ իւղին, որ թէև ցեղած, բայց իր նո- րութեամբ, մա՛նուանդ պաղտնապահ հանդամանքովը հետաքրքրած էր զինքը: Արժան Պարզեւք քանի մը կաթիլ անկէ դրած էր իր մեր- կութեան զանազան մասերուն: Զգեստը կը զսպէր, բայց չէր սպաններ այդ հոտը: Սոնա Փոհարեան ուրիշ՝ զիտնար, թէ հոտերը կ'ուպրին, կ'ապրին նոյնիսկ ճառարդ դար: Մեծատա- դանդ զբաղէտը, թեւերուն վրայ այդ հոտին, զգացական, զգա- յարանական բացարձակ հարազատութեամբ մը, գտաւ փարիզեան իր մանուարը, Անգա Կէօրկէօլման ծոցին, որ իր հայրենիքին այդ մասնակի անուշահոտութիւնը կրցած էր ընդունելի ընել անոր հետ ջիւղերուն: Նուաղուն, միտի հոտին շատ մօտիկ, բայց անոր անո՛ւ- յը: Որ զգաստ էր մանաւանդ: Զէր թափառեր կիներուն ետեւէն ու մտերիմ շփումներու ատեն միայն կը յայտնէր ինքզինքը, մեղմե- լով միտերուն կարծր, զիչ մը աղի բուրումը ու նուաղելով նոյն տա- րազութեամբ, որով եկած էր իր դերին: Պէ՛տէ է նաւառայ ճակա- տադրին: Ձեր գիտնալիքն է ստիկաւ: Բայց պարտաւոր էք ընդունիլ ճակատագրականը, որ հոտ մըն է երբեմն, երբեմն ընթերցում մը, վարձուած սենեակ մը, հանրային պարտէզի մը մէջ նստարան մը, ուր կու դայ մեր կուշտին իր տեղը առնելու ու այդ տեղին հետ մեր ալ սիրտը տանելու: Հելուանի սա թշուառ վիլլայի իր մահիճին մէջ, Սահակ Պարզեւեան, զգացական պայծառութեան խորագոյն աստի- ճանով մը տպրեցաւ սլաւ ծագումով այդ աղջկան ծոցը վերջին ու եղերական անգամ մը նորէն: Եդիպտոս, Իզմիր, Պոլիս, Ամերիկա անիկա չէր հանդիպած այդ հոտին ուրիշ անգամ մըն ալ: Այդպէս պաշտպանուած, շփումէ ու մարումէ զերծ, անտարազելի այդ զգա- յութիւնը, ընդմէջ մատաղ միտին ու դայն խորհուրդի հանող նոյն- քան գժուար բացատրելի համին, մէկէն գտաւ իր թարմութիւնը, իրեն հետ կեանքի կանչելով Սահակ Պարզեւեանին հրա՛շքը, ինչպէս կը պատմէր անիկա, սրբուն բուսերով, հետու Փարիզին մէջ իր ա- տալին ճանաչողութիւնը, գուք կը հատկնաք, ինչ բանի: Հոտերը տե- սողական զգայնութիւններէ կը տարբերին անխառն, բացարձակ իրենց անձնականութեամբը: Ձեն կրնար վերակազմուիլ, ըսել կ'ուզեմ՝ վե- րադառնալ իրրեւ պատկեր մեր գիտակցութեան, ասանց արտաքին հազարդիշի մը, գրգիռի մը, բայց ունին հրաշքը քանի մը զգայարանք- ներու պաշտօնը մինակ իրապործելու, երբ այդպէս, անակնկալին կամ մերձաւոր հանգիստութեան մը նպաստովը կը խուճեն ներս մեր գի-

տակցութեան, իրենց հետ բերելով այդ պահին յատուկ ամէն կարգէ զգայութիւններ: Այս է պատճառը, որ հոս մը ժարմին մըն է երբեմն, ծոց մը, արցունք մը, դգուանք մը, դաշտանկար մը, քերթուած մը, համբոյր մը, — ամէ՛նը՝ որոնք այդ հոտին մշուշին մէջ մատուցուեցան մեր զգայարանքներուն եւ մեր ուղեղին ու գացին թաղէիլ զգայութեանց ծոփուն խորը, որուն անունն է մարդը: Սահակ Պարզեւեանին համար, սա հոտը, հոս, երիտասարդութիւնն էր, առտանց վերագրի: Ու զուգորդութեան օրէնքներով, թերեւս ամէնէն տմուր մասը անոր անբակոյտին:

Անոր շունչը կտրեցաւ մէկէն: Այդպէս կը պատկերէ Ժողովուրդը զրեթէ անբացատրելի վիճակ մը, որ ո՛չ մահն է, ո՛չ ալ կենսւքը, ո՛չ գիտակցութեան կորուստը, ո՛չ ալ նուազումին թերաշխարհը: Ամէն ինչ մեր շուրջը նոյնն է մնացած: Ոչ մէկ շրջում: Մեր զգայարանքները կը պահեն իրենց ընկալութեան եւ սուշութեան մեքանիզմը անայայտ: Բայց մեմէ գիտնմէ, թէ դադարած ենք ըլլալէ, մեռած ենք մեռնել տալ: Կրնայ պատահիլ, որ շնչատութեան դադարը (ընկալման) զուգորդիկ այդ կտուրմի երկվայրկեաններուն: Աւելի յաճախ շունչն է, որ կէս կը մնայ իր գնացքին վրայ: Վիճակին տիրական նկարագրերը դադարն է: Պիտի թօթուենք մենք մեզ, ակնթարթի արագութեամբ: Դադարը, իրեն յատուկ ծառայող անհուն անձուկը կ'անհետանան այդ շարժումին անդրադարձ ազդեցութեամբ: Միտը կը գործէ կրկին (կը զգանք անոր զարկը) ու մեքենան կը շարունակէ ինքզինքը: Սահակ Պարզեւեանն նման անբացատրելի վիճակներ կ'ապրէր տարիներէ ի վեր ու իր բժիշկները կը ծաղրէին զինքը, վասնզի դրագէտ մը իրրեւ կը վերլուծէր զգայութիւնները, որոնք անձանթ են մեզմէ դուրս: Ուրկէ՞ կու գայ սա այսքան երկիւղաօրէթ կատարը կեանքին: Բժիշկները թող ջանան պատասխան մը ճարհի: Իրողութիւն էր, որ մտապատկերը (մանսարտի ուստնողուհիին), առոր զուգորդ զգայութեանց այնքան բարդ հանդէսը, անմիջական ներկան, այսինքն՝ նոյնքան թարմ, նոյնքան իրաւ աղջկան մը միտերուն ներսը հասունցող, բայց այս անգամ ծածկուելու, զաղտ մնալու ճակատադրուած զգացումը, սա հոտին լեզուովը ինքզինքը կը պարզէր, ու կը զանէր իր վերջնական, արձակ իմաստը, անոր ջիղերէն իյնալով անոր հոգիին խորը իրրեւ անհուն, անմութիւի ըզմատրութիւն, Սահակ Պարզեւեանին ու թերեւս բոլոր մարդոց համար ալ մէկ ու նոյն արժէքով, երբ մտիկ կ'ընենք մեզի հասած լուռ ճայներուն, մեր ընկալութեան շրջանակին թրթռացող միտի շղարչի մը: Ամէն մարդ սեռն է, ամէն քանի տալ, գրեթէ ամէն տեղ, ու երկրորդաբար՝ ընկերային անասուն մը, իր կիրքերը զօրաւոր կապերով ցուկի մէջ պահելու համար տառապող: Աւելցուցէք միւս աղէտն ալ, սա ու ծածկուելու Սահակ Պարզեւեանին, — սիրտին մաշումը, որ կը սկսի թերեւս յորդ իսկ երիտասարդութեան տարիներէն ու տարուէ տարի կ'ընդարձակէ իր աղէտը, եզրերէն դէպի խորերը, ու զանիւզ վերջ իր դառնութեամբ, կործանումին կշռոյթը վճռուպէս, կը յայտնուի քանի մը ձեւերով, պայթում, անգամայութեամբիւն, գիտակցութեամբ լրիւ խաւարում, անշնչացում: Թուղթի վրայ սա բառերը գիրբերու շարք են ու քիչիբու ճակատազրուած է անոնցմէ ոմանց փորձարկումէն վերջ մահէն դարձ մը, ինչպէս կ'ըսեն: Աղէտը, հոտի մը անտես նաւակին մէջէն: Ուրի՛շ՝ խորհրդաւոր այն տաղանայը, որմէ կը սոս-

կանք, բայց որուն չինք հաւատար, մինչև որ դուռը (սիրտին) չզար-
նուի: Ըրէջ սիրտը նուազ մաշած, այսինքն՝ բազդառարար երիտա-
սարդ, ու արձակեցէք վրան ջառուուն կնիկ ու հարկւր վիշապ: Մենք
պիտի դպանք կործանումը, պատառ մը այդ միտին կամարակապ
խորքերէն նարելով մահուան դէմ կարելի նարտարակասութիւնը:
Ըրէջ, հաս արուածին նման, այդ խորշերը արդէն քայքայուն ու դուք
ձեռնունայն կը մնաք հարուածը դիմաւորելու ասին: Ահա թէ ինչու
այդ հարուածը պիտի դայ շատ անդամներ, երբեմն բազմազան, եր-
բեմն աննշան մանրամասնութեանց ձեւով: Գիտէք անոնցմէ: Ահա
ուրբիներ, — թղթիկ մը, սեղանի վրայ մոռցուած թաշկինակը, ան-
կիւնի անմեղ մոմակրամ մը, որ սակայն մահուան վճիռ մըն է ար-
դէն, մազէ խուրձ մը, մեր մասներուն մէջ ինկած հին դրքի մը մէկ
էջէն, միտէ կտու մը բանուած, արադ ու թեւակի, մեր աչուրներուն
մէջ, որ մեզի կը բացատրէ մեր անունը գրկանքը, ու հաս դրուածին
նման հոտի մը դազա վկայութիւնը, որ հարկւր փաստէ անլին կը
պարզէ մեզի...: Ու կը կործանինք: Սուսակ Պարզեւեանին համար,
սլաւական այս անուշահոտութիւնը սկիզբն էր... քաւութեան:

— Օ՛ր...

Կրցած էր հազիւ շնջալ:

Բայց այդ մէկ հատիկ վանկը փրկութիւնն էր, իր կարծիքով:
Սիրտը անցած էր վտանգին կամուրջը: Գիտի գիտնանք ատիկա:
Իսթիչին համար ատիկա կը նշանակէր շարժումին ինքզինքը աննշը
ձորով: Հոգեբանին համար՝ սկիզբը աղէտին:

Անիկա կեցաւ — երբեմն մեր պտուկիը չի տարբերի բայելէն
— աննշու համար յոգնութիւն, շունչ, որ գինն է այդպէս արտա-
բերուած վանկի մը: Աչքերը կը մնային պաղ, սառած դրեթէ, սեւեռ:

Կեանքին բոլոր ջերմ խորհուրդին մէջ նոր մտած սա աղջիկը,
անոր սնարին, սիրող ու ատար համար իսկ տարօրէն կարեկից, անա-
պատի փորձառութեան ամբողջ եղբրականութիւնը այդ մէկ հատիկ
վանկին մէջ ընդգրկող, հազիւ ունեցաւ անկարող շուարման քանի մը
բապէ: Լո՛յս իջաւ անոր ներսը, միակատար՝ որքան արադ: Պատե-
բաղմէն յետոյ, սիրտի հիւանդութիւնները, կաթուածները, յանկար-
ծակի մահացումները՝ նորութիւն: Նորածնութեան մը չափ ընդհա-
նուր, մո՛նաւանդ յիսունի դուռներէն ու անկէ քիչ վեր կայաատ,
լեցուն, փարթամ կրեցող մարդոց մօտ օտար բառը, Tensionը, որ
կը պարտէր բերնէ բերան, օտար լեզուի հիմնովին անմանօթ կիներու
շրջանակէն իսկ, կարծես իրենց դիրքին, հարստութեան վերջնական
վաւերացում մը բաշխող կախարդ պատգամ: Ու շատ էին դարձեալ
այն միտները, դարձեալ լեքը մարմնով, որոնք կ'ուսէին ու կը իը-
մէին «կանայս աննուին», բայց ասնդուսի երբորդ աչքին վրայ կը
կգէին ու ա՛լ չէին բարձրանար իրենց ծուկներուն վերեւ: Տեսած շատ
ուներ սա աղջիկը այդ պատահարներէն: Անիկա դատեց չափազանց
արադ: Գրադէտին դէմքը եղեր էր մահու դալիլաքիամը, յօրինելով
շատ մօտէն դազաղ մանողներուն նախակապուտ շրթներուն թելա-
դրանքը:

Ձկանչից մաման (յետոյ պիտի գտնէր իսկական պատճառը սա
զանցառութեան: Կնոջ ներկայութիւնը կրնար հակառակ ազդեցու-
թիւն ունենալ փոխարեքարար, մօրը՝ ինչպէս հիւանդին համար, ու-
րոնք գիրար կ'ատէին անհնարին ատելութեամբը անկարող, անսը-

բազբելի մարդոց) : Հաւաքեց իր շուարիւ սկսող անձնաւորութիւնը : Գրկեր էր շարժումի հիմնովին անկարող ու ասորօրէն ծանրացած անոր իրանը, քաշելու համար վեր, դէպի բարձերը (գրադէտը երեք շորս բարձ կը պահէր իր կոնակին ու զլիին տրամագրութեան ներքեւ) այդ մտակոյտը, ըստ բժշկական յանձնարարութեան, թեթեւ անոր անձնազատութեանց ստեն, շնչառութիւնը դիւրացնելու համար :

Գրադէտը չէր թարթած : Անոր շունչին կշռոյթը շունչի ոչ մէկ խանգարում : Աւելին. բարձերուն վրայ դէպ անոր իրանը կը թելադրէր որչառ ալ ապահովութիւն : Բայց կը մնար անարհին դիմուկը անոր երեսներուն՝ իր սառած ճերմակով : Այդ երեսներուն վրայ կը մտային դարձեալ պրկումներ, գիրքերու բառով՝ Spasmeը, որոնք թեթեւ, զանազան ալ, արագ ալ, կ'ուրուանային, կը շինէին իրենց միւս, թեւաւոր բախումները ու կը հալէին, նուազող երգի մը նման, կրկին բուսնելու համար : Սոնան կը վախճար հարցումէն : Զայնի պակասը անշուշտ ծանր տարր մըն էր, այդ աղջիկը աւելորդ տեղը տաղանայի մատնող : Հիւանդին աչքին մէջ ճերմկուցը երբեմն կը շատնար, երբեմն կը քիչնար, միշտ հեռու պահելով հոգիին այդ դուռները՝ հոգիին թափանցումէն : Նուազ լոյսին մէջ, Սոնա լաւ չէր կրնար գանազանել դիմային այլալուծները, որոնք չէին զարգանար, ըլլալու համար ամբողջական խաթարում, խախտելով մկաններուն դրութիւնը, կամ պարզելով յտեղանշական շիջումը, տեղափոխումը հիմնական գիծերու, որոնցմով բերանին, շրթներուն կապը, տարազը կը բարձրանար դէպի կէտը այտին, իջնելով միւս կողմէն մինչեւ կը զակին մուտքը : Կաթուածներու վրայ էր գիտցածը չէր աւելի, քան իր տեսածները : Թեթեւ վարանումէ մը վերջ, ձգեց անոր դաստակը, զոր կը պահէր մատին առիկ, սիրտին զարկերը մէկիկ-մէկիկ կշռելով, ու հասաւ լամբին : Զորաւորով փոխանակումը ողողեց սենեակը աւելի մտահալի բանով մը : Բայց պիտի զղջար : Այդ ազատ ու ընդարձակ լոյսին մէջ պարզուածք արտատուչ էր ու աւելի քան ողբերգական : Դալիութիւնը սպիտակութիւն էր ամբողջ, շնորհալի անոր դէմքը, գերեզմանէն առաջ այնքան ահաւոր իրաւութեամբ մը պատանող : Գտու, որ այդ դալիութիւնը կաթոտ ապակիի փայլ էր առեր աչքերուն խորը, ուր տեսակ մը հեղուկ կը թանձրացնէր անոնց արտայայտութիւնը, լոյսին ակունքներուն համեմատ, ըլլալով մեռած շերտ մը ապակի, ուրկէ պակսէր աչքին գերագոյն իմաստը, ուժը, — արտայայտութեան բարձրը : Բամ չըսազ աչքերը, որոնք դուրսէն ոչինչով կը դատուին, բայց չեն տեսներ : Աղջիկը մաս նետեց կողերուն, որոնք թեթեւակի դողացին, բայց դարձեալ չկոտորեցին ակնազուտներուն սիրկ ճեռելութիւնը : Սահակ Պարզեւեան կ'ապրէր հեռաւոր, կիտասրդ գիտակութիւն մը, ուր իրականութիւնը եւ զգայախարութիւնը (hallucination) փոխնիփոխ մուտք ունէին : Երթները թեթեւ մը կ'ուրցած, օդը խտացած ներս առնելու բնագրական թեթեւեղով : Զեռքերը, երկաթ՝ ինկան վերձակէն դուրս : Անկողնի կողերուն, անոր երկաթները օղակելու պատրաստ : Հագր, որուն ընտելացած էր քանի մը տարիէ ի վեր : Որ կը բանար շունչին ճամբաները, առատ խուփի ալիքները պատուելով ու բերնէն դուրս պոսթկալով, հեռը կ'ուր-կ'ուր փխրացած արիւն : Այդ հազը այս անգամ չորս Խուփի ու արեան պակասը ապահովութիւն՝ տրուած ըլլալով արեան վրձ-

խուքին ծանր իմաստը ժողովրդական բժշկութեան մէջ: Բժիշկները դասն կը վերագրէին հասն առթած բեկումներուն խոչափողի պատե-
րէն: Ան ունէր իր լիքը մարմինը՝ ծիւրախորհրտ հերքող: Ուրիշ՝ ուր
պիտի մտածէր սիրտին, որուն վրայ անհկա շահարկութիւն միայն
պիտի ներէր իրեն, դասն հերքելու համար զօրաւոր պատճառներ ար-
ժեւորելով աշխարհի բարձրագոյն քաղաքակրթութեանց հանդէսէն: Ո՛վ
ունէր անկէ, որպէսզի ինք ունենար: Անիկա կը հպարտանար ան-
կէ ոչ թէ զուրկ ծնած ըլլալուն, այլ դասն ունենալու ոտմանթիւմէն
ինքզինքը զերծ դաւանելուն:

Աղջիկը վազցուց եթերին սրուակը, հնօրեայ բժիշկէ մը յանձ-
նարարուած, սիրտով հիւանդ ու այդ դեղով ահա դիմացող տասնեակ
տարիներէ ի վեր: Թեթեւ մը դողահար, անոր ուռնիքը ծծեցին ա-
զահաւթեամբ հիւանդանոց, փտութիւն, գործողութեան սրահ հոտող
այդ անպայտ բանը: Անոր այնպէս եկաւ, որ խոչափող խցող կծիկը
կը կակուղնար, ինչպէս միշտ, բայց սերիչ անգամներ պատահածէն
հակառակ, փոխանակ զգալուածներու, յորանջներու ձեւին տակ բեր-
նէն խոյս տալու, կը քալէր, կը քաշուէր վար, իրանին յատակները,
որոշ ակօտով մը դէպի սիրտին կողմերը: Կարծր այդ բանը կը քալէր
իր ճամբան, գունդաւոր, ինք ամշտաւ արտաքերելու՝ տոտիկ-տո-
տիկ: Ազդեցութիւնը եթերին: Ո՛վ զիտէ, հոգին, մանաւանդ դասն
առնելու համար զրկուած պաշտօնատարները (երկինքին), ինչպէս
կը քալեն: Իրողութիւն էր, որ փրցուած, արձակուած էին շունչին
կապանքները: Հաստ, կէս մը գլանաձեւ ու հակայ անոր իրանը դաս
զրեթէ իր սովորական կշռոյթը, հազիւ թեթեւակի խանգարուած,
քանի որ արտաշնչումը կը յամենար, ճիւղար ժամովանաս, գոր-
ծածելու համար իր իսկ բացատրութիւնը: Անիկա դիտած էր սա
երեւոյթը ու, ըստ իր նախասիրութեան՝ գրականացուցած:

Մոնան կրցաւ նայիլ անոր մտքուած, Վարդարուածն ալ օսնե-
րէն ու դերբուկներէն զազատուածն ճակտին: Ոչ մէկ պրկում: Աշ-
քերը զրեթէ խաղող, մարդկային: Եղաւ նոյնիսկ միտմտ, իր մատ-
ներուն «կախարդանքին» հաւատալու չափ գրագէտին հետ: Ինչ որ
մտահոգի էր սակայն, կտա՛ւն էր անոր դէմքին, որ կը մտար տա-
րօրէն ճերմակ: Ո՛ւր էր «հալածուներ» այն ջիշ մը բաց, բայց զրե-
թէ կապոյտի գարնող յորդ կարմիրը, որ անոր երեսները կ'ուռեցնէր,
ժողովրդական բառով մը՝ կ'ուռեցուրէր ջիշիկ մը, թելադրելով
զուրան վրայ յաղթ առողջութիւն, ստեղծելու չափ մահ կատակեր-
գող այդ մարդուն շուրջը տեւական հեղնութիւն, հերքումը իր մտա-
հոգութեան մէջ, մանաւանդ ձայնի պակասէն վախճալով, որքան
խօսքէն, փորձեց դառնալ իր մարմնին: Իր մատները, կախարդան-
քով մը, կը թուէին պարպուած՝ որքան խորունկ բեկում, զլատում
զղաց իր ներքը: Անշո՛ւշտ: Իր մարմինն ալ մաս ունէր սա մահիճին
մէջ երկարող տառապանքէն: Ձանաց կոպերը հիւսել իրարու, խնա-
յելու համար անոնց տակ լոյսէն նեղուող ապակիներէն նայուածքին
մտաւ, արտմութիւնը: Գրագէտը ցնցուեցաւ: Ուզեց արդիւել: Հա-
կառակ անոր, որ Հանդիսն էր հագր, անհկա կը վախճար բռնէն, որ
ներսէն հոգին էր կարծես: Այդ էր պատճառը թերեւս, որ փորձէր
վերցնել ձեռքերը: Ձկրցաւ: Ետտ ծանր էր այդ երկաթը: Աղջիկը
հասկցաւ սակայն սա շրտուած մտածումը: Քակեց իր մատները ա-
նոր կոպերէն:

Երկուքն ալ զգացին, որ դոյութիւն ունէր ժամանակը, կայա-
րանէն Հնչող ժամացոյցին զանպէն: Գտան՝ որ կար այդ ժամանակը
նորէն ու տարօրինակ սենեակին ալ մէջը: Հով մը, քիչ մը աւելի
խոշոր, շարժումի հանեց վարագոյրը, կախ լամբը: Պղտորեցաւ ան-
կնճիւ մթնոլորտը: Զովութիւն, նոյնիսկ մտաք: Աղջիկը նոր կը
հանդէր: Գրագէտը կը մտնէր ներսն իր փառքին:

— Արմա՞նը տուաւ:

Բացի արտայայտման թեթեւ նեղութենէն, ոչ մէկ ուրիշ անսո-
վոր երանգ սա հարցականին մէջ: Զայնին չէին մասնակցած ո՛չ յոն-
քերը, ո՛չ մեծատաղանդ ճակատը ու, մա՛նաւանդ՝ չրթները, որոնք
այնքան պայծառ անդթութեամբ մը կամ ջերմութեամբ անոր հոգին
կը բնձադէին, անոր խոսքը վերածելով ամէնէն շարժոյթի Հեղու-
մին՝ ինչպէս ամէնէն արտատուք քաղցրագին համբոյրին:

Սոնան չէր հասկցած ու հարցուց.

— Ի՞նչը:

— Հո՛ւտը:

Բնական, պարզ, մէկ ու նոյն անզգածութեամբ: Դէմքին ոչ
մէկ հով դանձութեան, տարակոյսի, յուզումի:

— Այո, — պատասխանեց աղջիկը: Բայց անոր այդ վանկին
մէջէն զփուռ մը կրակ՝ կը խօսէր: Բաց ու խարտեաչ անոր մորթը,
երեսներուն վրայ եղած էր արևան քարթուած պատմութեան Հեքիա-
թին: Մորթուածը գառնուկ մը չէր անշուշտ: Բայց անպատի տե-
տարան մըն էր Հեքիաթին յատկը: Աւ անպատի տեսարան մըն էր
սա աղջիկը: Վախո՞ւն — թափանցուելէ, քողամերկ ըլլալէ — ելաւ
ոտքի, բան մը — չեղած — փնտռողի անիմաստ անպարանջով: Իր
շարժումին մէջ յանկարծ զգաց, որ այդ հոտը կը բխէր, կը տարած-
ւէր ո՛չ միայն ստինքներէն դէպի ոտնոցերը, այլև՝ զգեստներէն: Ի՞նչ
իմար էր եղած զո՞նէ վերնազգեստը չփոխելու: Գարձաւ սակայն,
պատուհանին կիսափակ փեղկը իբր թէ ամբաստանել վերջ:

Այն ատեն անոնք բոլոր մը իրարու յառած մնացին: Պէտք կա՞յ
գիբեքն ու գիտութիւնները իրար խառնելու, վկայութեան կանչելու,
թէ անոնց իւրաքանչիւրին մտքին խորը կը յօրինուէր նոյն պատկե-
րը: Ի՞նչ են, արդարեւ, քսան-երեսուն տարիները, մտքին անհունու-
թեանը մօտ դրուած: Անոնցմէ մէկը այդ պատկերը ունէր ժամուան
մը նժարէն: Անոնցմէ երկրորդը այդ պատկերը ունէր քառորդ դարու
նժարէն: Բայց երկուքին համար ալ նոյն էր կտուր պատկերին մար-
մինէն: Մտքա՞ն թէ մարձում մը կար, ամէն դիւերուան պէս, սա
տաղնապանքը ամոքելու: Կր վախնային, ամէն մէկը իր հաշուոյն: Ոչ
մէկ զնով սա մարդը պիտի յօժարէր փակել իր տէքերը, այնքան ա-
նոնք ծարաւն ունէին սա աղջկան ձեւերուն: Ոչ մէկ զնով սա աղջիկը
պիտի յօժարէր երկարել սա տարապարհակը, դորձադրուած մարմի-
նէն վեր կարդերով, այնքան կ'ուզէր ինքզինքը յանձնել իր գառանձ-
նութեան բազուկներուն:

Գրագէտի սեղանին վրայ ժամացոյցը զարկաւ քառորդին: Ստ
էր կայաբանէն հինգ վայրկեան:

— Հինգ վայրկեան, — մտածեց, աղջիկը: Բայց որքան ժամը,
յո՞ր են երբեմն մարդոց բոպէները: Հաշոււումները մանաւանդ:

Մէկը կրնար սրբագրել այդ հաշիւը:

— Նախերգա՞նքը:

Արտաքին ուրիշ զգալութիւն չէր խանդարած սա նախերգանքը, մարդկային շնորհքու մեղմամտութեամբ մը, փոխելու համար ահոր նկարագրերը, Դուռ, պատուհան, լոյս, հով, եղբեւանիին հոտը՝ անապատին անհուն տաքնապը պահեր էին իրենց կշռոյթը, իրականութիւնը: Լսուելու պէս՝ Տիկին Գոհարեանի ոտնաձայները, որոնք չհասան սակայն գրողէտին ծանրացած ականջներուն: Մտազբաւ, ճարտարութիւն, Սոնան շտեսաւ ծօրը շուքը, որ մութին մէջէն կը զատուէր աղօտացած ուրիշ մութ մը, խուզարկու, վարանոտ՝ դալու համար նրբանցքի մուտքին:

Պէտք կ'ա՛յ դարձեալ մանրամասն պատմելու, թէ ճակատադրական ո՛ր ազգակին մեղմամտութեամբ, սա նախերգանքը, քանի մը բուռն հազիւ աննոյ իր ընդհատումէն վերջ, պիտի բացուէր բուն տրամային, անոր առաջին արարին: Ըսի՛, թէ Պարզեւեան խաղացած էր վերջին բառորդին վրայ, թէ այդ ճառորդը, թեթեւ որտաղբեամբ մը վերադրուած էր ծամի:

Առաջին արարը այդ ճամբուն սկիզբ տաւ եղբեակն համբոյրով մը: Մենք հազար-հազար ճամբաներով մտեր ենք մահուան մէջ: Սահակ Պարզեւեանին բախտը սուղեց, որ անիկա մանէր անոր մէջ, ճամբաներուն ամենէն անուշովը, համբոյրին ճամբովը: Դատեցէք ինչպէս որ կ'ուզէք: Այս մարդը այդ կեանքը սկսեց էր համբոյրով մը: Զայն կը պարտուորուէր փակել դարձեալ համբոյրով:

Մինչև այդ համբո՞յրը:

Բաներ կան, որ չեն պատմուիլ, ըսեր են իրաւունքով: Ասոնցմէ ա՛յն երկրորդ հինգ վայրկեանը, որուն ընթացքին արեւմտահայ մեծաազգանք արձակադիրը պիտի սպրէր, բայց սիրելով, բայց վերջան խենթենալով՝ իր մէկ նատիկ ցաւը, ամէն տաքնապի համար, սա շատ սուղ դադարով, ինքզինքը զրահուած դաւանելով, հաւատարմով նոյնիսկ: Հոս է թերեւս զերազոյն թշուառութիւնը մարդ անուներ կրող կենդանիին:

Հինգ վայրկեան: Անշուշտ: Որոնք անոր կը դարձնէին անհուն կատարելութեամբ մը իր ուժը, ընդզներուն ամբողջ սարուածը, մտքին պայծառութիւնը, մա՛նաւանդ իր կեանքը լեցնող ամենէն հոգի տնջաւորութիւնը, չեմ դրեր բառը: Հրա՛ջք: Ի՞նչը չէ սա մեր աշխարհին վրայ, որ չըլլար ատիկա մեր կործանած, նոյնիսկ մինչև կուրծքը մահուան մէջ խորատոյզ մարմինը: Անոր ձեռքերը գտեր էին իրենց ամբողջ խենթեցնող առջը, երբ կը փաթթէր կիները, քիչ առաջ երկաթ: Անոր նայուածքը, այն անանուն խոփքն էր, որ կիներուն միտին մէջ կը բանար իր սկզբը ու զանոնք կը հանէր, կը հասունցնէր իր աստուածային սերմերուն: Ու մատաղ շնորհ էր անոր մեղքամոմ դէմքը, որ կը յապաղէր թոնձրանալ, արիւնոտիլ: Թեթե՛ւ, թեթե՛ւ, թեթե՛ւ: Կրկնեց այս բառերը քանի մը ընդհատներով: Ուրախ՝ մանուկի մը չափ, ու աւելի իսկ: Ըլլային մոռցուած երեսունէ աւելի իր տարիները, դուք գիտէք ինչ երկանաքարի առջեւ: Ըլլար դատած ինչ որ անդարձ կորսուած կը դաւանինք: Ո՛վ իմաստութիւնը ժողովուրդներուն, որ կը յայանուիս հազար մեկերով ու հազար բառերով: Դուն ես ըսողը, սա կերպ հրաշքերը բացատրելու քու նիգիդ մէջ, պատկերը առկայծեալ քրագին, այնքան իրու ու այնքան նման, հինգ վայրկեաններու սա բոցազգեսց պայծառութեան:

Անիկա Համբուրց սա աղջիկը, խելացնոր, մատաղատունկ, ամբողջ հրայրք չբժնեբրով, ասեմուկեցուցիչ (գիտէք, որ իրն է բաւար) պատահարին սարողութիւնը կատարելապէս հասկնալով, անոր իմաստը լրիւ հազնելով: Մի հարցնէք ինչուն ու ինչպէսը: Մի վարձատք, որ մահուան մէջ մարդեր չդազրին ըլլալէ թեթեւ իրենց ամէնէն վաւերական իրազործումը: Իրեն պէս ապրողներուն համար չեն սակարկեր ռզրերգականը: Բայց դիտէ՛ք ձեզի պատմուած սա կեանքին պատուելի մը շրջան, ուր պակսէր ատոր, ոչքերգականին հովը: Շատ զիչ բան, սա մեր աշխարհը այդ մարդուն տրամադրեց հասարակաց ճամբով, որպէսզի հերքէր ինքզինքը, զիջելով անոր յարգարեւ ուղիղ, խաղաղ պայմաններ, անոր կէքը ալլապէս քաղցր ընող իրմէն, այդ աշխարհէն: Ինքնատպութիւնը — որ իր գրական պատրանքները, ուրուացումները վարչամակող պատմուածան մըն էր երիտասարդութեան ու փառքի ալ մուրացկան, մուրացուած մատաղապ — պիտի մնար թերեւս անոր ամէնէն յամառ մեղքը: Ձգալարանական տարօրինակ ամբութեամբ անիկա տարեր էր անկրելի յուսալուծները: Պիտի տանէր այս վերջինն ալ: Ինչո՞ւ պատմեց իրեն այս աղջիկը մէկ հատիկ բանը, որ պատմելու չեն, չեն պատմեր աղջիկները: Հնգիին հասցուած հարուածն էր տսիկա:

Հինգ վայրկեան: Անչո՞ւշտ: Որոնց առաջին երկուքին մէջ անիկա երիտասարդն էր, մատաղ աղջիկը համբուրց: Որոնց վերջին երեքին մէջ Սահակ Պարզեւեանն էր, այնպէս՝ ինչպէս փորձած են տալ ձեզի անցնող վեց հարիւր էջերը: Ան պիտի չաշխատէր դատել աղկտը, — իրն էր բառը: Անոր մտքին շուրուացան ոչ մէկ աշխարհիկ, ընթացիկ, զործնական նկատում, կարգադրութեանց կարելի հեռանկար, անապարանքով հեռացող իր սղաւն ճշմարիտ գնացքը բերողի մը, իմաստի մը վերածելու, սա աղջկան հետ, անապատին մէջ, տարբեր անկէ, որով տեղաւորուած էր դարձեալ այդ մտքին մէջ ան միւս տազնապը, այդ սղուն դոյացումէն քուտրդ դար տուով: Պարաք, մարդկային գլացումներ տարաշխարհիկ բոյսերու կը նմանին:

Անիկա տկարացաւ սակայն: Իր ուղեղը կը զգար ողողուած թուլ մշուշէ մը, սանկ քայքայուն, բայց իր գիծերուն հէնքը ամբողջ պահող ուստայի պէս բան մըն էր անոր գանկին տակ պարզուած ներքին իրականութիւնը: Սղաւ արի՛ այդ թուլացումը կապելու զիչ առաջւան շնչահեղձութեան հաւանական պատճառին: Դեռ ինքզինքը չէր գտած, իր ծոցին վրայ բուրումնակէտ որայի պէս նմուտող փափկութեան իր մէջ արթնացած անհուն խռովքէն: Ըրաւ ճիգ, ցաւագին ըլլալուն հակառակ, կեղբունացնելու իր հզօր իմացականութիւնը, հաւաքելու անոր վերջին առկայծումները, ո՛ր մերկացած դրական վարդաբանքէն, հոպտանքէն, ըլլալու համար մեր ամէնուն գանկին ներքեւ թշուառական կոյտ մը խմորը, իր բառովը՝ արարչանիւթը, բայց որուն սպասած ըլլային ստեղծագործ գորութիւնները, ինչպէս արտէ մը կը հասնին իր յատկութիւնները, երկար բերքէ մը վերջ:

Ուղիղ, չքսելու համար՝ ուղղափառ մտածողութիւն մը իր բախտը պիտի չըլլար սակայն, ինչպէս չէր եղած իրեն այդ բախտը ակելի բան երեսուն տարիներ: Մարդեր կան, որ պիտի ապրին ու իրենց մտածումն ալ իրենց կիրքերուն ողեղներում պիտի ըլլայ: Զգացումներու տրամաբանութիւնը դիրքերու յաւանտա վերադիր մը

չէր, այս դարու սկիզբին, այլ՝ թերևս կեանքին զերազոյն իրողութիւններէն մէկը: Իր տարիները ատով է ջալեր այդ մարդը, որ տարօրինակ պայծառաստեաութեամբ մը ծուկն մը իսկ կասկած չունեցաւ իր տղուն ո՛չ միայն մերձաւոր, կարելի ընթացքէն, այլև՝ անմիջական իսկ ճամբու զիծէն (արտասանեց Փրանսերէն իրիմնըր բառն ալ): Ինք, այդ տղուն սերմը նետելէ ետք, առեր էր զնացքը (ինչպէս սովորութիւն էր ըսել, ընդհանրացած առումով մը, փոխաբերութիւն արեւելահայ ուսանողներու) եւ Հարուստին մը անսա, պերեւելչտաւոր դքսուհի մը մահիճը յարգարելու, առանց հասկնալու այդ վատութեան զպանակը, բայց լիովին զգալով այդ վատութիւնը, ու առեր էր դարձեալ նոյն զնացքը, այդ տղուն ծնունդէն անմիջապէս վերջը: Իր տղան արդէն առած ըլլալու էր, ո՛չ, առած էր ուրիշ զնացք մը, աս ալ զէպի հարաւ, եզրպտական հնութիւնները, մեծ քուսնէի մը մէջ, որուն վրայ մեծահամբաւ խօսքեր գրեր էին օրուան թերթերը: Այս մասին անիկա ենթադրութիւն մը չէ, որ կ'ընէր, այլ՝ վճռական հաստատում: Բայց ինչ է՝ հինգ վայրկեան ըսուածը: Անիկա զգաց, որ ցաւի պէս ըսն մը կար ուղեղին խորը: Մահաւանդ յոյժութիւն՝ այդ մտածումները իրարու շարակցելու:

Յետոյ, առաջին բեկումները, հաւանարար, այն մեծ լուրերուն, որոնք մեր միտքուն կեդրոնները կը կապեն ուղեղին: Աղջկան աչքին առջև այդ մտածումներէն ոմանք բառ էին, ոմանք՝ թեթեւ կնճիւռ, ճակտին մետաղեայ փայլը հաղիւ. մէկտողտող: Անիկա վերջնական բախումէն առաջ, հեշտեցուց ալ կէս մը մտովի, կէս մը ձայնով, գիրքերը, իրենց ճակտին, հօր ու աղու, զրուած մէկ ու նոյն մասուն, ոնշուշտ, բայց մէկ ու նոյն ալ մելանէն: Հիմա, զէպ մը՝ մահիճի մը սնարին, Սահակ Պարզեւեան, աղջկան ախին, կը ջանար խօսիլ, բնական, հանդարտ, գրեթէ Հայրական: Ու կը տատապէր, որ չէր կրնար:

Մէկէն Հարցուց ինքն իրեն.

— Ինչո՞ւ համբուրեց: Բայց անզրազարձաւ, որ անիկա կը համբուրէր այդ աղջիկը տարիներէ ի վեր: Չանազանութի՞ւն: Կար անշուշտ, քանի որ միշտ, միտքէն, պատասխանեց.

— Յիմա՞ր:

Ո՞վ սա որակումին Հասցէն: Թույլացումը կը թուէր անհետանալ, վառնգի մտածելու ուժ մը տեսակ մը միտքին հարեց անոր քակուելու վրայ եղող ուղեղին: Այդ ուժը վարեց զինք: Գաւաւ, որ այդ համբուրը կատարուած էր իրմէն հետո, օտար, բայց իրեն տարօրէն հաշտ, բնական մղումներու մէջ, որոնց բացառիկ էր նկարագիրը սակայն, — մերկութիւնը՝ աշխարհիկ պայմանադրական օրէնքներէն հիմնովին գերծ, գրեթէ բնագրական, չըսելու համար՝ անասնական: Անիկա, այդ շրթներուն այդպէս խոստովանանքէն առաջ եղեր էր պոլսեցի պատանին, բառին ամբողջ երանգին մէջ, արագ, իրաւ հրաշքը մեր մարմինին: Անիկա այնքան ոչոքուած էր սոս գրական երանութեամբ, որ ատեն չէր սենեցած տեսնելու, թէ ո՞վ եւ ինչպէս բերած էր օրրտէն զէպի իր շրթները այնքան իրաւ սա ժայթքը, իրմէն պարպուելու եւ ուրիշին մէջ փախչելու, ապաստան գտնելու շատ յատակ զգայութիւններով: Յետոյ, միշտ զլիտն մէկ կէտին ցաւի որոշ դարկէ մը տատապելով հանգերձ, նետեց իր մտածումը որոշակի զգալու համար ունիլ սրտատուչ ու միամիտ ուրիշ

կակիծ մը — մեր հաճոյքները երբեմն ցաւեր են, մա՛նաւանդ երբ կը յօրինուին սա ճակատագրական յանդուժներու պայծառ տեսիլքին մէջ, իրենց հոտուժին ընդմէջէն մեղի պարզելով անդունդին յատակը — աստիկա՛ իր ամէնէն խորունկ, արժանաւոր մասն էր, որ կը բանար իր ճամբան, տարիներով իր ճարճբաժ հանդերձանքը ընդմիջաբզկտելով, Ե՞րբ ենք նայրը, Ե՞րբ՝ սիրողը: Մի տանիք հարցականը սփեաս վերլուծումներուն շարիքին: Մի մոռնաք միլիոնաւոր դարերը, որոնց ընթացքին, այդ որակումներուն յատակ տուող դիպտումը կը պահէր իր երանգը, մէկ ու նոյն: Մի ուրանաք քանի մը տասնհազը շանցնող դարերուն ալ փառքը, որոնց ընթացքին մէնք զատեր ենք դոյնները ու ըրեր ենք թերեւս ամէնէն վսեմ ստեղծումը մարդերուն մատչելի: Բայց քնախօսները կը կարծեն գիտնալ, թէ մօրը արգանդին մէջ սողմը քանի մը հարիւր օրերու ընթացքին, կ'ապրի քանի մը հարիւր միլիոն դարերու ապշեցուցիչ համարողութիւնը: Պիտի ներուի՞ կարծիք, թէ քանի մը վայրկեաններ, գիտակցութեան քայքայումէն առաջ, արածնեն մեզի ազդիլ առնուազն մեր ինքնուկ տարիները, անպատճառ ալ: Բայց տեղը չէ սա կասկածելի փոփոտութեան: Ամէն մարդու պէս, որ շղթայակապ է ծանր ժառանգութիւններով, Սահակ Պարզեւեան երկուքն ալ էր, հայրը՝ որքան սիրողը: Որքան ատեն, որ անոր մարմնեղէն դրութիւնը հպատակ էր անոր հոգեղէն ուժերուն, անիկա պահեց կշիռը: Բայց արեւաթեւալ ճրագը, գերազայն մութին իյնայլէ առաջ, կարելի պայծառութիւն է: Վերադիրները, զորս կը ճարենք այդ մութը տարազելու (ուրիշ բան չէ մեր գրականութիւնը հոգեվարձներու շուրջ) բառեր են յաճախ: Սահակ Պարզեւեան, երեսուն տարի դերասան, եղա՞ւ իրաւ մարդ մը, գոնէ երեք վայրկեան, երբ համբուրեց սա աղջիկը:

Բայց ինչ որ զահալիժեց աղէտը, աստիկա պատասխանն էր, զոր գտած էին անոր շրթները Սոնային բերանէն, — առաջին իրաւ բնութեւ, առ ալ, թերիալ ու անաս մարմինէն՝ այն հասուն ու քաղցր համը, հոտը, որ մեր ջղային ցանցը կը հանէ այնքան տարօրինակ թրթուման, գիրքերու բառով մը՝ Spasmeի: Սահակ Պարզեւեան, այդ շրթներուն վրայ գտած էր ո՛չ միայն տղուն ձեռքով հոն սրակուած բոյրէն բան մը, այլ մա՛նաւանդ այդ տղուն մօրը Խոզիմ: Նո՞յնն են հոգիները, աղջկան ու կնոջ, երիտասարդին՝ ինչպէս տարիքէն կոխուածին: Սորվա՞ծ էր սա աղջիկը, ինչպէս հարցուցեր էր ինքն իրեն, սա մարդուն աղան, ժամ մը առաջ, դարձեալ համբոյրի մը սլահուն:

Ու աղէտը: Որ համեմատական թուլացումին յաջորդ հսկայ խտութիւն մը ինչպէս դրուեցաւ անոր ծնօտին, երկայն գիրքը, զոր ստիպուած է ամէն մարդ կարդալու: Սահակ Պարզեւեան, իրեն ոչանվայնի թատերականութեամբ մը խաղացած էր այդ տախտակին հաշուոյն, սակ երեսուն մը տարիներ: Փայթեմ, հպարտ անոր մարմինը ճշմարիտ հակադրութեան մը փառքը կ'արժեւորէր այդ անխուսափելի վերջիմ քառորդը, երբ կը թնլադրէր տարիքի մէջ գիւլ մը խորամուխ վաճառականներուն, իրենց դրամարկներուն գերութեան մէջ նոյնքան խորամուխ, բունի բանայով անոնց դուռները, «հանրօգուտ ձեռնարկներու», երբեմն ալ՝ «սեպհական որոմայինին» իսկ, առ նոնց մտքին առջեւ կախելով իրբեւ անհուն, ահաւոր ժայպաւէն այդ պահին կուտը, ուր մեր ողորմութիւնները չէին արձանագրուած ան-

շուշտ, բայց կար արձանագրուած մեր մերկութիւնը, ամէն բան հոս
 ձգելով ողորդական ստուգութիւնը: Անիկա խաղացած էր դարձեալ
 այդ տաղանդալիմ վրայ, դժուար, կրակ աչքովներու մենութեան մէջ,
 իր անհուն վայելապաշտութեան, հեշտամուտութեան, հաճութիւն
 նովնալու ծարաւին հազցնելով քիչիկ մը բնազանցական Խիթիդայ
 զարգարանք, հետորութիւն, շնականութեամբը իր ըրածը դատու-
 ղի, բայց տակաւ ապաւորուած իր դերէն, դերումէն, յաղակելով,
 շնորհակալով, փղծկելով ու կրներու զարարուն միտերուն վրայ իբր
 բարոյական մը նետելով մոգական բանածեք գերազայն վնարումին,
 յաւիտենութեան կիշէն, որ բանկարն էր ժամուն, — զուարթ, մը-
 յաւի փոխն ի փոխ, թանձրօրէն կիրք ու շնականութիւնը հաւաքե-
 լով իր մարմինը, միշտ թատերական աբաղութեամբ, ճարտարանքով
 ու պաւկողին մտքին կոտնելով պատկերը իր դիակին, կապարի կապ-
 առուն պաղութեամբ, խոնջ, աղտոտ, նեղ աչք բանին, որ մտին է
 գերեզմանէն դուրս, անոր շրթներուն, զեռ պատանքով շարուն-
 ցած...: Լսելով-լսելով մարդիկ վարժուած էին սա քառորդին, ալ
 ինկած՝ իր արհաւիրքէն եւ որ հիւանդութենէ իր սարսուփին թերեւ
 բնազական յարդարանքն էր, ճարտար սքողումով մը, այդքան կա-
 նուխէն շրջաբերութեան հանուած:

Տարիներով ինքզինքը ընտանի ընծայող աղէտը տակայն տեղի
 ունեցաւ դրեթէ սա նախատեսուած, գերասանուած, մուննախիւած
 բնազարութեամբ: Միակ նորութիւնը կու գար ժամանակին: Մար-
 դիկ, վարժուած այդ դերումին, դժուար կը հաշտուէին, իր շարու-
 թեան եւ ուժին լիութեանը մէջ, լեցուն ու փարթած սա պատուհասը
 այդքան մօտ դատելու իր յանդումին, առտա-առտա բաշխելով անոր
 աստեղծեակները: Այս վրիպանքէն դուրս, վերջին արարը տեղի ու-
 նեցաւ անոր սպասած պայմաններով, անոր կրեւակայութեան ուժը
 վերջին անգամ մըն ալ արժեւորելով: Սահակ Պարզեւեան, տիրա-
 դրապէս, վախցեր էր հագին յանձնելու, իբրեւ գրական քծմա, իր
 դրականութեան մէջ, շահագործելէ: Ասկէ կը վախնար, թերեւ
 մահուան հաշուոյն իսկ: Ամէնուն ծանօթ է անոր սարսուփը որեւէ
 հիւանդութենէ, որ շարիքներուն գերազայնը, մեղքերուն անբաւկին
 էր իր հաւատումով: Ամէնէն աննշան ցաւը անիկա ծախեր էր փար-
 թած վաշխառուի մը նման, մանաւանդ Տիկին Գաւարեանի նահան-
 ջէն ասդին, կարծես քաւել տալու համար անոր իր անաւոր մարմի-
 նին մեղքը: Միշտ պիտի ճնարեպէր իր երազը, ուղի վրայ, մէկ ա-
 կընթարթի մէջ ընելու այդ անխուսափելի վնարումը, արդար ան-
 տարբերութիւնը ապրելով մարդուն, որ, աշխարհի երեսին, ասի մը
 այգի չէր տնկած: Նայել մը, Անոր (հասկեց ճողկաւոր) ուղիքն ու
 կրթալ, թարթիչները կուզու, իբրեւ գերագոյն հաւանութեան փաստ:
 Այսպէս էր բանաձեւած անիկա այդ բոպէն: Բայց, ըսի անգամ մը,
 անոր ո՛ր փափաքը յարգուեցաւ, որպէսզի յարգուէր սա մէկ հատիկն
 ալ: Անիկա շատ դժուար կը բանար բերանը զամբանական խօսելու:
 քանի որ հայհոյութեան միայն արժանի այդ արարքին համար իր
 շնականութիւնը կը տատաղէր: Բայց շնորհաւորած էր գրող մէկ ըն-
 կերթը յանկարծակաւ վախճանը, նախատեսելով այդ մարդուն մէջ
 ոչ անշուշտ կեանքին շիջումը — որ միշտ յիմարութիւն էր աստ-
 ւածներու միայն վայել — ալլ մանաւանդ պայծառ սա փառքը խա-
 զաղ շիջումին, վերջին քառորդով: Ճակատադիրը այս վերջինը կար-


զադրած էր սակայն կանխել ուրիշ երեքներով :

Այս վերջինները անիկա յաջողեցաւ պահել պարունակին, վա-
յելութեան, դոյնին մէջը իր տաղանդին, դիմանալով մշուշումին,
հեւքին, ցաւին, շրջումին (պիտի հասկնաք թառը), փրատակ իր մար-
մինէն քաղելով կարելի դիմադարձում, ճակատ յարդարելու շտափ
հոգեւորին, որ իրաւ էր, աննահանջ, իրեն՝ որքան իր մահինը լըջա-
պատողներուն :

Չորս այդ քառորդներէն առաջին երեքը եղան Հասողութիւնը,
ծիրին մէջը անոր տաղանդին : Մահը, եթէ ոչ արճամարճելի, ու աս-
նոր վրայ շահագիտելու հին իր տեսութիւնը վերանորոգելու, դէթ
երեւան բերին անոր ամէնէն իրաւ, արու, նոյնիսկ անսպասելի մա-
սերը, աւելորդ անգամ մըն ալ հաստատելով կասկածը, որով կարգ
մը մարդեր մեր խորհուրդը (մարմնէ՛ ինչպէս հոգիէ) կը ջանան
հասկնալ, մեր իսկ պայմաններուն լոյսին մէջ : Սեւն ու ճերմակը :
Յեկնն ու ստաշիւր : Ու Հիւկոյնէն առանց վախնալու՝ ստուերն ու լոյ-
սը : Մահակ Պարզեւեան աչիւ մարդ մը չէր ուզած ապրիլ, ան-
շուտ ասոր որոշ անբնդունակութեամբ մը : Բայց պիտի մեռնէր
շատ վայել, շատ հպարտ, շատ դեղեցիկ նոյնիսկ՝ իրաւութեամբ
մը, առանց որեւէ հոետորութեան : Ծիշդ է, որ չկրցաւ կառավարել
սիրտը մամուլի մէջ անող ցաւին անմեծելի ճնշումը, ոսկորները
ճմուռ-ճմուռ կոտրաող ու դլուխը շրջուած թասի մը նման իր առ-
ջին դնող պտոյտին ստրաւփը դիմաւորել, բայց չինկաւ իր հպար-
տութեանէն : Լացաւ՝ ո՛չ թէ օր մուրալու, այլ աշխարհէն զատուելու
համար սա տանջանքը վերջին անգամ մըն ալ հանդուրժելու ստիպ-
ւած ըլլալուն : Անիկա աստապեցաւ քրտինքին արամանդակուա պատա-
մունճանէն, ստոի պէս, որ ըրաւ փշրուած ալիւր ու ցանուած իր մի-
սերուն, մագերէն մինչեւ եղունգներուն ծայրերը, թէեւ պիտի փա-
փաքէր լուս մեկնիլ սա աշխարհէն : Անոր գլխուն, Սոնա Գոհարեան
պիտի ուզէր քիչիկ մը դոյն, անոր դէմքին մեղրամոտեան դալիու-
թիւնը բարեխառնող : Ան պահեց իր միտքին աչքը ո՛չ միայն բուր-
բուրի բաց, այլեւ տեսաւ թերեւս իր ուզած ամէնէն անուշ ալ երա-
զը, այդպէս փափուկ, կնոջ մը կերպարանքին մէջ, հակած իր հատ-
կըտուն շունչին վերեւ, ամբողջ խոովք ու քաղցրութիւն, դէպի
պարապը, դէպի անհուն զինքը դնող նայուածքին մէջ ըսելով ա՛ն՝
զոր չէր տեսած աշխարհը :

Ի՞նչ եղան անոր աչքերը, բայց իրաւ : Առաջին երեք քառորդը
մենք կու տանք հետագայ էջերուն մէջ, իրենց շահեկանութեանը
հաշուոյն, բացառիկ այս մարդը ամբողջութեամբ հասկնալու հա-
մար : Ըսի, թէ քառորդները կը մնային Հասողութեանը մէջ անոր
տաղանդին, անոր դրականութեան խորագոյն իմաստին ու նաեւ աս-
նոր կեանքին : Անրբիւր վեր էր անոր տաղանդէն : Այդ քիչ տեւողու-
թեան ընթացքին Մահակ Պարզեւեան անորակելի բան մըն էր : Անոր
բոլոր անձը փախաւ անկէ : Ատիկա զգացին, տարօրէն յստակ, զինքը
չըջապատողները : Այդ շքեղ մարդէն մնացածը քրտինքներու մէջ լո-
զացող կարո մը միտ, լուս՝ ինչպէս խլուրդ մը հոգին սիրտը : Անի-
կա սուղուեցաւ յաւիտենութեան մէջ իրբեւ մէկը, որ ճիտէն կախ
մը կը մտնէ լուրերուն ծոցը : Առանց դերասանութեան :

(Շար . 24) ՅԱՆՈՒՅ ՕՇԱԿԱՆ



Բ. Փ Ա Փ Ա Ջ Ե Ա Ն

**ԱՆՅՆՈՂ ԿԱՐԻՐԱՄԵԱԿԻ
ԿԱՅ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԿԵՒՈՐ ԶԵՂԵԼՈՒ ՓՈՐՁ ՄԸ**



*Անդառաջանալ դրականութեան մը կշիռին, կը նշանակէ որոշ կշտա-
քարեր ու շափանիչներ զործածելով արժեւորում մը կատարել:*

*Տարբեր շափանիչներ բնականաբար պիտի առաջնորդեն տարբեր ար-
դիւնքներու: Ուստի՝ անհրաժեշտ է նախ ապա որոշ սահմանումներ, կատա-
րել կարգ մը յիշեցումներ, նախ քան բուն կշտադատումը կատարելը:*

*Ամէն ազգ, ամէն ժողովուրդ ունի իր մշակութային իւրայատուկ ըս-
տեղծագործութիւնները, որոնք զինք կը յատկանշեն: Այդ ստեղծագործու-
թեանց արժեւորումը կրնայ կատարուիլ զանազան մեկնակէտերով, իրարմէ
տարբեր մակարդակներու վրայ: Պայման չէ, որ բոլոր ժողովուրդներն ալ
Եէյզովիթի մը կամ Տոթոեւսկիի մը ծնունդ տան: Ընդդէ, որ Ձեխով մը,
Իբսէն մը, Փիրանտելլո մը կը հարստացնեն ո՛չ միայն իրենց ազգին մշակու-
թը, այլեւ՝ համայն մարդկութեան. ատիկա չի նշանակեր սակայն, թէ ար-
ժէք ունենալու համար, մշակութային ստեղծագործութիւն մը պէտք է ան-
պայման արժէքաւոր ըլլայ իր համամարդկային տարողութեամբ: Ժողովուրդ-
ներու կեանքի պայմանները, անոնց պատմութեան ընթացքը կը տարբերին
իրարմէ. ու այդ իրողութեան բերումովն իսկ կարելիութիւնները եւ ձեռք
բերուած արդիւնքները տարբեր կ'ըլլան, ըլլայ ընկերային, ըլլայ քաղաքա-*

կան, անտեսական կամ մշակութային մարզերուն մէջ: Հասարակածային անտեսները հասարակածի տակ միայն կրնան ըլլալ եւ ձնծաղիկը ձիւնածածկ երկրներու զարնան միայն կրնայ բացուիլ:

Անհրաժեշտ է մշակութային ստեղծագործութիւնները դատել, զանոնք առնելով իրենց իրենց եւ իրենց ծնունդ տուող միջավայրին մէջ: Միայն պիտի ըլլալ տեսարար համեմատել այս կամ այն մշակոյթի ստեղծագործութեանց հետ. արուեստի ստեղծագործութեանց արժէքները չեն զար միջազգային արժէք տւնցող այս կամ այն գործին նմանելէն, կամ զայն կտակելէն. ոչ ալ կրնան գալ բոնագործիկ ձեւերով ուրիշներէն տարբերելու իր ճիւղէն: Արուեստի նախապայմանը անկեղծութիւնն է: Ոչ թէ անկեղծութիւն կեղծող անկեղծութիւնը, անկեղծութեան պատրանքը տուող բոնագործիկ արտասայտութիւնները, որոնք այդ իսկ պատճառով կը դառնան կեղծիք, այլ՝ զբաղէտի էութիւնէն ժայթքող, անզսպելի մղումով պոռթկացող ներքին ճշմարտութիւններու անկեղծութիւնը, որ անմիջապէս զգալի կը դառնայ:

Ստեղծագործութիւնները անհրաժեշտ է կշռադատել իրենց արուեստին չափանիշներով եւ իրենց ծնունդ տուող միջավայրի պայմաններով: Նարեկացի արժէք է ինքն իր մէջ, ինքն իր համար եւ ոչ թէ Տանդէի հետ համեմատած:

Արուեստի բոլոր ճիւղերուն մէջ ալ, եւ աշխարհի ամէն կողմ, բոլոր ժողովուրդներուն համար ալ շփումներն ու փոխադարձ ազդեցութիւնները կարեւոր են. եւ կարելի է, մինչեւ իսկ անհրաժեշտ է որոշ ձեւի համեմատութիւններ կատարել, մասնանշելու համար աղբիւրներ կամ կրօն ազդեցութիւններ, կամ կարեւոր տարբերութիւններ, համանման այլ գործերու հետ. սակայն արուեստի գործին արժէքը հիմնականին համար, ինքն իր մէջ պէտք է գոյութիւն ունենայ եւ այլոց հետ համեմատելով չէ, որ պիտի մեծնայ կամ արժեզրկուի:

Դժբախտաբար, մեր գրական քննադատներուն մեծ մասը, մեր գրականութիւնը արժեւորելու իր պարտաւորութեան գործադրութեան ընթացքին յաճախ կը գործէ հիմնական նշանակութիւն ունեցող երկու սխալներ, որոնց հետեւանքները ծանրակշիւ են նոյնինքն գրականութեան, արժէքաւոր գրականութեան ծնունդի տեսակէտէն:

Առաջինը՝ չափազանց ներդաշնակ մօտեցումի սխալն է: Հայ գրողներու ստեղծագործութիւնները արժեւորելու համար յաճախ կը գործածուին արուեստի շատ փոքր չափանիշներ. երբեմն ալ ամբողջովին կ'անտեսուին այդ չափանիշները: Նկատի ունենալով հայ կեանքի, սփիւռքահայ կեանքի պայմանները, այդ բոլորին հետեւանք եղող, գրական անդաստանին մէջ առաջացած որոշ ամայութիւնը, յաճախ զբաղէտի անուն կը շնորհուի այն գրողներուն, որոնք յուզական այլեւս ատալացնելով՝ կը յաջողին որոշ զգացումներով վարակել ընթերցողը, առանց նկատի առնելու ստեղծագործական աշխատանքի համար անհրաժեշտ բախնդիր մօտեցումին բացակայութիւնը: Մեր մամուլի էջերուն, մեր դպրոցներէն ներս յաճախ տեղ կը գտնեն դնահատանքի անտեղի շաշուամեր. բան մը, որ շիրինի «փառք» ապակովեւ լով այս կամ այն «հեղինակ»ին, կը գաղբի խթանում մը ըլլալէ դէպի արուեստի իրական արժէքներու բարձունքները:

Ըսել չեմ ուզեր, թէ ամէն գովասանք եւ դնահատում վնասակար է: Կը մերժեմ միայն դիւրահաւան մօտեցումները, համեմատական արժէքները իրական արժէքներուն հետ շփոթելու ընթացիկ մօտեցումը: Գրականութիւնը պէտք է կշռադատուի անխարդախ կշռաքարերով:

Երկրորդ սխալը, որ յաճախ կը գործուի, ամէն գնով կերտական գրականութիւնը արուեստի միակ չափանիշ համարելու սխալն է: Ըսել չեմ ուզեր, թէ կերտական գրականութեան մէջ արուեստի մեծարժէք գործեր չկան. կան, եւ շատ մեծ թիւով. սակայն Եւրոպայի մէջ դիր ու գրականութիւն առաջանալէն զարեւր առաջ, այլ ժողովուրդներու ժօտ դիր, գրականութիւն եւ մշակոյթ զարգացած է, առանց կերտականի ազդեցութիւն կրած ըլլալու: Ծիշչ չեմ գտնիր ամէն ինչ կերտական գրականութեան հետ համեմատելով կըտադատելու եղանակը. ազգայինը արհամարհելով միայն միջազգային բարձունքներու հասած գրականութիւնը արժեւորելը:

Ծիշչ է, որ «Կեցցէ Արարատը» գրելով անպայման արժէքաւոր գրականութիւն մը ըրած չենք ըլլար: Նոյնքան ճիշդ է սակայն, որ «Կեցցէ Արարատը» պարունակող գործ մը չի կրնար այդ պատճառով իսկ գրական արժէքէ զուրկ համարուի: Գրական արժէքը, արուեստի արժէքը անկտի է այդ բոլորէն. այլ սեղ պահուած է:

Ամէն գրող ազգային պատկանելիութիւն մը ունի եւ ազգային մշակոյթի ծառայութիւն մը, իւրաքանչեւ հարստութիւն մը, որ զարեւրէն անցնելով հասած է իրեն: Եթէ արեւէ այլ հարստութեան ծանօթութիւնը չունենայ, առնուազն իր գործածած յեղուն իր ազգին մշակութային հիմնական նուաճումն է, եւ այդ միջոցով է, որ արուեստագէտը, այս պարագային՝ գրական արուեստներու մասին է խօսքը, պիտի կարենայ իր ներքին հարստութիւնը յայտ աշխարհ բերել: Եւ արովհետեւ հեղինակին իւրաքանչեւ նը ամէն բանէ առաջ իր ուրիշներէն տարբեր ըլլալու իրողութիւնէն կու դայ, իր անկեղծութեան ճամբան, իր սեփական գոյութիւնը պայմանաւորող սրբանշնորուն բերած կարելիութեան եւ սահմանափակումներուն անդադառնալու ճամբան է:

Մարդը ինքն իր մէջ, ինքն իր հետ տնկեղծ՝ ամէն բանէ առաջ՝ իր նեղ ըրջագրային հետ ու անոր մէջ անկեղծ. իր արտայայտութեանց մէջ ամբողջականորէն անկեղծ - ահա արուեստագէտի միակ ճամբան, հասնելու համար համամարդկային արժէքով մեծութիւններու: Սակայն եթէ մինչեւ իսկ չհասնի այդ լայն սահմաններուն, իր սեփական ժողովուրդին, իր ազգի մշակոյթին մէջ արժէքաւոր սեղ գրական իսկ պիտի բաւէ արուեստագէտ զրագէտին:

Եւրոպացի կապկէլ փորձելը, ամէն գնով կերտական մշակոյթը ներառելու արուեստական ճիշդիւր չեն կրնար արուեստի ճշմարտութեան հասցընել հեղինակը:

Ինչպէս որ կերտական ազդեցութիւններ կրած ըլլալը չ'արժեղիկեր արուեստագէտ հեղինակը, երբ այդ ազդեցութիւնները իր սեփական ներաշխարհին մէջ թափանցած եւ միախառնուած են իր էութեան:

Սեփական ժողովուրդն ու սեփական միջավայրն ալ կը բաւեն արժէքաւոր արուեստի գործեր արտադրելու համար, եթէ միայն արուեստագէտի հոգեկան աշխարհը կայ եւ համապատասխան բնախնդրութիւնը տեսարար ներկայ է:

Հայրենաբաղումութեան ու կարօտի մասին անգլիացի կամ ֆրանսացի չի կրնար այնպէս գրել, ինչպէս հայը. անոնց լեզուին մէջ այդ բառերը չկան արդէն. ինչպէս որ հայերէնի մէջ ալ չկան այլ բառեր կամ այբուսեր, որոնք կրնան սպանացիին ու գերմանացիին յատուկ ըլլալ: Պէտք է ըլլալ ա՛յն՝ ինչ որ ենք մեր ծնունդով, միջավայրով, դաստիարակութեամբ, կրթութեամբ ու ճանա մեզի յատուկ մշակոյթով:

«Տաստասուսկիմ, անշուշտ հանճարնդ է, — կը գրէ Կոստան Զարեան, «նաւը լիբան վրայ» գործին մէջ, — բայց նա ինձ համար բարբառովիմ օտար է: Ես թափառում է հոգեկան անգուցնների շուրջ, հիւանդատ ուրուակամի նըման. տանջում է հարցերով, որոնք մեզ համար, հայերիս համար, գոյութիւն չունեն:

— Այդ ցոյց է տալիս մեր խեղճութիւնը...

— Ձեռնայն ցոյց է տալիս մեր ուժը: Մենք պարզապէս պատկանում ենք տարրեր հոգեկան մի ցեղի... Մենք արեւի, պայծառութեամ, յստակութեամ, մերդաշնակութեամ ձգտող ցեղ ենք... Մեր խորքովն ու ճեղով դասակամ ենք. եւ այդ է պատճառը որ անաւոր ռզերգութիւններին անցել ենք, միշտ մեր հոգեկան միութիւնը պահելով...»:

Հայ թատերական գրականութեան արժեւորումը կատարելու տունն Հարկադրաբար նկատի պիտի առնուին ազգային իւրայատուկ պայմանները. սակայն միտմաննակ անւարար ներկայ պիտի ըլլան թատերագրական արուեստի հրամայականներն ու կշռաքարերը:

Նախ քան շարունակելը, անհրաժեշտ է ճշդել նաեւ, թէ հակառակ ներկայ փորձի վերնագրին, անկարելի է հայ թատերական գրականութեան անցնող հարկադրամակի ամբողջ արտադրութիւնը ենթարկել կշռադատումի. որովհետեւ բազմաթիւ դործեր անհետ կորուսած են, անունները միայն կը յիշատակուին այսօր, եւ կարելի չէ յուսով գանոնք ձեռք ձգել ու կարողալ, զէթ մեր, սփիւռքեան պայմաններուն մէջ: Ուստի՝ հարկադրաբար, ներկայ փորձը պիտի ունենայ անխուսափելի ստեմանափակումներ ու թերիներ:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՒ ԶԱՆԱԶԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԱՐԹԻՔՆՆԵՐԸ

Թատերական գրականութիւնը գրական զանազան սեռերէն ամէնէն զբւարին է: Այդ պատճառով ալ, մատերու վրայ կարելի է հաշուել մնացուն արժեքներով թատերագիր հեղինակներն ու դործերը. մինչ շատ աւելի մեծ է թիւը մեծարժէք վիպասաններուն կամ բանաստեղծներուն:

Թատերական դործ մը բեմ բարձրանալով է, որ կը հասնի իր լրիւ արտայայտութեան: Թատերակ մը ընթերցանութեամբ կրնայ ըմբռնելիք ըլլալ, սակայն թատրոնի սրտին մէջ մէկտեղուած հանդիսականներու հետ, բեմին վրայ թատերակի մարմնաւորումներով է, որ անիկա իր ամէնէն ազդու հաղորդականութիւնը կը դնէ:

Այդ պատճառով ալ, թատերագրութիւնը, շատ աւելի հարկադրաբար, քան գրական այլ սեռերը, պարտի իր ժամանակին հետ զայլ պահել, իր հանդիսատեսներուն ժամանակաշրջանը յուղող հիմնական հարցերուն արտայայտելը ըլլալ:

Թատերագրական արժէքը, սակայն, ժամանակները արտայայտելուն մէջ չի կայանար. օրաթերթերը, պարբերաթերթերը, ընկերային, փիլիսոփայական, քաղաքական ու զանազան ձեւի այլ ուսումնասիրութիւնները եւս իրենց ժամանակակից հարցերը կը յուզեն:

Թատերական գրականութիւնը ունի իր օրէնքները, իր շահանիշները եւ իրեն յատուկ արտայայտութեան միջոցներ, որոնց յարգուիլը կամ ոչ, հարտարօրէն օգտագործուիլը կամ ոչ, դործին կը բերեն արժէք կամ, ընդհակառակն, կարծիքրկեն դոյն:

Եւ ինչպէս գրական բոլոր սեռերուն համար, նաեւ թատերագրութեան

պարագային, ստեղծագործութիւնը աւելի մեծ ու մնայուն արժէք ձեռք կը բերէ, երբ արուեստագէտ հեղինակը կը յաջողի, ժամանակակից հարցերու ճամբով, խորանալ մարդկային էութեան մէջն աշխարհներուն մէջ եւ դուրս բերել անկէ մնայուն, ընդհանրական տարրեր, որոնք ճշմարիտ են ո՛չ միայն ժամանակակիցներուն համար, այլեւ՝ ժամանակէն ալ անդին, մինչեւ անգամ դարեր հաջ, ինչպէս է պարագան, օրինակ, Շէլլերի «Գեղարվեստի Գեղարվեստը»-ն է արդէն:

Քատերական արուեստի տեսնկիւնէն՝ Քատերական երկերը ուրեմն կարելի է ենթադրել հետեւեալ արժեւորումներուն.—

1.— Մնայուն եւ համամարդկային արժէքով գործեր ու հեղինակներ. ինչպէս Շէլլերի «Գեղարվեստը», Մարպէթով, Օթելլոյով:

2.— Ազգային սահմաններու մէջ մնայուն արժէքով գործեր:

3.— Ազգային սահմաններու մէջ միայն որոշ ատեն մը հետաքրքրութիւն ստեղծող եւ արժէք ներկայացնող գործեր:

4.— Նաեւ միջազգային սահմաններու մէջ ատեն մը փնտռուող, հետաքրքրութիւն արթնցնող եւ արժէք ներկայացնող գործեր: Գործեր՝ որոնք թէև միայն իրենց ժամանակակիցներուն համար արժէք են, սակայն, հեղինակներուն արուեստագէտի շունչին եւ արժէքին մերումովն իսկ, որոշ որակ կը փոխանցեն. օրինակ, լեզու, ոճ, պնդագիտական ճաշակ, իւրայատուկ ըմբռնում, եւ այդ ճամբով կը յաջողին գրական ճաշակ զարգացնել, դէպի գրականութիւնը մղող զբոսներ բլլալ:

5.— «Մտածանալիցները», որոնք հրապարակ կու պան հաւանական կարեւորութիւններով, ունին Քատերական արուեստի տարրեր, եւ կարծես թէ պիտի յաջողին օր մը բարձրանալ իրեն արժէքներու բարձունքին. սակայն... կը մնան խոտուած:

6.— Ետևարեր Քատերակներու հեղինակները, որոնք իրենց ժամանակակիցներու հետաքրքրութեան, հանույքի պահանջներուն գտնացում տալու համար, Քատերակներ կը «շինեն» ու կը «ծախեն» ճիշդ այնպէս՝ ինչպէս ուրիշ որեւէ ծախու բան:

ՔԱՏԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԺՈՒԱՐՈՒԹԻՆՆԵՐԸ

Կարելի էր չանդրադառնալ այս հարցին եւ անցնիլ ուղղակի հայ Քատերական գրականութեան արժեւորումին: Սակայն Քատերագրութեան մէջ գոյութիւն ունեցող դժուարութիւնները յաղթահարող հեղինակներն են, որ կը յաջողին բարձրանալ արուեստի սանդուղիներէն ու դառնալ արժէքաւոր հեղինակներ: Այդ պատճառով ալ, կ'օգտնէ ամփոփ կերպով նշել այդ դժուարութիւնները, որպէսզի ըմբռնելի բլլայ, թէ այդ իրողութիւններն ալ ժամանակակիցներու գործերու արժէքը չափող կշիռներն են: Գլխաւոր դժուարութիւնները երեք են՝ լեզու, տիպով, Քատերական գործողութիւններով կատուցում:

ա.— Լեզուի շարժումը.— «Գրական լեզու մը կայ, — կ'ըսէ ձորճ Պետեար Ծօ, — որ սլաք ու հասկնալի է այժերուն համար, որ սակայն անհասկնալի է ակամօքներուն համար. մինչեւ անգամ երբ ամենամեծ յստակութեամբ կ'արտասանուի այդ բառերը: Քատերագիրը իրաւումէ չուրի մեամ լեզու գործածելու»:

Ահա թէ ինչու կարգ մը մեծարժէք հեղինակներ, որոնք տպաւորել են

իրենց լեզուով՝ արձակի կամ չափածոյ գրականութեան մէջ, կը ձախողին, երբ կը փորձեն թատերագրութիւն ընել նոյն լեզուով ու ոճով՝ Յակոբ Օշական, օրինակէ համար: Այս հարցը զիչ մը աւելի կը լուսարարուի, երբ տեղադրանք թատերական տիւրուկի դժուարութեան:

բ.— ՏԻԱԼՈՅԻ ԴԺՈՒՍԲՈՒԹԻՒՆԸ.— Վիպասան Ժան Քօ, որ թատերական գրականութիւն ալ փորձած է, հետեւեալ ձեւով կ'անդրադառնայ թատերական տիւրուկի հարցին.

«Վէպի մը մէջ միշտ ալ կարելի է գտնել միջոց մը, մէջէն ելլելու համար: Կարելի է երկարօրէն նկարագրել զգանկին մէջ փաթարիկ» մը. կարելի է նաեւ ազանակամ պանդակներու մէջ տեղի ունեցածին պէս, ներս բերել ինչ որ ուզես. կարելի է վէպի հերոսներուն վերագրել որեւէ կեցածք, որեւէ վարուելակերպ:

«Վիպասանը միշտ ներկայ է եւ կը հսկէ դժուարութեանց վրայ: Ան սանձած կը պահէ իր աշխարհի մարդիկը եւ տիպիկին ազատութիւն կու տայ միայն այն ստեղծ, երբ իր գործին կու գայ: Քանի մը խօսակցութիւն, քանի մը պատասխան եւ հո՛փ՝ սանձերը կը քաշէ եւ իր ստեղծած ամենաւարութիւնները վերստին կ'ընթանան ըստ իր հրամաններուն: Եթէ հանոյ է վիպասանին՝ անոնք կը խօսին. եթէ ոչ՝ կտրուկ հարուածով մը վիպասանը կը կտրէ անոնց խօսակցութեան թելը: Մէկ խօսքով՝ հաւաքոյթին նախագահը ինք, վիպասանն է:

«Նման քան չկայ քատրոնին մէջ. նման քան չի կրնար ըլլալ: Անձնաւորութիւնները տիպիկով կ'ընթանան եւ միայն տիպիկը կայ: Խօսքը պարուն Հուսիսիսն է եւ իրեն ալ կը մնայ: Տիկին Մաքսիլէ Եթէ փաթարիկ մը ունի իր գանկին մէջ, ինք պէտք է բացատրէ գայն»:

Կայ աւելին. թատերական տիւրուկը պարզ խօսակցութիւն մը չէ միայն: Կարելի չէ վէպի մը խօսակցութեան զօրինակներու դիմաց անուններ դնելով թատերակ մը ստանալ: Թատերական տիւրուկը շատ աւելի բարդ ու դժուարին արտայայտութեան գործիք մըն է: Տիւրուկը դասախօսութիւն մը չէ, նաեւ մը չէ, հեղինակին մտածումները փոխանցող շարահարկութիւն մը չէ: Տիւրուկը թատերական անձնաւորութիւնը արտայայտող, զայն կազմաւորող, լըրացնող միջոցն է: Ան պարտի բիւի իւրաքանչիւր անձնաւորութեան հոգեմտային իւրայատուկ աշխարհէն եւ արտայայտել անոնց ապրումներն ու տաղանայնիքը, միտմամանակ նպաստելով թատերական գործողութեանց աստիճանական զարգացումին:

Աւելին. ամէն տրամաբիւք գործ երկու տեսակի տիւրուկ կը պարունակէ. մէկը՝ արտաքինը, գրուածը, ունկնդրելին, կրնանք ըսել՝ տեսանելին. միւսը՝ ներքին տիւրուկը, զոր հանդիսատեսը կ'ունկնդրէ լուսթիւններուն ընդմէջէն: Կարենալ տալ շքուած բառերուն տիւրուկը, կը նշանակէ տիւրուկ մը հաստատել հեղինակին եւ Հանդիսատեսներուն միջեւ: Եթէ հեղինակը յաջողած է այդ յարաբերութիւնները հաստատել, թատերական գործը չի կրնար ձախողութիւն մը ըլլալ եւ մինչեւ անգամ մեծ կարելիութիւններ կ'ունենայ մնայուն արժէք դառնալու:

գ.— ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԵԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ.— Թատերագրութեան ընթացքին նկարագրութիւնները, մինչեւ անգամ ըստած նախադասութիւնները չեն, որ արտայայտութեան միջոց են: Եթէ գործողութիւն մը չէ, որ կը զարգանայ բեմին վրայ, ըսուած նախադասութիւններն աւ կասարուող նկարագրութիւնները կը վերածուին դասարկաբանութեանց:

Գործողութիւնները անձնաւորութեանց ներաշխարհին մէջ տեղի ունեցող վերակայումներն ու փոփոխութիւններն են, որոնք տեսանելի կը դառնան անոնց արարքներով, ընթացքով:

Մասնանշեցիկը մաս մը, ամէնէն հիմնականները ոյն դժուարութիւններէն, որոնց պիտի հանդիպի թատերադիրը, երբ փորձէ ստեղծագործել իր երկը: Այս դժուարութիւններուն պատճառով է ահա, որ մատերու վրայ կը հաշուելին մեծարժէք թատերադիրները: Ուստի՝ պէտք չէ պարմանալ, եթէ հայ դրականութեան մէջ մեծ չէ թիւը թատերական արուեստի շահանիշներով արժէքաւոր հեղինակներուն:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ: ԱՆՑՆՈՂ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ԸՆԹԱՑՔԻՆ

Թատերակ մը լրիւ արտայայտութեան կու գայ բեմին վրայ: Ուստի՝ թատերական դրականութիւնն ալ կրնայ զարգանալ միայն հան՝ ուր թատրոն կայ, թատրոն դադող հասարակութիւն կայ:

Հորի չկայ մանրամասնութեանց մէջ մտնելու: Հարցումը ինքնին պիտի բաւէ պատասխանը տալու համար: Ո՛ւր կրնար զարգանալ թատերագրութիւնը հայ ժողովուրդի կեանքէն ներս, անցնող հարիւրամեակի ընթացքին: Հայկական բարձրաձայնակի դաստններուն մէջ: Անկախաբար Հայաստանի մէջ տիրող ազդի մշակութային յեամանցութենէն, գաւառներու կեանքի պայմանները, ինչպէս բոլոր ազգերուն, նաեւ հայ ժողովուրդին համար, չէին կրնար նպաստաւոր ըլլալ թատրոնի գոյութեան, յարտետումին ու զարգացումին: Աշխարհի գրեթէ բոլոր պետութեանց համար նոյնն է պարզապէս. մշակոյթը, մանաւանդ թատերականը, որ զարգանալու համար թատրոններու, մեծ թիւով հանդիրատեսներու կարիքը ունի, կը զարգանայ առաւելաբար մայրաքաղաքներուն մէջ: Եթէ ոչ մայրաքաղաք՝ գէթ մեծ քաղաքներուն մէջ է, որ թատերական արուեստը կրնայ արմատ բռնել ու զոյստանալ: Մոսկուտ, Փարիզ, Լոնտոն, Լինինկրաս, Հոտ, Միլան, Պերլին, Նիւ Եորք, Օսթո. այս քաղաքներուն թատրոններն ու թատերաւէր հասարակութիւններն են, որ կարելիութիւն բնծայած են մեծարժէք թատերադիրներու: Կազմաւորումն են արտայայտութեան. Եէյբուփիբ, Իրսէն, ձորձ Պեռնար Եօ, Պրեյթ, Չեխով, Փիբանտելլո, Ռասին, Մոլիէր, Բորնէյ, Սթրինպերկ, Օ՛նէյ, Թէննէտի Ուիլեմս, Պէլլի, Իոնեօքօ, Օ՛ Գալէյ, Ատամով եւ ուրիշներ մեծ քաղաքներու, մայրաքաղաքներու լոյսերուն տակ ծաղկած են, թատրոններու մթնոլորտին արդիւնքն են:

Բացառութիւն չէր կրնար կազմել հայ ժողովուրդը: Հայ կեանքէն ներս թատրոնի կարելիութիւններ գոյութիւն ունեցած են, 19րդ դարու երկրորդ կէսէն սկսած, Թիֆլիսի, Բաքուի, Պոլսոյ, Իզմիրի, մասամբ ալ Մոսկուայի մէջ: Առաւելաբար Թիֆլիսն ու Պոլիսն էին, որ կրցան թատերական ներկայացումներու, թատերախումբերու, թատերասէր հասարակութեան օճախներ դառնալ եւ այդ ճամբով ալ թատերագրութեան ծաղկման նպաստող մթնոլորտ առաջացուցին:

Սփիւռքի պայմաններուն մէջ այդ դերը վերապահուած է Պէյրութին:

Գաւառի Հայութիւնը ամբողջովին զրկուած չէ եղած թատրոնէ ու ներկայացումներէ, սակայն այդ ներկայացումները պատահական ընդթ ունեցած են եւ հրամցուած ճիւղերը ազգային-պատմական, կամ եկեղեցական սուրբերու կեանքին կապուած ճիւղերու սահմաններէն անդին չեն անցած:

Պէտք է նշել՝ ի նպաստ Թիֆլիսի գոյութիւն ունեցող կարեւոր տարրերութիւնը, համեմատած Պոլսոյ Այգ տարրերութիւնը, իր մշակութային երեսով եւս, քաղաքական պայմաններու տարրերութեան արդիւնք էր:

Թուսական տիրապետութեան ասկ անցած հողերուն վրայ ապրող հայութեան մտաւոր զարգացման կեդրոնը դարձաւ Կովկասի մայրաքաղաքը՝ Թիֆլիս, Հայաստանի հողէն դուրս. թէեւ շատ մօտ անշուշտ հայկական լեռնաշխարհին, գաւառներուն ու գիւղերուն: Պէտք է աւելցնել նաեւ, որ 18րդ դարուն Թիֆլիսի բնակչութեան մեծամասնութիւնը հայերէ բաղկացած էր: Թիֆլիսը բնականաբար սլիտի կրէր ռուսական ազդեցութիւնը. Խուստտան ինքը, 18րդ դարէն սկսած, արդէն կրած էր արեւմտեան, եւրոպական քաղաքակրթութեան եւ մշակոյթի ազդեցութիւնը: Ուստի՝ Թիֆլիսի մէջ Թատրոնի հանդէպ գոյութիւն ունեցող հետաքրքրութիւնն ու սէրը շատ աւելի արագօրէն զարգացած էր, քան Պոլսոյ մէջ:

Պոլիսը յարաբերութեան մէջ էր առաւելաբար Փարիզի եւ Փրանսական դրականութեան եւ մշակոյթին հետ: Աննպաստ էր, սակայն, զինք շրջապատող, տիրող ժողովուրդի մշակութային մակարդակն ու հետաքրքրութեանց աստիճանը: Թրքական Թատրոնն ալ հայերն է, որ զարգացուցին: Թատրոնի համար ինքնաբերաբար նպաստաւոր միջավայր գոյութիւն չունէր Թուրքիոյ մէջ, պոլսահայութիւնը ինքն էր, որ պիտի ստեղծէր ամէն ինչ՝ եւ Թատրոն, եւ Թատերաւէր հասարակութիւն, եւ Թատրոնի համար նպաստաւոր միջավայր:

Այս պայմաններուն մէջ, Պոլսոյ բեմերուն վրայ, Փրանսական Թատերական դրականութենէն առնուած, Թարգմանուած գործեր են, որ ներկայացուած են՝ թէ՛ Թատերական կեանքի զարգացման սկզբնաւորութեան եւ թէ՛ հետագային: Մինչ Թիֆլիսի մէջ, Թատերական կեանքի սկզբնաւորութեան իսկ — 1850ին Մոսկուայի մէջ տրուած առաջին ներկայացումը Ս. Վանանդեցիի «Արիստակէս» ողբերգութիւնն է եւ ուսանող Ալադաթեանի «Վայ իմ կորած յիսուս քսկի» կատակերգութիւնն է — հայ հեղինակներու եւ անդրական բարձրէն առնուած Թատերակը, որոնք կը ներկայացուէին: Մոսկուայէն ետք, նոյն տարին, Թիֆլիսի մէջ կը ներկայացուին Միքայէլ Պատկանեանի մէկ կատակերգութիւնը՝ «Առցի՛՛նույ», Թիֆլիսահայ կեանքէն առնուած, ապա, նոյն հեղինակին «Մէկը Բշմեծ», Միւսը կին» կատակերգութիւնը: 1860ին՝ Յ. Պարինեանի «Շուշանիկ» ողբերգութիւնը, ապա «Ներսէս Մեծ», «Միհրդատ» Թատերակները կը ներկայացուին: Շուտով ալ հեղինակներ եւս երեւան կու գան: Բոլորն ալ երկրորդական արժէքի հեղինակներ, սակայն յատկանշական երեւոյթ է, որ Թիֆլիսի մէջ առաջին իսկ րոպէէն հայերէն գրուած, հայ հեղինակներու գործերով է, որ կը սկսի Թատերական կեանքը: Այս իրողութիւնն իսկ պիտի ըլլար մեծ նպաստ մը հետագային արժէքաւոր Թատերազիններու եւ արժէքաւոր գործերու ծնունդին:

Պոլսոյ մէջ, նոյն տարիներուն կեանքի եկող Թատրոնին խաղացանկը կը պարունակէր «Փարիզու ազգասններ», «Մէր՝ առանց համարման», «Լիսնի սուրհանդակը», «Նրկու յիսմապետներ», «Արեամ քիծ», «Նեմզ եւ հաւասարմութիւն»: բոլորն ալ Փրանսերէնէ Թարգմանուած, Փրանսական բարձր պատկերացնող Թատերակներ:

Հետագային Պոլսոյ մէջ եւս բեմ բարձրացած են հայ հեղինակներու Թատերակներ, սակայն յատկանշական է Թիֆլիսի եւ Պոլսոյ միջեւ գոյութիւն ունեցող սկզբնական այս տարրերութիւնը, որ բնական հետեւանքն է, անկասկած, երկու քաղաքներուն քաղաքական եւ մշակոյթի տարրերութեանց: Մինչ Թիֆլիսի մէջ ներկայ է օրուան հայկական բարձր բեմ բարձրացնելու

մղում մը, արեւմտահայութեան մշակութային զարթոնքի ու զարգացման օճակին մէջ այդ մղումը կը բացակայի (Յակոբ Պարոնեանն անգամ Փրանսիական բարձրութեան ասիւն տուրք տուած է, քան զուտ պոլսական ասորիային)։ Այս իրողութեան պատճառը պէտք է փնտել մտայնութեանց այն նախադասութեան մէջ, որ զոյսութիւն ունէր Թիֆլիսի հայութիւնը շրջապատող ռուսերուն ու վրացիներուն մտայնութեանց եւ պոլսահայութիւնը շրջապատող թուրք ժողովուրդի մտայնութեան միջեւ։ Մէկ կողմէ՝ ազատամիտ, ազատութեանց ձգտող մտայնութիւն մը, որ կարելի կը զարմնէր Թիֆլիսի հայութեան բարձրութեան, սովորութիւններուն ազատ քննութիւնը, որոշ թեւրութեանց ազատ ծաղկումը հայ հեղինակներու կողմէ, հոգ չէ թէ սկսնակ, ոչ շատ տաղանդաւոր հեղինակներ. ո՛չ միայն բարձրութեան ծաղկումը, այլեւ՝ թատերասէր հասարակութեան կողմէ այդ ներկայացումներուն բնորոշումը։ Միւս կողմէ՝ պոլսահայութիւնը շրջապատող յետամտաց, լատիւնաց պատանդական եւ ճշմոյշ մթնոլորտը, թրջական վարչաձեւի եւ մշակութի հետեւանք, որ թմականաբար կը կաշկանդէր ազատութիւնները եւ կը մղէր գերատաններն ու բնազդիները՝ Փրանսական թատերագրութեան գործերուն դիմելու, որպէսզի առանց դժուարութեանց, առանց անտեղի ջնադատութեանց կարելի ըլլայ ներկայացումներ տալ։

Պոլսութիւն ունեցած անշուշտ արեւմտահայ հեղինակներու կողմէ զբուռն թատերական գործեր եւ, ընդհանրապէս պատմական նիւթերով մշակուած թատերակներ, ինչպէս՝ Թովմա Ռեզեանի «Արշակ Բ»-ը, Տիգրան Գալստեանի «Արա Գեղեցիկ»-ը, որոնք, ի դէպ, երբեմն կ'արդիւնէին թրջական գրաքննութեան օկողմէ, ինչպէս պատահեցաւ, օրինակի համար, 1879ին, «Արա Գեղեցիկ»-ի ներկայացումին առիթով։ Սակայն թուով փոքր էին անոնք, եւ զուրիկ ըլլալով այժմեական նիւթերու առկայուցած հետաքրքրութենէն, բացառիկ ազդանդով մեծարժէք թատերագրերն էր շնորհիւ պէտք ունէին՝ կարենալ վերածուելու համար արուեստի արժէքով թատերակներու։ Միջակութեանց մեղքն մէջ, նման նիւթերը կը վերածուին ազգայնական ըզզացումները շոյող ճատերու կամ արատասնութիւններու, որոնք չեն կրնար կենսունակութեան աւել տալ թատերագրութեան սէր ունեցող երիտասարդներու կամ բեմը սիրող գերատաններու։

Ժամանակագրական կարգով եթէ մտնենալու ըլլանք անցնող հարիւրամեակի ընթացքին հայ թատերագրական գրականութեան զարգացումին, հարիւրամեակը պէտք է բաժնենք չորս շրջաններու։

ա. — Զարթոնքի շրջան, 19րդ դարու երկրորդ կիսու ընթացքին։ Գրականութեան վերագարձումի, վթիւմի շրջան մը՝ թէ՛ արեւելահայութեան եւ թէ՛ արեւմտահայութեան մէջ։

բ. — Փսաներորդ դարու առաջին տասնըփնդամեակը, որուն մէջ կ'իյնայ թրջական ասիմուտագրութեամբ պոլսահայութեան եւ ընդհանրապէս արեւմտահայութեան ձեռք բերած ազատութիւնները՝ դիր-զբականութեան ու թատերան-թատերական գրականութեան խաղաղութեան տեսակէտէն։

գ. — Առաջին Աշխարհամարտը եւ անոր յաջորդած քանի մը տարիները, 1914էն 1922, համեմատաբար, ու հարկադրաբար ամուլ շրջան մը։

դ. — 1922էն 1982 վաթսուամեակը իր երկու բաժիններով՝

- Հայաստանի մէջ,
- Սփիւռքի մէջ։

Յաւակնութիւնը շունչից Սփիւռքի թէ՛ Հայաստանի մէջ գրուած թատերական բոլոր գործերը կարգացած ըլլալու. մասնաւորաբար Հայաստանի թատերագրներու անցնող առանձնակից արտադրած գործերուն հետ ծա-

Եօթննալու տարիքին զրկուած ենք, Լիբանանի քաղաքական դէպքերուն հետեւանքով առաջացած կոցուցիկանց բերումով, դիւր ու գրականութեան առաջումը Հայաստանէն նուազագոյնի իջած ըլլալուն պատճառով: Կը կարծենք, սակայն, կարեւոր համարուած կամ որոշ չափով արձագանդի արժանացած գործերուն ծանօթ ըլլալ, առնուազն Սփիւռքի թատերադերներու ստեղծագործութեանց բաժնին մէջ: Ու այդ բոլորը միացնելով նախորդ դարուն համարուի հասած հեղինակներու գործերուն հետ, արժեւորման փորձ մը կը կատարենք, յուսալով որ ուրիշներ կը մատնանշեն թերիները, կ'իրականացնեն աւելի ամբողջական ուսումնասիրութիւններ:

ՀԱՅ ԹԱՍԵՐԱՎՐՈՒԹԵԱՆ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անցնող Հարիւրամեակի ընթացքին հրատարակուած կամ ընձաղբուած թատերական գործերուն մէջ լայն տեղ կը զբաւեն տեղական բարբերու հետ կապուած, ժողովուրդին անմիջական հետաքրքրութեանց սահմաններուն մէջ ինկող գործերը ու նաեւ, մարդկային բնութեան, ներքին մղումներուն հետ կապուած թատերակները. ուստի՝ աւելի ընդհանրական բնոյթով եւ արժէքով գործեր եւ հեղինակներ:

Առաջին խմբակին մէջ կ'իյնան Գ. Սունդուկեանը, Երբմանդազէն եւ, իր սկզբնական շրջանի գործերով՝ Լ. Եանթը պիտարաբար, Երկրորդ խմբակին մէջ կը զտնուի Լ. Եանթը առաւելաբար եւ Գ. Սունդուկեանը՝ մասամբ:

Անցնող վաթսուն տարիներու ընթացքին թատերադրական բազմաթիւ փորձեր կատարուած են Սփիւռքի մէջ, կարելի է ըսել մինչեւ անգամ, թէ Լ. Եանթի կարեւոր գործերուն մեծ մասը Սփիւռքի մէջ լոյս աշխարհ եկած է՝ «Կայսրը», «Ինկած բերդի իշխանուհին», «Շղթայաւածը», «Օշին Պայլ»: Սակայն Եանթ իր էութեամբ ու կազմաւորումով Սփիւռքի հեղինակ չէ, կը պատկանի 19րդ դարու վերջաւորութեան կազմաւորուած սերունդին, Զարթօնքի շրջանի հայ գրական հարստութեան:

Թատերադրութեան զարգացման նախապայմանը բեմի ու թատերասէր հասարակութեան գոյութիւնն է: Այդ առեւտրները պահուցան Սփիւռքի դպրութիւնէն մեծ մասին մէջ: Համեմատաբար նպաստաւոր պայմաններու մէջ կը զտնուէին իրանահայութիւնն ու լիբանահայութիւնը: Այս երկու դպրութիւններէն լիբանահայութեան դիրիճին մէջ է, որ կարելի եղած է մնայուն թատրոնի մը պահանջը մաս դարձնել հայութեան կեանքին. եւ հետզհետէ աճած է թատերախումբերու եւ թատրոն յոծախող հանդիսատեսներու թիւը: Ուստի՝ լիբանահայութեան մէջ է, որ ամէնէն աւելի մեծ կարելիութիւնները պիտի ըլլային թատերագիրներու առաջացումին եւ աստիճանաբար նուաճումներ արձանագրելուն համար: Եւ կը կարծենք, թէ երեսուն տարուան թատերական յարատեւ ճիգերէն ետք, եօթնասունական թուականներու սկզբնաւորութեան, լիբանահայ երիտասարդութենէն թատերապրութեան սանդուղնեղէն վեր բարձրացողներ սկսան երեւան դալ, սակայն ներքին տակնուվրայութիւնները եկան խանգարելու այդ ընթացքը: Կը հաւատամ, թէ ընթացքը պիտի վերակսի, հիմա որ Լիբանան ոտք կը կոխէ խաղաղութեան եւ հաւանական բարգաւաճումի շրջանէ մը ներս:

Ստորեւ կը յիշատակեմ անունները անոնց, որոնք Սփիւռքի պարբերական մամուլին մէջ կամ առանձին հատորով թատերական գործեր լոյս ընծայած են: Պարզ է, որ ցանկը լրիւ պիտի չըլլայ, վրէպած պիտի ըլլան կարգ մը գործերու անուններ, կամ թերեւս՝ նոյնիսկ հեղինակներ:

Ա.— ԹԱՏԵՐԱԿՆԵՐ՝ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ
 «ՀԱՅՐԵՆԻՔ» ԱՄՍԱԳՐԻՆ ՄԷՋ (1922-1956)

ԵՂԻԱ ԳԱՍՊԱՐԵԱՆ

- 1.— «Իսլիլա», 1926 *Դեկտեմբեր եւ 1927 Յունիս*,
- 2.— «Մուսաբէտ Բ.», 1928 *Փետրուար*,
- 3.— «Սափօ», 1929 *Յունիս*,
- 4.— «Երուսաղէմի մէջ», 1930 *Փետրուար*,
- 5.— «Տրդատ», 1930 *Մարտ*,
- 6.— «Այմ գիշեր», 1931 *Մարտ*,
- 7.— «Շամիրամ», 1932 *Նոյեմբեր-Դեկտեմբեր*,
- 8.— «Երեւանի մէջ», 1932 *Փետրուար*,
- 9.— «Ամուսինը», 1933 *Մայիս*,
- 10.— «Իսրիբ առաջ — Տիգրան», 1934 *Սեպտեմբեր*,
- 11.— «Արշակ Բ.—Փառանճեմ», 1949 *Մայիս-Օգոստոս*,
- 12.— «Մեր գլխուն եկածը», 1941 *Յունիս*,
- 13.— «Աշակերտները», 1936 *Օգոստոս*,
- 14.— «Մարթա», 1935 *Հոկտեմբեր*,
- 15.— «Սէրը յաղթական», 1938 *Փետրուար*,
- 16.— «Քըզ մեզ աղէկները», 1944 *Մարտ-Ապրիլ*,
- 17.— «Կոյրն ու անդամալոյծը», 1954 *Յունիս*,

Ա. ՍԱՐՎԱԶԱՅԵԱՆ (ԱՐՇԱԿ ԶԱՄԱԼԵԱՆ)

- 1.— «Նահապետ Նահապետեան», 1933 *Օգոստոս-Նոյեմբեր*,
- 2.— «Գծից դուրս», 1934 *Նոյեմբեր-Դեկտեմբեր*,
- 3.— «Տարբերքի ընդլզումով», 1932 *Հոկտեմբեր-Դեկտեմբեր*,

ՏԱՐԱԳԻՐ

- 1.— «Մարի Ալմոյեան», 1930 *Հոկտեմբեր-Դեկտեմբեր*,
- 2.— «Ռօֆսէլանա», 1933 *Դեկտեմբեր-1934 Մարտ*,
- 3.— «Գաւանդակ տարի յետոյ», 1937 *Յունիս*,

ՌԱՖԱՅԷԼ ԶԱՐԴԱՐԵԱՆ

- 1.— «Երեմի եղբայրներ», 1923 *Օգոստոս*,

ՀՐԱՆԻ Ք. ԱՐՄԷՆ

- 1.— «Մամոնա», 1925 *Մայիս*,

ՂԵՒՈՆԻ ՄԵԼՈՅԵԱՆ

- 1.— «Դաւոյի դաւաճանութիւնը», 1923 *Մայիս*,

ՅԱԿՈՒ ՄՆՁՈՒՐԻ

- 1.- «Նազար», 1929 *Դեկտեմբեր*,

ԼԻՊԱՐԻՏ ՆԱԶԱՐԵԱՆՑ

- 1.- «Երբ մառախուղը կ'իջնէ», 1923 *Նոյեմբեր*,

Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

- 1.- «Իսկ այրողները», 1924 *Մայիս*,

ՎԱԼԱԿ ՎԱԼԱԿԵԱՆ

- 1.- «Եզնի համար», 1925 *Յունուար*,
- 2.- «Դրախտում», 1927 *Յունուար*,
- 3.- «Մարտէոս վարդապետ», 1930 *Հոկտեմբեր-Դեկտեմբեր*,

Ն. ՏԵՍԹԷԿԻԼ

- 1.- «Եկաւորները», 1924 *Յունուար*,

ԱՐԱՄ ՎՏԱՐԱՆԴԻ

- 1.- «Սերաստացի Մուրատ», 1951,

ՍՐԻՆԳ ՓՈՒԻԿԵԱՆ

- 1.- «Յուզիք», 1924 *Նոյեմբեր-Դեկտեմբեր*,

ԱՆՈՒՇԱԻԱՆ ԴԻԼԱՆԵԱՆ

- 1.- «Շամիրում», 1936 *Դեկտեմբեր-1937 Յունուար*,
- 2.- «Մեծն Տիգրան», 1940 *Նոյեմբեր* եւ 1941 *Յունուար*,
- 3.- «Պայքար», 1934 *Ապրիլ-Օգոստոս*,

ԿԱՐԷՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ

- 1.- «Վերածնունդ», 1935 *Օգոստոս-Սեպտեմբեր*,

ՀԱՄԱՍՏԵՂ

- 1.- «Քրիստոսի երկրորդ գալուստը», 1942 *Մայիս-Դեկտեմբեր*,
- 2.- «Հայաստանի լեռներու սրնգահարը», 1944 *Նոյեմբեր-Դեկտեմբեր*.

ԺԵՆԻԱ ԱՐԻՍՏԱԿԵԱՆ-ՊՈԼԵԱԿԻՆ

- 1.- «Շանգհայի գեղեցկուհին», 1937 *Մարտ-Յունիս*,
- 2.- «Մարի Մառլէն», 1946 *Սեպտեմբեր-Դեկտեմբեր*,
- 3.- «Երգ-երգոց», 1957 *Մարտ-Օգոստոս*,
- 4.- «Կարապի երգը», 1938 *Դեկտեմբեր-1939 Փետրուար*,

ՅԱԿՈՒ ՕՇԱԿԱՆ

- 1.— «Երկինքի ճամբով», 1936 *Ապրիլ-Յուլիս*,
- 2.— «Մինչև քաղ», 1939 *Յունուար-Մարտ*,

ԷԼԼԵՆ ԲԻԻՋԱՆԿ

- 1.— «Խաղաղութեան համար», 1936 *Սեպտեմբեր-Հոկտեմբեր*,
- 2.— «Թննուկը», 1939 *Հոկտեմբեր-Դեկտեմբեր*,
- 3.— «Մեր աշտարակը», 1949 *Յուլիս-Սեպտեմբեր*,

ՆՇԱՆ ՊԷՇԻԿՔԱՇԼԵԱՆ

- 1.— «Կարևոր ժողով մը», 1937 *Սեպտեմբեր*,
- 2.— «Սասկալի նազար», 1939 *Յուլիս-Սեպտեմբեր*,
- 3.— «Վերջալսյալ արծիւներ», 1956 *Նոյեմբեր-Դեկտեմբեր*,

ԱԻՆՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

- 1.— «Ոսկի հեփթաբ», 1937 *Դեկտեմբեր-1938 Յունուար*,

ՆԻԿՈՂ ՆԻԿՈՂԵԱՆ

- 1.— «Արևացայտի ճամբան», 1939 *Մայիս-Յուլիս*,

ՄԱՆՈՒԷՂ ՄԱՐՈՒԹԵԱՆ

- 1.— «Կամիրոս», 1939 *Մարտ-Ապրիլ*,

ԱՐՄ. ՓՈԽԱՐԵԱՆ

- 1.— «Զոհարերութեան հաճապարհին», 1940 *Փետրուար-Մարտ*,

ՎԱՀՐԱՄ ՏԱՏՐԵԱՆ

- 1.— «Մահուան դուռ», 1940 *Դեկտեմբեր-1941 Փետրուար*,

ԱՐԱՄ ԱԼՋՈՋՈՒԳԵԱՆ

- 1.— «Բնաւերները», 1956 *Մարտ-Մայիս*,

ՀԱՅՈՐԳԻ

- 1.— «Դաւամանութիւն», 1941 *Օգոստոս-Սեպտեմբեր*,

ԴԵՐԱՍԱՆ ԱՆԻՐԱՆԻԿ

- 1.— «Պապը», 1945 *Մարտ-Ապրիլ*,

ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ

- 1.- «Վերադարձ Հայաստանէն», 1953 Յուլիս,

ԲԻԻԶԱՆՆԻ ԿՈՒՆԵԱՆ

- 1.- «Այս է մեր կեանքը», 1953 Նոյեմբեր-1954 Փետրուար,

ԼԵՒՈՆ ՇԱՆԹ

- 1.- «Կայսրը» (նախարան), 1923 Մարտ,
- 2.- «Ինկած բերդի իշխանուհին», 1923 Յունիս,
- 3.- «Օշին Պայլ», 1932 Մայիս:

Բ.— ԹԱՏԵՐԱԿՆԵՐԻ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ
«ԱԿՕՍ» ԱՄՍԱԳՐԻՆ ՄԷՋ

ԺԱԳ ՅԱԿՈՅԵԱՆ

- 1.- «Կռուկը կը կանչէ», 1951 Մարտ,

ՀԱՅԿ ԺԱՄԿՈՉԵԱՆ

- 1.- «Տեսրականին հետ», 1946 ԺԳ. զէրբ,

ԳԱՍՊԱՐ ԻՓԷԿԵԱՆ

- 1.- «Փառանձեմ իշխանուհին», 1944, Ա. զէրբ,
- 2.- «Փառանձեմ քագուհի», 1944, Գ. զէրբ,
- 3.- «Փառանձեմ», 1948, ԹԻԼ 4:

Գ.— ԹԱՏԵՐԱԿՆԵՐԻ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ
«ԱՆԱՀԻՏ» ԱՄՍԱԳՐԻՆ ՄԷՋ

ՊԵՏՐՈՍ ԶԱՐՈՅԵԱՆ

- 1.- «Ոստայնը», 1929, ԹԻԼ 1:

Դ.— ԹԱՏԵՐԱԿՆԵՐԻ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ
«ԱՆԻ» ԱՄՍԱԳՐԻՆ ՄԷՋ

ՊԱՐՈՅԻ Զ. ՄԱՍԻԿԵԱՆ

- 1.- «Որբուհին իսչը», 1925, ԹԻԼ 6 և 7:

Ե.— ԹԱՏԵՐԱԿՆԵՐ՝ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ
«ԲԱԳԻՆ» ԱՄՍԱԳՐԻՆ ՄԷՋ

ՀԱՄԱՍՏԵՂ

- 1.— «Համարյրը», 1974 Յունուար-Փետրուար (Թատերգութեան վերածննդ՝ Բ. Փափազեան),
- 2.— «Ազատեիները», 1974 Յունուար (Թատերգութեան վերածննդ՝ Բ. Փափազեան),

Զ. Մ. ՈՐԲՈՒՆԻ

- 1.— «Թուրքականությունը», 1974 Մարտ,

Յ. ՆԱԳՈՒԼԵԱՆ

- 1.— «Անմարմիններ», 1974 Ապրիլ,

Մ. ԻՇԽԱՆ

- 1.— «Աստղաբանին հյած մարդը», 1979 Մարտ-Յունիս,
- 2.— «Փամագրություն», 1980 Յունիս,
- 3.— «Մշակոյթի պահակներ», 1983 Ապրիլ-Յունիս:

ԷՆՈՒ ԿԱՄԱՐ

- 1.— «Դէպի արդեալ գրականութեան հեղինակներ», 1981 Փետրուար,
- 2.— «Հոգալ գաւակ», 1981 Մայիս-Օգոստոս:

Զ.— ԹԱՏԵՐԱԿՆԵՐ՝ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ
ԱՌԱՆՁԻՆ ՀԱՏՈՐՆԵՐՈՎ

| | |
|------------------|----------------------------|
| Լ. ՇԱՆԹ՝ | «Շղթայաւածը», |
| Գ. ԻՓԻԿԵԱՆ՝ | «Արա եւ Շամիրամ», |
| ԶԱՓՐԱՍՏ՝ | «Մեծն Տրդատ», |
| Զ. ՄԵԼՔՈՆԵԱՆ՝ | «Սիրոյ ցանցին մէջ», |
| Ն. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ՝ | «Մմբաս Բ. եւ Նարեկացի», |
| Մ. ՊԶԱՔՃԵԱՆ՝ | «Անկարելի կարելի», |
| Մ. ԻՇԽԱՆ՝ | «Մեռնիլը որքա՞ն դժուար է», |
| » | «Աստղաբանին հյած մարդը», |
| » | «Թատերախաղեր»: |

ԲԱԳԻՆ ՓՈՓՈՋԵԱՆ

(Շար. 1 եւ մնացեալը յաջորդիւ)

Լ. Մ Կ Ր Տ Ջ Ե Ա Ն

ՈՒՄՂԵՆ ԴԵՐԱԲԵՐՈՒՄ ԶԱՐԵՆՑԻ

1936Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27Ի ՏՈՂԵՐԸ

1983 թուին Երևանում լոյս ածաւ Եղիշ Զարենցի «Անտիպ եւ չհաւաքուած երկիր» վերնագրով սառար գիրքը, որիւ լրացում 1962-1968 թուականների ընթացքում հրատարակուած վեց հատորանոց «Երկրի ժողովածու»ի Այժմեան լրացուցիչ գրքի բնագիրը տպագրութեան է պատրաստել եւ ծանօթագրել բանաստեղծի դուտար Անահիտ Զարենցը, հրատարակութեան գործին այս կամ այն շաբոյ մասնակցած շատ ուրիշների ուղեկցութեամբ:

Հայաստանեան գրական մամուլում, մինչեւ Հիմա արդէն այլեւայլ առիթներ են եղել անդրադառնալու բանաստեղծի յատկապէս 1934-37 թուականներին գրած երկերի հակատարբին: Իսկ «Անտիպ եւ չհաւաքուած երկիր»ը լոյս ընծայելու Հանդամանքների վերաբերեալ աւելի թարմ ու անմիջական խօսք է առում «Գարուն» ամսագրի 1984ի մայիսեան համարի Համապատասխան Հարցազրոյցում («Զարեանցեան հաւաքուած մասունքներ»): Պարզ է, որ նման մի եղակի հրատարակութիւն չէր կարող չգրուել գիր ու գրքի հետ գործ ունեցող նաեւ շատ ուրիշների հրապարակային ուլադրութիւնը:

Իմ այս փոքրածաւալ յօդուածում, ինքնին հասկանալի է, շատ բան չի կարող արտայայտուել յաւելեալ հատորի ամբողջութեան մասին եւ, ասեմք, կարիք էլ չըկայ: Բայց, մի շարք նկատառումներից ելնելով — այլապէս՝ այսպիսի անհար-

մաք պարագաներ անարձազանգ ու անհետեանք են մտում սովորաբար — յարմար դուայ կանգ առնել 149րդ էջում գետեղւած 14 տողոց մի բանաստեղծութեան վրայ, որը կրում է «7» կախումներ» վերնագիրը: Իսկ յարակից փակագրծում գրուած է՝ «Վ. Վ.ի յիշատակին»: Ի հարկէ, այսպիսի գէպքերում անմիջապէս հարց է ծագում, թէ ո՛ւմ են վերաբերում ընթերցողի տրամադրութեան տակ գրուող տողերը:

Զարենցի երկերում, առհասարակ, անհամեմատ յաճախ կարելի է հանգիպել այդ ու նման կարգի «հանելուկներին», իսկ 1934-37 թուականներին գրածների մէջ՝ առաւել եւս: Եթէ մի պահ պատկերացնենք այն ժամանակի սպառնալուծի միտլորտը, շեշտակի խօսքի վարժ ու սերտհար բանաստեղծի՝ իրերի ճնշման տակ առաւելապէս մութ ու, այլաբանօրէն արտայայտուելու մտական կարիքն ու դրահետ կապուած նուատացուցիչ մտահոգութիւնները, հետագայում քրքրուած ու քայքայուած ձեռագրերը վերականգնելու անհամար դժուարութիւնները, ընդամին պակասոց տողերը, ցրուած բազմակէտերն ու կախման կէտերը, — ապա պարզ կը դառնայ, թէ կիսախօսք ակնարկումներով լեցուն երբեմնի թնճուկները վերծանելու դորձը որքան է բարդանում ներկայումս, ըաղմաթիւ պատմաժակների անցնելուց յետոյ:

Որ բանաստեղծը լիովին գիտակցում

էր իր կացութեան անբնական ու անհան-
դաւրժելի բնոյթը՝ երեսուճ է նրա բազ-
մաթիւ ուղղակի նշումներէց: Այսպէս,
1936ի Յուլիոսին, Ազատի Յանձնանի յիշա-
տակին գրուած «Դոֆին մայրապետ» ար-
հեստներէ շարքէց առաջ գետեզուած է այս-
պիսի մի կտոր (էջ՝ 131):—

9. VII. 1936

.. Կարծես թէ միայն իմնից յուլիոսի,
Այդ քաղաքի օրուանից է, որ
իմ գրած մտնի մի ծառանաւոր
իր միւթի, իր ողջ իմաստի մտածմ,
իր արեւ դրուստապ կամ հշտակապ
կարգալուց առաջ անբառ անտաղ
Մի չոր թուական սկսեց կրել...
Եւ վերնագրերն այդ անբառ, ամանում
Գարձամ մտնումն արեւ տեղ ու
ամնում:

Միեւնոյն մտաւանդութիւնը, այնու-
հետեւ, նոյնքան ու անչի ցայտուն է ար-
տալապուում 147րդ էջում յաջորդաբար
աւզուած երկու այլ կտորներէ մէջ՝—
Առաջինը՝

26. VIII. 1936

.. Եւ ի՞նչ պատահեց կեանքում
արդարեւ,
Որ ձեռքս յամկարծ յօժար, իմֆիքսն,
Իմ գրած բալոր սոգերի վերեւ,
Զոր թուականներ սկսեց գրել...
Եւ վերնագրերն այդ սովորական,
Որ բառեր էին՝ գրուած թանաքով, —
հորիդանիշեր գարձամ մտգական՝
Ինչպէս խայն առաջ — մա՛հ
Յշտակապ

Եւ երկրորդը՝

26. VIII. 1936

Եզե՛լ է արդեօք անցեալում, հնում,
Որ պոետները կրգրի վերեւ
Իր արեւ վերնագրի՝ լոկ թուեր գրեն —
Եւ լինեն գրամք աւելի՛ անտում,
Աւելի՛ խորանկ եւ իմաստաւոր,
Քան հազարներն գրէր հաստաւոր:

Այս վկայակոչումները, իրենց հեր-
թին, աներկբայօրէն ցոյց են տալիս ու
չնշուած, թէ ինչպիսի՛ Հողիմիտակ է
այդքն բանաստեղծը՝ մանաւանդ 1936ի
աշնանը թղթին յանձնած տողերը գրելիս,
եւ թէ ինչպիսի՛ գոյշ ու բազմակողմանի
քննութիւն է պահանջում՝ այդ կարգի
տողերը երբեք վերծանելու նանապար-
հին:

Եւ ահա, գիրքը կարդալու ընթացքում
եւ այդ անաքող ճշմարտութիւնը իւրացնե-
լուց յետոյ, էջ 149ում տեսնում ենք հե-
տեւեալը:—

«7» ԿԱՆՈՒԱԾՆԵՐԸ
(Վ. Վ. ի յիշատակին)

... Երբ աղջտաւզը իմ մա վեր է
կացել,
Հանգիստ հազմուել — երեսի
յանկարծ
Այնպէս է նրան մի պահ թուացել,
Թէ իմքն անապիմ անգամ
Պատանկիւն սազմապոյ արթում
«Եօք կախուածներն» գրքայն է
կարդում:

... Կը ծալի հանգիստ, մի կողմ կը
դնի
Նա սեմտիմնտալ այդ գիրքը
հիմա, —
Կրնկնի անկողնին եւ խո՛ր կը քնի, —
Ինչպէս միշտ՝ իսկոյն:
Եւ ա՛յն է արդեօք,
Տարբերութիւնը գրքի ու կեանքի,
Որ քունն իր հիմա լինելու է լոկ
Անտանա՛ն երկար ե՛ւ խոր, ե՛ւ
հանգիստ...:

(27. IX. 1936)

Ուրեմն, բանաստեղծութիւնը գրուել
է Չարենցին արտաժամ մէկէ՛ Վ. Վ. ի
յիշատակին, երեսակայութեամբ պատկե-
րացնելով նրա գիշերային վերջին նակա-
գրական պահը, զանաւանդ երկար քննից՝
առաջ: Արդ, առանց որեւէ կողմնակի բա-
ցատրութեան ու վերծանման, յենուելով
սոսկ պատմական մերկ տեսալիներ լրջ,
կարելի է անմիջապէս կոտակել, որ Վ. Վ. -ն
այն Վաղարշակ Տէր-Վահանեանն է, որի

կապակցութեամբ եւ արդէն առիթ եմ ունեցել գրելու սոյն հանդէսի էջերում: (Այդ տողերը գրուելու պահին, թէկուզ Հենց զուտ օրացուցային հաշուով, ասակաին միայն Վ. Տէր-Վառնեանի կապակցութեամբ էր կարելի թարմ կորուստին անդրադասնալ ներկայացուող տեսանկիւնից, ոգեկոչելով անոր յիշատակը):

Դրանում ներգուստ համոզուած եմ հարիւր տոկոսով, բայց անհրաժեշտ վերապահութեան սկզբունքը յարգելու համար կանդ եմ աւնում սոսկ 99 տոկոսի վրայ, ջանգի մասնաւոր այսպիսի դէպքերում կտրուկ վճիռը, յամառութիւնն ու կամակորութիւնը որեւէ իմաստ ու կշիռ չունեն: Եթէ մէկնումէկը իսկապէս հիմնաւոր եղանակով էրբեւէ կարողանայ համոզել, թէ բանաստեղծի՝ բուն հասցեատէրն ուրիշ է, այն ժամանակ խորհրդանշական վերապահութեան մէկ տոկոսը կարող է հեշտութեամբ չէզոքացնել ու ջնջել 99ը եւ ինքը հաստատուել հարիւրի ու փոխարինել նրան: Բայց ըրողը տուեալները աւայտ մտւում են, որ վաւերական է Հենց տողերիս գրողի այսօրուայ ինքնաբուխ կռաւումը:

Այդ ենթադրութիւնը աւելի է ամրանում ու հաստատում, երբ այնուհետեւ տեղեկանում ենք զրգի ընդարձակ ծածկութեան թիւնների մեզ հետաքրքրող համապատասխան էջերին (561-563): Այնտեղ ասում է, օրինակ, թէ բանաստեղծութիւնը տպագրում է պահպանուող ինքնագրից, իբրեւ «վերջին վարիանտ»: Իացի այդ, պահպանում են «ճոյն բանատմղծութեան երեք այլ էպոյսայում տարբերանք», որոնցից «Լեւկի վերնագրիմ կից գրուած է՝ (Վ. Վ.—ի յիշատակին), 1936-27. IX. Ծաղկաձոր»: Ծանօթագրութիւնների բաժնում ներկայացուած են այդ երեք տարբերակները: Առաջինից ջայջայւած ու բացակայում են վերնագիրը եւ նաև, երկրորդը լրիւ է (նշանակալի կախման կէտերը չհաշուած), իսկ երրորդը այն է, որին կից փակագծում գրուած է յիշատակութիւնը, թէ ո՛ւմ է վերաբերում այդ իր տեսակի մահախօսականը:

Այդ տարբերակներն այստեղ մէջբե-

րելու կարիք չկայ, թէեւ գրանք ինքնին խիստ պերճաբոս են բանաստեղծութեան ներքին ծալքերը, առանձին տարբերակների տուեալները համեմատելու միջոցով, աւելի հանգամանօրէն վերլուծելու համար: Բայց արժէ թեթեւ կրկնութեան կարգով շեշտել, որ հասցեատիրոջ ինքնութիւնը ճշգրիտ իմաստով տարբերակներն է՛լ աւելի հիմնաւոր ու ցայտուն կռուաններ են պարունակում, քան «վերջին վարիանտ»ը, թէեւ միայն «սոււազուրբիւններ» են հանդիսանում: Ու երեւի դադանիքն էլ դրա մէջ է. նախ՝ «Խում վիճակում» թղթին են յանձնուել «Հեղինակի առաւել անմիջական ազդեցութեան ու պատկերացումները, իսկ յետո՛ւ՝ միայն աստիճանաբար, գրանք «չյղուել», «շրտկուել», «վարացուել» եւ «մատչելի են դարձել» — պատահական ու կողմնակի անկող աչքերի ուշադրութիւնը շեղելու հաւանական նպատակով — ի դէմս տրամագրելի «վերջին վարիանտ»ի:

Այսպէս, օրինակ, եթէ մաքրագրի մէջ յիշատակուող անձը վեր է կենում «տղաւմուղիին», «Խանգիստ հագնում», «Եւագրութիւններից մէկում նա արթնանում է «կեղցիշերին», «շտապ հագնում — կրտսում, կրտարքում», մի այլ տեղ՝ «վաղ աղբամուղիին», «շտապ հագնում յոգեքան, կիսաքան»: Իսկ գաղտնիք չէ, թէ, իբրեւ կանոն, որտե՛ղ եւ ի՛նչ պայմաններում է մարդու վիճակում այդպէս «արթնանալու» «Խագնուել», ըստ բանաստեղծի «օրէնսդրութեան» հանրայայտ սովորութեան...:

Կամ՝ եթէ «վերջին վարիանտ»ում խօսուում է «անսահման երկար ե՛ւ խոր, ե՛ւ հանգիստ» ճնի մասին, «Եւագրութիւններում» նշում է «խուար անձայրաժիր... Մտ...»ը, «զատանցանք», «Քար ծանրութիւնը — յոգնատանց էին», եւ այլն: Դա եւս անմիջակորէն յուշում է, թէ ինչ տեսակի «ճնի» մասին է խօսքը բանաստեղծութեան մէջ:

Կայ նաեւ մի այլ յարակից հանգամանք: Սովորաբար, որեւէ գիտական հրատարակութեան մէջ, բուն բնագրում սկզբնատուներով յիշատակուած անձունք տնունները բացայայտում են ծած-

թաղարութիւններում, եթէ կազմողը վըստահ է և իսկ եթէ որեւէ կամքից անկախ պատճառով անկարելի է լինում բացառաբար, — այդ մասին յայտարարում է բացէ ի բաց, թէ որոնումներն ապարդիւն են մնացել: Եւ ինչ սկզբունքը, բնականաբար, կիրառուած է եւ Չարինցի «Անտիպ եւ շիտախաւած երկեր»-ում: Բայց ահա զարմանալիորէն բացառութիւն է կազմում Վ. Վ.—ի պարազան: Ո՛չ առում է, թէ իրականում ով է նա, ոչ էլ նշում, թէ կատարուած որոնումներն ապարդիւն են մնացել:

Եւ դա, ճիշդն ասած, հասկանալի է: Եւստի՛ այնքան հեշտ է Վ. Վ.—ի ինքնութիւնը կուսակցը, որ նրան շատ երկար որոնելու կարիք չկայ, հետեւապէս դա դիրքը հրատարակողներին կարողութիւնից ոչ մի դէպքում վեր չէ, իսկ նրանք էլ անձամբ չաւարտուած չեն, որ վաւերական յայտնին թաղուած ու անյայտ մնայ: Կամ եթէ, ենթադրեմք անենթադրելին, որոնումներն իսկապէս ապարդիւն են մնացել, սպա որեւէ նուազագոյն պատճառ չկայ խուսափելու դա հրատարակողէն ու անմեղորէն խոստովանելուց: Բայց ահա պէտք է միտածանակ յիշել, որ Վազարշակ Տէր-Վաւանեանի անունը խորհրդային երկրում իստատոյնիս արգելուած անունների ցանկում է դրուում ներկայումս եւ ոչ ոք իրատեսու ու ի միտակի չէ խախտելու այդ ծանրածանր քաբուն: Ուստի եւ, ինքնաբերաբար, նախընտրելի է համարում բացայայտ ու նշանակալի լուսութիւնը, անխուսափելի յաւելեալ դիտարկանքներից կամ բոլորովին կեղծ յայտարարութիւններից ազատ մնալու գիտաւորութեամբ:

Բանաստեղծութեան առանցքային անձի ինքնութեան յափ ուշագրաւ է եւ վերնազերբը՝ «Դ՛ն կախումներ», որի առթիւ ծանօթագրութիւններում ասուած է միտայն, թէ բանաստեղծը նկատի ունի ինքնիդ Անդրէեւի այն պատմածքը, «Երանդ հեղինակը մերկացնում է ցարիզի հաշուելայուղարը յեղափոխականների թրկատմամբ»: Պէտք է ասել, որ այդքանն իսկ բաւական է համարուելու համար, թէ ինչու է Չարինցի յատկապէս այդ պատ-

մբւածքը ընտրել՝ մարդկային կեանքի մի ճակատագրական ու վախճանական պահ ընթացողը կապակցութեամբ, եւ թէ որքան դիպուկ ու գրեթէ անմիջապէս այդ ընտրութիւնը:

Արդ, Լէւնիդ Անդրէեւը մեր դարի առաջին երկու տասնամեակներին հուշակ վայելած ուսումնականների, մասնորէ հայրուով թուարկելի դրողներին թուին է պատկանում: Այն էլ՝ իրրեւ ամէնից շատ միտարկուած, տարրի կողմերից քարկոծուած գրողներից մէկը: Եւ ծնուել է 1871 թ. Օդեսոսի 28ին, Օրելում եւ մտնուածուել 1919 թ. Սեպտեմբերի 12ին, Մուստամարիում (Ֆինլանդիա), տարադրութեան մէջ: Երա 1910-1916 թուականներին տպուած «Երկերի ժողովածու»-ն կազմում է 17 հատորներ: Ստացել է իրաւաբանի կրթութիւն, բայց հուշակ ձեռք բերել հիմնականում գրական ստեղծագործութեամբ, մեն մասամբ փոքր ու միջին ծաւալի արձակ երկերով եւ, մասնաւանդ՝ թատերագրութիւններով:

Անդրէեւի պատմութեանը աչքի են ընկնում մասամբ իրապաշտական, մասամբ էլ տպաւորապաշտական հիւսուածքով, յոռետեսութեան ու յուսահատութեան արտադրութիւնների գերակշռութեամբ: Իսկ այլարանութիւններով լի թատերագրութիւններում ներկայացում են հոգեբանական ու ընկերային կնճիռներ եւ քախումներ: Երա երկերը նախախորհրդային ժամանակաշրջանում թարգմանուել ու հրատարակուել են նաեւ Հայերէն (այդ մասին տես՝ «Հայկական սովետական հանրագիտարան»ի Առաջին հատորը, էջ 394), այդ թուում եւ «Եօք կախումներ»ի պատմութիւնը՝ 1909 թուին, այսինքն՝ առեւերէն առաջին հրատարակութիւնից առկ մէկ տարի անց:

«Եօք կախումներ»ի պատմութիւնը Անդրէեւի առաւել ընտրող եւ ներկայացուչական երկերից մէկն է: Իր գրական գործունէութեան սկզբում, ջանի որ նա յատուկ շեշտ էր դնում ճշտութեանը եւ գրկեալների կեանքը ներկայացնելու ապաշտպանելու վրայ, Անդրէեւը վայելում էր ուսումնասիրող ամէնից ճախակողմեան համարուող շրջանակների ուշագրութեան

նը, Համակրանքն ու անկախութիւնը, սերտ կապեր ունէր, օրինակ, Մաքսիմ Գորկու եւ նմաններէ հետ: Բայց յետոյ այդ դրական վերաբերմունքը աստիճանաբար փոխուեց, ի վերջոյ Հասնելով բոցայայտ Հակառակութեան ու մերժման, մանաւանդ երբ Անդրէեւը իր Հերթին անընդունելի Համարեց լինիլնեան կամայական իշխանութիւնը ու մինչեւ մահ մնաց նրա անհաշտ Հակառակորդ: Մակայն այդ պարագայական ու տարբերակման կարօտ իրողութիւնը չի հերքում այն, որ գրողը ժամանակին անկեղծօրէն զնահատել է նաեւ ըմբոստ ու յանուն կեանքի պայքարի ելած յեղափոխականներին, իր ինքնուրոյն ըմբռնումներէ սահմաններում, եւ բողոքել բռնակալութեան ճնշումներէ զէ՛մ՝ դարձեալ իր տեսանկիւնից:

Յորհրդային ժամանակաշրջանում, որու իրականութեան մէջ Անդրէեւի Հանդէպ պաշտօնական կամ Հասարակական վերաբերմունք է ճշդուել, ի հարկէ, ըստ օրոնայ տիրող քաղաքական մթնոլորտի: Քսանական թուականներին, օրինակ, ասկաւին չէր թաքցում եւ ուրացում Լէոնիդ Անդրէեւն իր ստեղծած գրականութեամբ, իրրեւ պատմական իրողութիւն: Նա իր գործով, ի հարկէ, ի խիտ քննադատում էր, բայց փաստական տեսակէտից չէր այլանդակում: Մինչդեռ ստալինեան դեր-ի: խանութեան տարիներին, պարզ է, այդպէս չէր կարող մնալ կաղուփիւնը: Այդ ժամանակաշրջանի Համար բնորոշ կարելի է Համարել, օրինակի Համար, 1953ին տպուած մի եռաՀատոր Հանրագիտարանային բառարանի Համազատաստեան ժբատ արգելը, ըստ որոնց՝ Լէոնիդ Անդրէեւը ըստ յետադիմական գրող է, 1905-07 թուականներէ յեղափոխութեանը նուիրած նրա երկերում «յեղափոխական պայքարի իմաստը ներկայացուած է խնդաբխրութեամբ տեսուի», նրա ստեղծագործութեան մէջ գարգացուել են Դոստոեւիկու գաղաւթը յետադիմական միտումները: Իսկ դա նշանակում էր, որ նման մի գրողի երկերը ո՛չ միայն չի կարելի փրահարատարակել, այլեւ՝ առՀատարակ կարողաւ, որիւէ առիթով կամ պարագայում:

Յետոտայինեան ժամանակաշրջանում, Լէոնիդ Անդրէեւի նկատմամբ եւ, նոր Հովերի բերումով, պաշտօնական վերաբերմունքը մասամբ ու աստիճանաբար վերանայուեց, սպուեցին նրա որոշ երկեր՝ պատշաճ բացատրական պատարանութիւններով, «գրողի ստեղծագործական մտածողութեան մէջ յաւազայն» գընահատելու, իսկ մնացեալը անտեսելու եւ մոռացութեան տալու սկզբունքով: Եւ ասա, 1956ին Մոսկուայում տպուած «Պատմութեամբ»-ում, որտեղ արամաբանեղէն գրեթէ անպայման անդ պիտի ունենար նաեւ նշանաւոր «Ծօք կախումներ» պատմութիւնը, բացակայում է այդ երկը, երեւի իր պայթուցիկ բովանդակութեան եւ Հետեւագէտ ընթերցող մարդկանց մոքում այլեւայլ անխուսափելի դուզահեռներ յարուցելու յատկութեան պատճառով:

Այս յարակից ընդհանուր եւ թուուցիկ տեղեկութիւններն անՀրաժեշտ էին, Ձարենցի քննութեան առնուադ բանաստեղծութեան ծննդաբանական ակունքները մոտաւորապէս պատկերացնելու Համար: Արդ, Անդրէեւի յիշեալ պատմութեամբը տպուել է 1908ին, անմիջապէս վերաբերում է ռուսական առաջին յեղափոխութեան ու նրան յաղորդած մտայլ մթնոլորտին, որի մէջ գրողը — ըստ գրեթէ ընդհանուր ճանաչում դոտած զնահատականների — բողոքում էր «ազատամարտիկներով դաժամ հովածամէք» ենթարկելու զէ՛մ, ներողամտութեան եւ մարդասիրութեան կոչ անում յաղթողներին, եւայլն: Եւ, ի հարկէ, կասկած չկայ, Ձարենցը գեո պատանի ժամանակ է կարդացել այդ Հուշակուած, լայնօրէն տարածուած ու ալլեւայլ լեզուներէ, նոյնիսկ Հայերէնի թարգմանուած գիրքը: Դա կարդացել է նաեւ — ըստ բանաստեղծական թանձրացեալ վերագրման եւ, անկասկած, Հենց իրականում — Ձարենցի աւագ սերընդակից Վ. Վ. -ն, իր «անգէտ պատանութեան» տարիներին, Համապատասխան ու անընդելի տպաւորութիւններ կուտակելով:

Ձարենցը, ըստ իս, Վաղարշակ Տէր-Վահանեանի բունի մահից ուղիղ մէկ ա-

միս անց, հարկ է համարել առնուազն 4 տարբերակներով յատուկ բանաստեղծութիւն գրել նրա, տուեալ դէպքում՝ «Վ. Վ.—ի յիշատակին»։ Ընդամին ոչ ոք չի մընածում, անշուշտ, թէ Չօրենքը իբր այդ տողերով իսկապէս տուել է Վ. Վ.—ի կեանքի ամենամիջոցին հանգրուանի լուսանկարչական պատկերը։ Ո՛ր, Չօրենքը պարզապէս ներկայացրել է մի հանդուցային ու ճակատագրական պահի իր՝ բանաստեղծական մեկնութիւնը, երեւակայութեան ուժով։ Եւ որքան շատ ենք խորանում բանաստեղծութեան քաղաքատարրերի ու ընդհանուր բովանդակութեան մէջ, այնքան աւելի ենք համոզուում, որ Չօրենքն իսկապէս խոր իմաստ է պարփակել իր արտաքուստ ու չգնդ, ուղղակի անպատճառ շարժումով մահախօսականի մէջ։

Բանաստեղծութեան մէջ, ինչպէս որ կարող է նկատել իւրաքանչիւր ընթերցող, «ՎՅՍ կախուածման յատուկութիւնը» համարուում է, չգիտես ինչու, «սեմախմբուտայ գիրք»։ Ընդամին բնագրի հետուածքում այնքան էլ պարզ չէ, թէ արդեօք դա ո՛ւմ կարծիքն է,— հեղինակ բանաստեղծի՞, գրանաստեղծակիրն է Վ. Վ.—ի՞, թէ շրջանառութեան մէջ գտնուող ընդհանուր տեղիք է, քանի որ խորհրդային երբեմնի գրականագիտական տղրիւրներում իսկապէս այնքան էլ անծանօթ չէ այդ մի տեսակ արհամարհական որակումը։ Ի հարկէ, Լ. Անդրէեի երկերը առհասարակ այնպիսիք են, որ կարող են պատշաճել նաեւ «սեմախմբուտայ» զնահատականին։ Իսկ զապ, պէտք է ասել, նրա երկերի միակ ու առաջնային յատկանիշը չէ։ Կարելի է եւ շատ ուրիշ յուելեալ յատկանիշներ թուարկել։

Իսկ «ՎՅՍ կախուածման յատուկութեան» պարագայում-դա կարող է նայն-

իսկ որոշակի շփոթութիւն յարուցել։ Կարող է, օրինակ, թիւրիմացաբար այնպէս հասկացուել, թէ ցարական Ռուսաստանի 1906-07 թուականների իրականութիւնը այնքան էլ ստակալի չէր եւ թէ՛ եօթ կախուածներէ մասին գրողի շարադրած ողբապին պատմութիւնը պարզապէս նրա հեղինակային սենտիմենտալութեան, ընդացական շափաղանցութիւնների արդիւնք է։ (Թէեւ, ի դէպ, պէտք է ընդունել, ի հարկէ, որ ցարական նկատելիորէն բազմատարր ու անընդհատ բնաշրջուող իրականութիւնը, ամբողջութեամբ վերցրած, անհամեմատ շատ աւելի մեղմ ու տանելի էր հետադայում կոմունիստական միակուսակցական տիրապետութեամբ բնորոշուող դաժան իրականութիւնից։ Իսկ այս կարգի «մեղմացուցիչ» համեմատութիւնը բառ էութեան ոչինչ չէր կարող նշանակել ժամանակին անձամբ տուժածներին ու տառապածների համար։ Երանք չէին կարող իրենց հոգսերը, տառապանքն ու կորուստները շափել ապագայի անյայտ շափանի ներով, այլ կրում էին իրականութեան ամբողջ ծանրութիւնը անմիջապէս, ըստ այնմ էլ ճշգրիտով իրենց դիրքն ու վերաբերմունքը։ Համեմատութիւնը ոչինչ չի նշանակում նաեւ այսօր)։ Ուշադրան այն է, այդուհանդերձ, որ Չօրենքը, ըստ իս, միանգամայն յաջող է բնութիւն իր խօսքի կիզակէտը, գրական մեակերպման տուումով, հոգեբանորէն հիմնաւորելով մի այնպիսի՝ պահ, որն իրենով արտացոլում է ո՛չ միայն Վ. Վ.—ի նման անհատ գրչերի, այլեւ՝ նրանց հաւաքականութիւնն ընդգրկող մի ամբողջ սերնդի կեանքի ակունքները, ուղիները, պտղաւորումը, ընթացքը եւ, վերջապէս, անկշռելի վախճանը. «Կէտ-գիշերիմ», «վաղ աղբաւաղիմ» կամ «աղբաւաղըիմ»՝ միեւնոյն է։

ՄԱՍՈՒՆԲ ՄԸ՝ Ե. ԶԱՐԵՆՑԻ ԱՆՏՊՈՆԵՐՆԸ

Տպագրում է բանաստեղծի ժառանգների մաս պահպանուող այն իմբնագրից, որի վրայ վերնագրին կից գրում է «վերջին վարիանտ» եւ ապա՝ (Մ. Թ.) եւ բուագրում՝ 27. IX. 1936:

Ժառանգների մաս պահպանում են նոյն բանաստեղծութեան երեք այլ ֆայնայում տարբերակները. դրանցից մէկի վերնագրին կից գրում է՝ (Վ. Վ. Ի յիշատակին), 1936. 27. IX. Ծաղկաձոր: Յիշատակում երեք տարբերակն էլ ներկայացում են ստորեւ:

Բանաստեղծութիւնը առաջին անգամ հրատարակել է Արփենիկ Զարեցը, ՍԳ, 1971, № 7:

«Եօթ կախումներ» — Ակատի ունի Լեոնիդ Անդրէեւի (1871-1919) «Եօթ կախումների պատմութիւնը» պատմումէր (1908), որտեղ ներկանկը մերկացնում է ցարիզմի հաշուեյարդարը յեղափոխականների Ակատմամբ:

«7» Կ Ա Խ Ո Ւ Ա Ծ Ն Ե Ր

(Վ. Վ. Ի յիշատակին)

...Երբ աղջամուղջին նա վեր է կացել,
Հանգիտ հագնուել — Երեւի յանկարծ
Այնպէս է նրան մի պահ թուացել,
Թէ ինքը ահա առաջին անգամ
Պատանեկան տազնապով արթուն
«Եօթ կախումների» գրքոյկն է կարդում:

...Կը ծալի հանգիտ, մի կողմ կը դնի
Նա սենտիմենտալ այդ գիրքը հիմա, —
Կ'ընկնի անկողնին եւ խո՛ր կը քնի, —
Ինչպէս միշտ՝ իսկոյն:
Եւ ա՛յն է արդեօք,
Տարբերութիւնը գրքի ու կեանքի,
Որ քունն իր հիմա լինելու է լոկ
Անսահման երկար ե՛ւ խոր, ե՛ւ հանգիտ...

Տ Ա Ր Բ Ե Ր Ա Կ Ն Ե Ր

Քայլաշուած են վերնագիրը եւ և տող

Այնպէս է յանկարծ մի պահ թուացել
Թէ ինքը — կրկին պատանի անգէտ
Կը ծալի հիմա մի կողմ կը դնի
Գիրքը, — եւ, ընկած չոր մահճակալին —

Կ'երազի պայքար... սիրութիւն... գալիք...
 Եւ խոր կը քնի... Բայց թուն հիմա
 Կը լինի-խառար անծայրածիր... Մա'հ...
 Կը ծալի հիմա, մի կողմ կը դնի
 Գիրքը — եւ՝ ընկած անկողնի վրայ՝
 Կ'երազի պայքար, տքնութիւն, գալիք —
 Եւ խոր կը քնի... Եւ... [Եւ կը լինի մահ]
 Գիշեր — պատանցանք ախ, ոչ, կը լինի — [անծայրածիր]... Մա'հ

«7 Կ Ա Խ Ո Ի Ա Ծ Ն Ե Ր»

...Եւ... կէսգիշերին, երբ վեր է կացել,
 Շտապ հագնուել — կէս-քուն, կէս-արթուն, —
 Արդեօք չի՞ նրան մի պահ թուացել,
 Թէ ինքը — անգէտ պատանի է դեռ
 Եւ գիշերային տքնութեամբ անդու,
 «Եօթ կախուածներ» գրքոյկն է կարդում...

...Կը ծալի հիմա, մի կողմ կը դնի —
 Եւ — երազելով ապագայ ու կեանք՝
 Կ'ընկնի անկողին... Ապա — պատանցանք, —
 Եւ քար ծանրութիւն յոգնատանջ քնի...
 Տարբերութիւնը լոկ ա՞յս է ահա...

Քայքայուած է մերձագիրը եւ գրան կից փակագծերում եզած յիշատակութիւնը.

...Վաղ աղջամուտքին, երբ վեր է կացել,
 Շտապ հագնուել յոգնած, կիսարթուն,
 Արդեօք չի՞ նրան մի պահ թուացել,
 Թէ ինքը կրկին պատանի անքուն
 < >
 «Եօթ կախուածներ» գրքոյկն է կարդում...

...Գիրքը կը ծալի, մի կողմ կը դնի,
 Եւ — երազելով ապագայ ու կեանք
 Կ'ընկնի անկողնին: Ապա պատանցանք...
 Եւ — քա՞ր ծանրութիւն յոգնատանջ քնի...

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

ԵՐ. Տ. Գ Ա Ր Ա Ճ Ե Ա Ն

Ն Կ Ա Տ Ո Ւ Մ Ն Ե Ր

ժըպրանի եայիլ ժըպրանի

«Մ արգարէն» հատորի

թարգմանութեան մասին

Կը թուի, թէ թարգմանական գրականութիւնը շունչի հարկ եղած կլի-
որ Սփիւռքի մէջ, եւ մարդիկ — անհատ թէ կազմակերպութիւն — մեծ կա-
րեւորութիւն չեն ընծայեր ատոր:

Թարգմանական գործը, ժողովուրդներու մշակութային փոխյարաբե-
րութեան, իմացական արժէքներու ներթափանցման, ուստի եւ՝ գիրքը ճանչ-
նարու, բարեկամական կապեր հաստատելու ազդակ մըն է, ինչպէս միւս ար-
ևեստները, որ պէտք է կատարուի լրջախոհութեամբ եւ կատարեալ գիտակ-
ցութեամբ, որպէսզի կարելի եղած հարազատութեամբ փոխանցուին հեղի-
նակին պաղափարներն ու հողեկան պարտմները:

ՀԵ ՀՈՄԻ (Հայաստանիայ Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողնե-
րու Միութիւն) «Մարգարէն» հատորի թարգմանութեան ընթացումը կը թո-
ղու մ'յն տպաւորութիւնը, թէ աշխատանքը կատարուած է հապճեպօրէն, պա-
րագայական հրատարակութեան մը համար:

ՀԵ ՀՈՄԸ այդ թարգմանութեան ձեռնարկեց ժըպրանի ծննդեան 100ամ-
եակին՝ իր կողմէ կազմակերպուած հանդիսութեան մը առթիւ, 1988ին:

Թարգմանական այս գործին մէջ, ՀԵ ՀՈՄԸ նպաստաւորուած էր նա-
խընթաց երեք թարգմանութիւններով, — Սիւսակ Վարժապետեանի չափածոյ
թարգմանութիւնը, որ կը մեղանչէր շատ մը թերիներով եւ որուն քննաբե-
կումը կատարուած էր այս տողերը գրողին կողմէ (տե՛ս «Բազին», 1981,
թիւ 2), Համաստեղի թարգմանութիւնը եւ մերը (տե՛ս «Բազին», 1981,
Մարտ-Օգոստոս): Կ'ակնկալուէր, ուրեմն, որ ՀԵ ՀՈՄԸ կարելիութիւնն ու
իրաւունքը ունենալով օգտուելու նախորդ թարգմանութիւններէն, թարգման-
չական հայ գրականութեան ներկայացնէր անթերի եւ մնայուն գործ մը, ո-
րուն վրայ նորով մը անդրադառնալն ըլլար անշահ եւ անպատեհ աշխատանք
միայն:

Դժբախտաբար, ՀԵ ՀՈՄԻ թարգմանութիւնը հետու է այս արդար ա-
կընկալութիւնը գոհացնելէ: Կարծես թէ համալսարանական մեր տղաքը ինչ-

դինքին զերծ զզացած ըլլային դրականութեան հանդէպ ամէն պատասխանատուութենէ: Կը տարուինք այս նկատումն ընելու, տրուած ըլլալով անոնց թոյլատրած իմաստի անընդունելի սայթաջումները եւ լեզուական թերացումները՝ շատ անգամ զուրկ արտայայտչական պարզութենէ եւ վայելչութենէ, ինչ որ կը պահանջէր ժըպրանի կռու ոճին հաւատարիմ մնալու պարկեշտութիւնը:

Եւ որպէսզի մեր հաստատումները չըլլային աժան դատումներէ առաջ եկած արտայայտութիւններ, կը թուենք բազմաթիւ սխալներ, վրէպներ, լեզուական սայթաջումներ, բաղդատարար մեր թարգմանութեան հետ:

Հեղինակ թարգմանութեան պարագային կը նշենք զբքին էջն ու տողը: Մեր (Ե. Գ.) թարգմանութեան պարագային՝ «Ֆազիլ»ի 1981ի համապատասխան ամիսը, էջն ու տողը: Հարկ եղած առեւ, կու տանք անգլերէն բնագիրը եւ կը կատարենք դիտողութիւններ:

«ԲԱՏԻՆ», ՄԱՐՏ 1981

Ե. Գ., էջ 30, տող 13.— «Ո՛չ, չեմ կրնար լիկի այս քաղաքն ստանց վիրաւոր հոգիի»:

Հեղինակ, էջ 15, տող 17.— «Ոչ, անվերք հոգիով մը չէ, որ կը քաղում այս քաղաքը»:

Ե. Գ., էջ 30, տող 14.— «Երկար եղան դառնութեան օրերն այն, որ տնցուցի անոր պարիսպներէն ներս»:

Հեղինակ, էջ 15, տող 19.— «Անոր պատերուն հսկի սպառած տառապանքի օրերս երկար եղան...»:

Նկատի առնել Within the walls, այսինքն՝ պարիսպներէն ներս, ո՛չ թէ պատերուն ետին: Այլ հարց, թէ հայերէնով քաղաքի մը պարիսպները կ'ըսեն եւ ոչ թէ պատերը:

Ե. Գ., էջ 30, տող 27.— «Որովհետեւ մնալ, մինչ ժամերը կ'աշխարհ գիշերուան մէջ, պիտի նշանակէր ստոխի, բիրեղամալ եւ փակուիլ կազապարի մէջ»:

Հեղինակ, էջ 16, տող 8.— «Որովհետեւ, քէն ժամերը կ'աշխարհ գիշերին մէջ, մնալ՝ ստոխի, բիրեղամալ եւ կազապարի մէջ փակուիլ է»:

Երկուքին բաղդատութիւնը չափազանց անպաստ է երկրորդին համար:

Ե. Գ., էջ 31, տող 43.— «Եւ երբ քաղաք մտաւ, ամբողջ ժողովուրդն եկաւ իր դէմ, կարծես միաձայն բացագանչելով»:

Հեղինակ, էջ 18, տող 24.— «Եւ երբ քաղաք մտաւ, ամբողջ ժողովուրդը գինգ դիմաւորելու եկաւ եւ միաձայն գինգ կը կանչէին»:

Նկատի առնել «ամբողջ ժողովուրդը»՝ եզակի, «զինք կը կանչէին»՝ յոգնակի:

Ե. Գ., էջ 32 տող 28.— «Մարգարէ Աստուծոյ, դո՛ւն քացարակին հետաժուտ, երկար առեւ թուգարկեցիր անբախտը՝ նազ փնտռելու համար»:

Հե՛ղՈՄ, էջ 21, տող 6.— «Լեսուածոյ մարգարէ, բացարձակիմ հետա-
մըտելով հետունքը շատ խուզարկեցիր նաուդ ի խնդիր»:

Ընթերցողին կը մնայ բաղդատութիւնը ընել:

Ե. Պ., էջ 32, տող 40.— «Հիմա ուրեմն բաց մեզի մեր սրտերուն ծալ-
քերը եւ խօսէ այն ամբողջին մասին, որ յայտնուած է Քեզի, ծնունդէն մին-
չեւ մահ»:

Հե՛ղՈՄ, էջ 21, տող 22.— «Հիմա ուրեմն մեզ բացայայտէ մեզի եւ ըսէ
մեզի ամէն ինչ որ յայտնուած է Քեզի ծնունդի եւ մահուան միջեւ գտնուող
եղանջքին շուրջ»:

Անկախարար «մեզ» ու «մեզի» ներու խառնաշփոթութենէն, նախադա-
տութիւնը շատ թոյլ է:

Ե. Պ., էջ 33, տող 9.— «Եւ երբ ան խօսի մեզի, հաւատացէ՛ք անը.
Եթէ նայնիսկ իր ձայնը փշրէ մեր երազները, ինչպէս քամին կ'աւերէ
պարտէզը»:

Հե՛ղՈՄ, էջ 22, տող 18.— «Եւ երբ խօսի մեզի, հաւատացէ՛ք.

Թէ՛ւ նոր ձայնը կրնայ փշրել մեր երազները, ինչպէս որ հիւսիսային
հողմը կ'առաքուրէ պարտէզը»:

As the north wind lays waste the garden.

Քամին ոտնակո՞ւր կ'ընէ, կ'առաքուրէ՞... Ո՛չ (առաքուր = առ ա-
թուր, ընդ աթուր, ոտքի տակ առնել, ոտնատակ տալ.— Մայիսսեան բա-
նարան): Քամին կրնայ աւերել (lays waste), բայց ոչ թէ ոտքի տակ առնել:

Ե. Պ., էջ 34, տող 36.— «Եւ չին անիր կազմին ու նանին՝ մին միւսին
շուփին»:

Հե՛ղՈՄ, էջ 28, տող 7.— «Եւ կազմին ու մշկնին իրարու շուփին մէջ
չեմ անիր»:

And the oak tree and the cypress grow not in each other's shadow.

«ԲԱՔԻՆ», ԱՊՐԻԼ 1981

Ե. Պ., էջ 41, տող 18.— «Բայց եւ կ'ըսեմ, ոչ թէ քունի մէջ, այլ մի-
ջորտի կատարեալ արթնութեամբ...»:

Հե՛ղՈՄ, էջ 40, տող 10.— «Բայց եւ կ'ըսեմ, ոչ թէ քունի մէջ, այլ
միջորտի լայն արթնութեամբ մէջ...»:

Լայն կամ նեղ, երկար կամ կարճ արթնութիւնը բացատրութեան կը
կարօտի:

Ե. Պ., էջ 42, տող 1.— «Բայց եւ կ'ըսեմ մեզի, թէ անոնք անբա-
ժան են»:

Հե՛ղՈՄ, էջ 42, տող 1.— «Բայց եւ կ'ըսեմ մեզի: Անոնք անբաժանե-
լի են»:

Ոտքը ուրախութեան եւ տխրութեան մասին է, որոնք իրարմէ անբա-
ժան են, այսինքն՝ միշտ իրարու հետ են, եւ ոչ թէ անբաժանելի, այսինքն՝
բաժան-բաժան չեն ըլլար: Օրինակ, նախնական թիւերը անբաժանելի են:

Ե. Գ., էջ 43, տող 5-4 «Տակարին քիչ մըն ալ ձեր քաղաքին պարիսպները պիտի բաժնեն ձեր բնակարանները՝ ձեր դաշտերէն»:

Հե ՀՈՄ, էջ 43, տող 26.— «Ձեր քաղաքին պատերը քիչ մը եւս պիտի բաժնեն ձեր սիրտերը՝ ձեր դաշտերէն»:

A little longer shall your city walls separate your HEARTHS from your fields.

Hearths (Տուն, օճախ, բնակարան) շփոթուած է heartի (սիրտ) հետ, հակառակ ստոր, որ մենք այս սխալը մասնանշած էինք երկու տարի առաջ, Սիսակ Վարժապետեանի Թարգմանութեան քննարկման առթիւ (տե՛ս «Բազմ», 1981, Փետրուար, էջ 47):

Ե. Գ., էջ 43, տող 15.— «Ըսէ՛ք ինձի, ասոնք ունի՞ք ձեր տուներում մէջ»:

Հե ՀՈՄ, էջ 44, տող 11.— «Ըսէ՛ք ինձի, ասոնք ունի՞ք ձեր սրտերում մէջ»:

Tell me, have you these in your houses.

Ինչպէ՞ս արդարացնել տունը սիրտին հետ շփոթող այս սխալը:

«ԲԱԳԻՆ», ՄԱՅԻՍ 1981

Ե. Գ., էջ 33, տող 20.— «Եւ երբ անհետի պիտի լինի կ'ըլլայ համեստութիւնը, եթէ ոչ կաշկանդամք եւ մտային նողկանք»:

Հե ՀՈՄ, էջ 46, տող 24.— «Եւ երբ պիտի կը մահանայ, ի՞նչ կը մնայ իր համեստութենէն, եթէ ոչ սոսնակապ մը եւ մտքի մոլորամբ մը»:

Ահա՛ մոլորութիւնը. «Ի՞նչ կը մնայ համեստութենէն»... որո՞ւն համեստութենէն, պիտի լինի...

Ե. Գ., էջ 34, տող 35.— «Ովկիանայի նման է ձեր եւ-աստուածը»:

Հե ՀՈՄ, էջ 49, տող 12.— «Ովկիանային պէս է ձեր աստուածամասնայն եւութիւնը»:

Like the ocean is your God-self.

Հեղինակը կ'ընդունի, թէ մարդուն մէջ, մարդ-անասունին կողքին կայ նաեւ մարդ-աստուածը: Ասիկա ժողովրդին սիրական գաղափարներէն մէկն է: Համայնարանակաները գէթ պէտք է այսքանը հասկցած ըլլային:

«ԲԱԳԻՆ», ՅՈՒՆԻՍ 1981

Ե. Գ., էջ 33, տող 23.— «Երբ ձեր բարեկամը իր մտածումը կը յայտնէ, մի՛ վախճա՛ք ձեր սեփական մտքի «ոչ»էն, ո՛չ ալ՝ անոր մերժեցէ՛ք «այո»ն»:

Հե ՀՈՄ, էջ 16, տող 11.— «Երբ ձեր բարեկամը իր միտքը կը յայտնէ ձեզի, չէ՛ք վարանիր ձեր սեփական մտքի «ոչ»էն, ոչ ալ արգելք կը հանդիսանա՛ք անոր «այո»ին»:

Այսինքն՝ բաժնի անհավասարությունը անկեղծութեամբ անոր արդեւ չանդիսանալու հարց չկայ:

Ե. Գ., էջ 40, տող 9.— «Այսուհանդերձ, անանցը ձեր մէջ, գիտակցութիւնն ունի կեանքի անկրօնական»:

ՀեղձՄ, էջ 70, տող 12.— «Այսուհանդերձ, անժամանակը ձեր մէջ, գիտակցութիւնն ունի կեանքի անժամանակութեան»:

Դարձեալ, ժրպրանի տիրական գողափարը չէ թափանցուած:

«ԲԱՊԻՆ», ՕԴՈՍՏՈՍ 1981

Ե. Գ., էջ 6, տող 20.— «Յաճախ ես եղայ լեռնային լին մը ձեր մէջ. ես ցոյացուցի ձեր գազաբնիկն ու կորացած լանջերը, եւ նոյնիսկ թափառական հոյերը ձեր խոսքերուն եւ իզմերուն»:

ՀեղձՄ, էջ 92, տող 12.— «Ես ես ձեր մէջ՝ լեռներով շրջապատուած լինի պէս էի յամալ: Կը ցոյացնէի ձեր մէջի գազաբնիկը, թե՛ գառիթափերը, եւ նոյնիսկ՝ ձեր մտածումներուն եւ ցանկութեան անցնող հոտերը»:

Բաղդատեւ ձէկուն վայելչութիւնը՝ միւսին տափակութեան հետ:

Ե. Գ., էջ 8, տող 24.— «Արդարեւ, ազնուութիւնը, որ իմփզիմը կը դիտէ հայելիի մը մէջ, կը փարսնայ»:

ՀեղձՄ, էջ 96, տող 23.— «Արդարեւ ինքնագիտակից բարութիւնը փարի կը վերածուի»:

Ահա՛ բնագիրը, առանց մեկնաբանութեան. Verily the kindness that gazes upon itself in a mirror, turns to stone.

Ե. Գ., էջ 11, տող 5.— «Մնաք բարով ձեզի, եւ մնաք բարով երիտասարդութեանս, գոր անցուցի ձեզի հետ»:

ՀեղձՄ, էջ 101, տող 16.— «Բարի երթ ձեզի եւ երիտասարդութեանս, գոր սպանեցի ձեզի հետ»:

Ինչպէ՞ս թէ՛ բարի երթ ձեզի, երբ ինք է մեկնողը:

Դեռ կարելի է երկարել շարքը օրինակներուն, սակայն այսքանն ալ բաւարար կը համարենք, ցոյց տալու համար ամէնէն նախապաշարեակներուն իսկ, թէ համալսարանականներուն գործը չ'արդարացնէր ո՛չ իրենց լաւին մզակու հիգը, ոչ ալ ձեր անկախութիւնը:

Անթերի չէր ձեր թարգմանութիւնը, ինչպէս ըսած ենք (տե՛ս «Բագին», 1981, Փետրուար, էջ 43), բայց արդար իրաւունքը ունէ՛ինք աւելի լաւը անկախելու շորս-հինգ համալսարանականներու աշխատանքին:

ԵՐՈՒԱՆԻ Տ. ԳԱՐԱՃԵԱՆ

Ս. Պ. Տ Ա Տ Ո Յ Ե Ա Ն

Լ Ի Բ Ա Ն Ա Ն Ա Հ Ա Ց Ն Կ Ա Ր Չ Ո Թ Ի Ի Ն Ը



Մեր աշխատակիցներէն Սեդա Պարսումեան-Տառնյեան վերջերս լոյս ընծայեց «Լիբանանական Կարգութիւնը» անուն պատկերազարդ հատորը, նախածնունդքեամբ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեամբ:

Գնականարարական եւ իմաստասիրական մերքեղ շջափող մեր աշխատակիցին այս գործը, փաստօրէն, կը հանդիսանայ առօրին հրատարակութիւնը, որ կը փորձէ լուստրական տակ առնել լիբանանայ զեղանկարչութեան նորվայթն ու ածար տիրական ցեմէնը: Ստարն հասուածաբար կը ներկայացնենք Ս. Պարսումեան-Տառնյեանի աւսումնասիրած եկեղիմակները՝ ամբողջին մասին բնօրինակը գազափար մը տալու համար:

Կ Ի Ի Վ

Կիւլի ո՛չ միայն ոճը, այլեւ կեցւածքը կը մնան եզակի. փոխանակ դրականութիւններ փնտռելու ներկային մէջ, ան նահանջած է եւ իր գործը վերածած ոգրերդական այդ ընկերակումին վկայութեանը: Իր արուեստը ծայրայեղ կրատրականութեան եւ նահանջի կոթող մըն է:

Պարզաբանութիւն տիպի ըլլայ զինք զերիբապաշտ կոչել: Աստուրի եւ ուրիշ գերիբապաշտներու պարագային, գերիբապաշտութիւնը ծրարուած եւ խիզախ որոշումի մը արդիւնքով՝ մերժումն է ապրուած Հակասութեանց: Կիւլի պարագային, անիկա կ'ըլլայ անցեալի փորձառութիւններէ մերբազատելու իր անկարողութեան Հետեւները: Այս անցեալը կ'անած է իր ենթագիտակցութիւնը, ջլտասած՝ մասուրական ուժերը, թախիծով վարակած՝ իր ներաշխարհը: Դեղարուեստական իր ամբողջ գործունէութիւնը կեդրոնացած է մղձավանջային իր ենթաշխարհին արձագանքներուն փոխանցումին վրայ:

Կախ է նիւթի, ժամանակի եւ մտածողութեան օրէնքներէն, բռնուած՝ Հրդեհներու, ջարդի, անբերականայի ցաւերու եւ նման յիշողութեանց մզողութեան ուժով: Կոնաւ քարանձաւներու լուծիւնը կայ Հոն՝ մութ կանաչ-կապոյաներով, սեւերով եւ գունաթափ շերտերով կառուցուած իր Համադրութեանց մէջ: Ուրուականային գոյութիւններ կը սարստան աշխտող, ըստորջրեայ բոյսեր, մարդկային եւ կնոջական ձեւեր, կմախային ստուերներ կը կարատեն միջոցը ուղղահայեաց Հողքերով: Մթնշաղային լուսիններ աւելի եւս կը դալկացնեն արդէն իսկ մահաբոյր այդ աշխարհը:

Սեփական նիւթերն ու միջոցները օգտագործելով (առանց վրձին եւ ներկ գործածելու) զաղտնի սճով մը՝ զաղտնի աշխարհ մըն է, որ փորձած է վերակառուցել Կիւլի. կմախային եւ բուստային գոյութիւնները, մթին եւ լարձուն Հեղուկային միջոցը, երբեմն ալ առանց թթուածինի պարագութիւնները, ստուած-լուսնային բնութիւնը, անթեւ, սունկային

Կիւլի ստորերկրեայ աշխարհը ան-



«Վերածնունդ»,
չեխական մեյան, 1967

ճիշդ՝ մարմին հաղած այս հողին, Կիւվի կարծիքով՝ իր կրաւորականութեամբ է, որ կը դիմադրէ արտաքին աշխարհէն հասած հարուածներուն, իր լուսութեամբ արհամարհելով նիւթական կորուստը, որ յուշետե կը հաստատյ վախճանին՝ անմահութեան:

Չափազանց ենթակայական եւ հիւանդադին այս աշխարհաւայեացքին դիմաց դիտուած՝ Կիւվի նկարչութիւնը իր զուգահեռը կամ նմանները չունի լիբանանահայ արուեստիներուն մէջ. աւելորդ է հոս արծարծել այս կարգի ըմբռնումներուն ճշմարտութեան կամ ընդունելիութեան հարցերը: Իսկանը այն իրողութիւնն է, որ Կիւվի նկարչութիւնը խորապէս անկեղծ արտայայտութիւնն է իր աշխարհաւայեացքին. մղձաւանջային անցեալէ մը սկզբնաւորուած իր կեանքի հասկացողութիւնը՝ երիտասարդութեան եւ հասուն տարիքին հայթայթած կենսունակութեան հանդէպ մնացած է անտարբէր, Կիւվի մարդը եւ նկարիչը ողբերգական անկումով մը նահանջած են դէպի անցեալ ենթաաշխարհը:

Երթէ շինուած «մերկերը», եւ առհասարակ իր կտաններուն աշխարհը ո՛չ մէկ առընչութիւն ունին իր ապրած իրականութեան հետ:

Իր աշխարհաւայեացքը եւ անձնական «ընտանցութիւնը» խտացնող եւ փոխաբերարար ներկայացնող «վիճակը» «ընդունվեալ տեսողութիւնն» է (vision sous-marine, իր արտայայտութեամբ): Զուրբ հողին է, ժայռը՝ նիւթը. երկու տարրերուն միջև յուերժականօրէն առկայ բախումը, տեսակ մը տիեզերական մակարդակի վրայ՝ «գոյաբանական փոթորիկ» է, որուն արտայայտութիւնն է իր արուեստը: Մահուան անդամալուծող սարսափը, ֆիզիքական բրտութիւնը, արտայայտուած՝ Ջարդին, շիրտշիմայի եւ ընդհանուր սոմամբ մարդու առօրեային մէջ, հախառահմանուած առաւապանքը՝ սկսած Աշամ եւ Եւայի պատմութեամբ, ապա՝ կոթողոյնացած Քրիստոսի խաչելութեամբ եւ, մերթապէս, յաղթահարուած Յարութեամբ, այս բոլորը կը նշեն հանդրուանները հողին պայքարին. մարդը, աւելի



«Վերածնունդ»,
Եւզաներկ, 1967

ՓՕԼ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ



«Կնանկի շրջանը», Իլգաներգ, 1955

Լիբանանահայ, նաև լիբանանեան նկարչութեան մէջ հիւսմանիտական հակումները իրենց լաւագոյն արտայայտութիւնը գտած են Կիրակոսեանի արուեստին մէջ: Անոր շուրջ երեսունըչինգ տարիներու վաստակը հիւսուած է մարդկային ջերմութեան, մտերմութեան, պարզամտ բողբոջի եւ կարգ մը ընդհանուր դաշտափարներու վրայ հիմնուած կեանքի պահպանողական մը շուրջ: 1926ին Երուսաղէմ ծնած Կիրակոսեանին համար (ծագումով՝ կիսով ասորի) ընկերային եւ անհատական անկախուն գոյութիւնը, իբրև Խաղաղի հետեւանքը Եղեռնին, բնորոշած է իր միջափայլը: Կիրակոսեան ապրած է դասնութիւնները իբրև մանուկ եւ պատանի. երիտասարդութեան առաջին ասորիներէն իսկ, իր ամբողջ գործունէութիւնը կեդրոնացուցած է հասկնալու եւ ներկայացնելու լիբանանահայկական իրականութիւնը՝ մարդկային հեռաւորութիւններուն մէջ: 1950էն 1960 երկարող պարօն համալսեանի կոչուած տասնամ-

եակը իր գեղարուեստական կեանքին, ո՛չ միայն զուգարիպած, այլև ստատրած է Լիլիթին մէջ որոշ հող գրուած իրապաշար շարժումներուն:

Կիրակոսեանի խանդավառութիւնը՝ գերազանցապէս մարդկայնական եւ մասնաւոր իմաստով ժողովրդային արուեստ մը մշակելու, ծնունդ առած անմիջական իրականութենէն, աստիճանաբար նահանջած է եւ տեղի տուած սիրոյ եւ բարութեան միայն վերացական գոյութեան համարումին: Կիրակոսեան կարծի իրականութենէն բխող դասնութիւնները փոխարինած է, աւելի ճիշդ՝ մեղմացուցած դանձր, աննիթական սիրոյ ջերմութեամբ արտայայտուած կիսակրօնական խանդազատանքով մը՝ տասնպոյ մարդկութեան հանդէպ առհասարակ: Այսպէս, մահուան գաղտնիքը՝ 1955ին գծուած «Կնանկի շրջանը» կոչուող նկարին մէջ, հորիզոնական կերպով մարդկային իրականութիւնը ընդհատող, նաև կացութիւնը հակակշռող, հետագային վերածուած է մութ եւ

ուղղահայեաց կերպարին, միախառնը-
լած՝ մարդոց բազմութեան: Ո՛չ միայն
մահուան եւ տառապանքի, այլեւ գրական
ըմբռնումները վերացականացած են, կազ-
մելու համար լոյս-եւ-մութ համանուագ
մը:

Անկախ գեղարուեստական եղափո-
խութեան ընթացքին բնոյթէն, անուրա-
նայի իրողութիւն է, որ Կիրակոսեան հա-
սան է գոյններու եւ համադրութեանց ըս-
քանչիւր պարզութեան: Իրրեւ նկարչական
համադրութիւններ, իր կտաւները կա-
տարելով են: Դեղինները, կանաչները,
վարդագոյններն ու նարնջագոյնները յա-
պէցած են առաւելագոյն ֆերմութեամբ: Իսկ
հակադրուող մթութիւնները, կա-
պոյտներն ու մոխրագոյնները կը գրուին
չնշանելու համար առաջիններուն պայծա-
ռութիւնը: Այս բոլորը մարմին կ'առնեն
անմիջականօրէն, վրձինի լայն եւ յաճախ
ուղղահայեաց հարուածներով: Սակայն
Կիրակոսեանի արտայայտչական հմտու-
թիւնը իր ամբողջական զբոսելորումը կը
զտնէ «սպիտակ» պատասաներուն մէջ:

1963ին դժուած «Ալլախումա» նկարը Կի-
րակոսեանի զլուխ-գործոցներէն կրնայ
նկատուիլ: Այս գործին մէջ (եւ ո՛չ այն-
քան իր սկզբնական, Քարտայտապալած
կոչուած գործերուն), Կիրակոսեան կ'օգ-
տակործէ համադրական եղանակը՝ պատ-
տախին կառույցին մէջէն փոխանցելով ու-

նոր ներշնչումին բնոյթը, ինչպէս նաեւ՝
իրագործումին քրտնոտը: Հոն ներկայա-
ցուած է իրականութիւնը ենթակայակա-
նօրէն, այնպէս՝ ինչպէս ինք կը տեսնէ,
գրական, քիչ մը վերացական եւ շատ
քնարական: Հակառակ դոյնի եւ գիծերու
ժուժկալ գործածութեան, փոքր զգանազը-
լածներով, որոնք կ'ամբողջացնեն մարդ-
կային կերպարները, իւրաքանչիւրը ինք-
նին ներքնապէս ամբողջական աշխարհներ
են, միասնաբար ալ կազմելով աւելի մեծ
աշխարհ մը: Նոյն առաքինիութիւնները,
նուազ ուժգնութեամբ, գոյութիւն ունին
Կիրակոսեանի նոյն շրջանի եւ զայն նա-
խորդող եւ յաջորդող շրջաններու գործե-
րուն մէջ, իր նիւթերը միշտ ալ ներշնչ-
չրած են պահերու եւ կացութեանց թե-
լագրութեամբ, ինչպիսին են՝ սպասում,
մայրութիւն, վերադարձ, հարսանիք, վե-
րացում, հիւանդի սնար, եւ այլն:

Լիբանանահայ նկարչութեան բերած
Կիրակոսեանի մեծագոյն նպաստը կեանքի
եւ արուեստի նկատմամբ իր գրական կեց-
ւածքն է: Այս գրականութիւնը, որ միա-
ժամանակ իր գործին առանցքն է, շար-
ժիչ ուժը՝ յարստեօրէն կը զբոսելորումի
իր արուեստին բոլոր տարրերուն մէջ,
գոյներու յասակութեան, տիպարներու
մեղմութեան, յարաբերութեանց շեղմու-
թեան եւ վրձինին անվարան եւ հաստատ
հարուածներուն մէջ:

Կ Ի Լ Վ Տ Ե Ի Բ

Կիւլտէրի գեղադիտութիւնը քիչ մը
խորթ է ո՛չ միայն հայկական, այլեւ՝ մի-
ջին-արեւելեան նկարագրին, որ իր ներ-
շնչումը կը փնտռէ մտերմիկ, առօրեայ եւ
անձնական երեւոյթներուն մէջ, եւ որուն
զբոսելորումները ունին որոշ մելոտրամա-
թիք զուճարում մը: Թերեւս արուես-
տի բնոյթին իր իւրայատուկ ըմբռնումը
բացուէր նոր գաղափարներու, քննադա-
տութեան եւ նորոգման, եթէ փոխանակ
աշակերտներու նեղ շրջանակին՝ անկէ
զուրս ընկերային յարաբերութիւններ մը-
լանկէր՝ սակայն, շօշափելի յառաջդիմու-
թեան մը բացակայութեան պատճառները

պէտք է փնտռել իր արուեստէն ներս եւ
ո՛չ թէ անկէ դուրս:

Նկարչութիւնը նկատելով տեսակ մը
ստեղծագործական արկածախնդրութիւն,
Կիւլտէր աւելի քան քառասուն տարիներէ
ի վեր մաքառած է զտնելու համար հոգիին
վսեմագոյն արտայայտութիւնը. ծայրա-
յնդ իտալիզմը զինք առաջնորդած է պը-
ղատոնական գաղափարապաշտութեան,
կամ, այս պարագային՝ ձեւապաշտու-
թեան. Կիւլտէր իրերը կը տեսնէ իրրեւ
ձեւեր: Այդ ձեւերուն հետամուտ, դէմ-
քեր, ամբոխներ, առարկաներ, վերացա-
կան ձեւեր, կացութիւններ, շնչին բաներ,



Վնասկական (Քրիսթիէ), Բաշաևերկ, 1873

ամէն բան: Ան կը նետուի դէպի արտաքին աշխարհը. լեցուն է իր աշխարհը. կ'ուզէ, որ այդպէս ալ ըլլայ իր գործը. կ'ատէ սրարագութիւնները, կարծէք վախճանով ոչնչացումէ կամ մահէ: Արտորանք մը, անհամբերութիւն մը կայ իր մէջ, որ հետըզհետէ կ'աւելնայ: Այս տրամադրութիւնը ծագում կ'առնէ անցնող ժամանակը կանոններու ձգտումէ մը. Կիւմիտէր կ'ատէ ժխտականութիւնը, իր բոլոր դրսեւորումներուն մէջ: Իրեն կը պակսի ներքին հաստատարականութեան տարրը, աչքին, տրամաբանութեան եւ զգացումներուն միջեւ ներդաշնակութիւնը: Աշխատանքի իր թափին մէջ, ան առիթը չի տար ինքն-իրեն՝ զարգացնելու այդ տարրը, բան մը, որ անհրաժեշտ է որեւէ գործի աւարտունակութեան համար:

Կիւմիտէր կը նկարէ այնպէս՝ ինչպէս

որ պատկերներն ու զառափարները կու պան իրեն, գանգոտածներով, զիրար կըրկնելով եւ խաչածնելով. իր մէկ գործը միւսին կ'առաջնորդէ գիտողը, եւ այսպէս շարունակաբար, որովհետեւ նկարիչին անհանդիս տրամադրութիւնը կը փոխանցուի դիտողին, որ չի յաջողիր իր լըրումին հասած ստեղծագործութեան մը հետ յարաբերութիւն մը մշակելու: 1975ին, ՎՍ. Մանուկեանը կեդրոնի մէջ տրուած ցուցանողէսին՝ սկսած էր իր մտքերը դատաւորել. կատարած էր փորձեր աւելի վերլուծողական աշխատանքներու, սակայն, անոնց կողքին, անախճակալ անկիւնագարծով մը կը վերադառնար իր անհանդիս վրձինի խաղերուն, կլոր եւ փակ համադրութիւններուն, կ'առանձնացնէր տիպարները եւ ֆունկցիոնալ գործերով Վլը պայթեցնէր՝ զանոնք:

ԱՍՍՏՈՒՐ

Առատուրի պարագային, գերիրապաշտ ոճը ո՛չ թէ ձեւական, այլ հոգեբանական-գեղադիտական ստորագութիւն է, այսինքն՝ որոշ կեցուածքի մը իւրայատուկ եւ անկրկնելի արտայայտութեան կերպը: Մինչդեռ, միջակ առջանդներ այս ոճը օգտագործած են արտայայտելու համար երեւակայութեան խաղերը կամ,

պարզապէս, սեռային եւ ենթագիտակցական տրամադրութիւններ:

Առատուրի նկարչութիւնը պէտք է դիտել գոյապաշտ-գերիրապաշտ աշխարհահայացքին ծիրէն ներս, սակայն ծագում առած լիբանանահայ պայմաններէն: Իր արուեստը զանգուածային մերժում մըն է, ուղղուած՝ անմիջական մի-



«Խաղեր», Eau-forte acquatinte, 1981

Նախապես և Ժամանակին առկայ՝ գեղարվեստական չափանիշներու: Իրրեւականութեամբ և վկան վաթսուսական թըւականներու կացութեան, Ասատուր փախած և ընտրած է ըլլալ նկարիչը քառասուն վիճակներու, անյաղթաբարելի մղձաւանջներու և մտայլ երդիծանքի:

Եթէ հիւժը՝ կրաւորական կեցուածքներու տէր անհատ, նաւանջած է ղէպի անցեալը, և անկէ ղէպի մահուան գտաղափար, Ասատուր մահն ու կործանումը տեսած է ներկային մէջ, որ կը պարունակէ ապագայ կործանումին ալ սեմերը: Ասատուր կ'ըսէ, թէ երբ կը նայի երիտասարդ և ղեղեցիկ կնոջ մը՝ պատաւը կը տեսնէ անոր պատկերին մէջէն: Իսկ երբ կը տեսնէ սլացիկ շէնք մը՝ կը տեսնէ անոր փրատակները: Կարծէք իրականութիւնը թափանցիկ կեղեւը ըլլար մահադէմ զոյութեան, կամ դիւրաբարի ղիմակ մը, որ իր սրուեստովը կը պատուի:

Եւ իսկապէս, ղիմակի սէմպլը կարծրածէն շատ աւելի կենսական տարր է

Ասատուրի տեղծուածային լեզուին մէջ՝ ղիմակները կամ ղիմականման ղէմքերը, առանց արտայայտութեան, յզկուած և ղիշ մը անթիք», կը խորհրդանշեն իրականութեան երկակի և խարուսիկ բնոյթը: Իր արուեստը, ուրեմն, կը վերածուի յայտնաբերողին՝ ճիշդ այդ փարատմտայ կացութեան, և անոր ընդմէջէն կը ձգտի վերբերելու կործանումը՝ իրրեւ շիմնական իրողութիւն:

Ասատուր կը ստեղծագործէ փորագրական ղժուարին թեքնիքով՝ կ'ըսէ թէ իր գործերը նախ պէտք է կարգացուին, ապա՝ ղիտուին: Իսկ իր բառերը երկրաչափական ձեւեր են, թուանշաններ, սաթիրական և իզական կերպարներ, ղիմակներ, շէնքերու և պատերու բեկորներ, ազրակոյտեր, ղիբեր (մասնաւորաբար՝ յատիներէն «ձշն»): Իր կրաՎիւրները նկարաբանական-պատմողական բնոյթ ունին: անոնց մէջ Ժամանակը՝ սղոցող և տազնապայի, կործանումի ազդակ է, առանց երբեք ունենալու նորոգութեան,

կեանքի յատկանիշները իր մէջ: Իսկ միջոցը, այսինքն՝ տեղը, ուր կը պատահին Ասատուրին «ընչպէքիբ», հողեկա՛ն բեմն է: Ընթացիկ արասյայտութեամբ՝ իր գործունէութեան զաշտը իր իսկ ստեղծած դերիրականութիւնն է, որ անշուշտ ստարկայականորէն գոյութիւն չի կըրնար ունենալ:

Աւելի քան տանտմեակէ մը ի վեր Ասատուր հասած է իր առաջադրանքներուն իրագործումին: Անձկութեան, կործանումի եւ մահուան յարատեւ սարսափին վրայ հիմնուած կեանքի իր հասկացողութիւնը, հանճարեղօրէն զրսեւորւած է իր արուեստին մէջ, նոյնքան յուճական եւ հիմնդպին, որքան Քափքային վէպերը:

Իրբեւ իսկական գոյապաշտ մը, Ասատուր կեանքը նոյնացուցած է յիթիսարի մղձաւանջի մը հետ, անջատած՝ մարդուն գոյարանական էութիւնը ընկերայիննէն, իր մարդերը մեկուսացած գոյութիւններ են, որովհետեւ նկարիչը աւելի իրականութիւն եւ կշիռք տուած է զանոնք իրարմէ՛ ըստնոց պարագութիւններուն, քան թէ՛ իրենց՝ իրբեւ գրական-ընկերային արարածներու: Իր տիպարները ներքնապէս պառակտուած, սփռափրփիմ էակներ են, որոնց մարդկային գոյացութիւնը վերածուած է մութ եւ խորհրդաւոր հանգոյցի մը:

Չնդշիւով ամէն իրողական ազդակ, Ասատուր ապա-պատմականացուցած է նաեւ կեանքի երեւոյթները, զանոնք պատկերացնելով իրբեւ անկապ հոսք մը զէպի վերջնական անէութիւն:

Պուստի այս շփոթն ու մթութիւնը, որոնցմով Ասատուր պարուրած է իր նը-

կարչութիւնը, ինքնապաշտպանութեան համար կառուցուած պարիսպներ են, իր եւ իրեն համար թշնամական միջավայրին միջեւ: Սակայն մահուան եւ անհեթեթութեան բնականացանցումը երկպառքի զէնք մըն է, որ կրնայ փճացնել զայն գործածողը. եթէ Ասատուր իսկապէս հաստացած է իր աշխարհահայեացքին ճշշգրտութեան, պէտք է ընդունի իր արուեստին միջոցով մարդը առաջնորդած ըլլալու յուստեանական մղձաւանջի մը:

Ասատուրի գործը վաւերապէս բանաստեղծական է, որովհետեւ զեղեցիկ է իր կրավիւրները ձեւակածօրէն անխոցելի են, եւ հողեքանական բովանդակութեամբ՝ հարուստ. իսկ ճշմարտացիութեան շփանիչը, իր եւ ուրիշներու ալ պարագային, անկեղծութիւնն է սեփական համոզումները յստակութեամբ, նոյնիսկ կարծրութեամբ արտայայտելու: Հանճարեղ արուեստագէտին եւ սովորականին միջեւ տարբերութիւնը, իւրաքանչիւրին ստեղծած աշխարհին իմացական խորքն է եւ, մա՛նաւանդ՝ ընդարձակութիւնը ներառնելու համար մարդկային իրականութիւնէն նո՛ր մարզեր:


Հակառակ իր ենթակայական բնոյթին, Ասատուրի արուեստը կը յաջողի հարազատօրէն պատկերացնել որոշ կեցւածքներ, տւելի՛ ճիշդ՝ հակազդեցութեան կերպեր գոյութեան որոշ վիճակի մը. մնացեալը, այսինքն՝ իր բանաստեղծականութիւնը, թիճիճ վարպետութիւնը, յաջողութիւնը ստեղծելու զեղարուեստական ուրոյն համակարգ մը, կամ զեզու՛ց մը, եւայլն, այս բոլորը կու գան կապմելու Ասատուրի գիժազիծը, զինք ուրիշներէ տարբերող:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՐՈՍԵԱՆ

Յ. Թորոսեանի արուեստին գիրքը, թէեւ գրականօրէն չէզոք կեցուածքներու ճիւղէն ներս կ'իյնայ, սակայն, որոշ իմաստով մը, կը տարբերի հոն դասուորուող նկարիչներուն պարագայէն:

Աւելի քան քսանընէք տարիներու իր

գեղարուեստական կեանքին ընթացքին Թորոսեան եղած է «դրական չէզոք» մը բոլոր կեցուածքներուն մէջ, գրականօրէն հակազդած եւ հետեւած է արուեստի առկայ ոճերուն: Այն՝ ինչ որ զինք փերկած է ձեւապաշտական անկումէ, եղած



«Մերկ», Իզգաների, 1965

է, իւրաքանչիւր հանգրուանի մէջ, «Նորազ» մը, արուն շուրջ կեդրոնացուցած է իր դործը, եւ որուն ամբողջական արտայայտութեան հուիքած աուեսլ շրջանը: Այս Երազը, իր բոլոր կերպարանափոխումներովը, եղած է թորոսեանի հակազդեցութեան կերպը՝ ծայրայեղորէն համեստ մանկական եւ պատանեկան իր միջավայրին. սակայն ան Ասատուրի նըման չէ մերժած իրականութիւնը, ոչ ալ՝ Կիրակոսեանի նման նետուած հոն առկայ մարդկային տաղանդներուն խորհրդ. բնականաբար չէր կրնար նսեւ Կիւլի նըման նահանջիլ ողբերգութեան մթութեան մէջ, որովհետեւ թէեւ իր առօրեան ալ թունաւորուած էր մելտարամաքիք մըթնոլորտով. սակայն անձնապէս չէր ապրած աղէտը:

Փոխարէնը, ան հետամուտ եղած է անսահմանելի եւ անհասանելի Երազի մըլ բան մը՝ որուն պատկերացումին ընդմէջէն, յաջողի ուրուազձեղ իր անհատականութիւնը:

Երազը՝ Փարիզ մնացած շրջանին եղած է զիչ մը «անթիք», բայց այլուպէս շատ իզական, տանձաձեւ կերպարը, կամ կի-

նը, այնպէս՝ ինչպէս ինք կը տեսնէ զայն. բազմաթիւ տարբերակներու ընդմէջէն, աստիճանաբար այս կերպարը վերացակուցած է, ըլլալու համար միջոցին մէջ ծիւցող, նոյն այդ տանձանման կերպարը յիշեցնող գիծերու: Վաթսունական թուականներու կէտէն մինչեւ 1974ի իր ցուցահանդէսը, «Մոտիւլար»ի մէջ, թորոսեանի Երազը վերածուած էր բնանկարային-վերացական մթնոլորտի մը, գինք առաջնորդելով մինչեւ ամբողջական վերացականացում, դործնականապէս «պարսպ» պատտաններու: Այդ շրջանին հող դրաւած նորարարական շարժումներուն հետ դրական այս աւերչութիւնը հիմնականին մէջ չէզոք իր կեցուածքներուն լաւապէս դրսեւորումն էր: Այս դիւր կէտին կամ հողերանական-գեղարուեստական անելին, որուն մատուած էր թորոսեան, կը յաջորդէր իր նոր Երազը՝ մարմնացած հայրենի բնութեան մէջ, մասնաւորաբար՝ ժայռերուն. ազգային եւ անհատական պատկանելիութեան հարցին լուծումի մը տպաւորութիւնը ձգող այս բնարութիւնը, իր կարգին, կորսնցուցած է իր ուժը, եւ թորոսեան ներկայիս կը դանուի կայուն հանգրուանի մէջ:

ՍԵՂԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ



«Տօնակամ օրեր», Իզմաների, 1981

Անցնելով տեղական ինքնութեան, Մանուկեան փորձած է պատկերացնել իրականութիւնը թիչ մը քննադատական, իրապաշտական տեսանկիւնէ: 1967ին տեղի ունեցած իր առաջին ցուցահանդէսէն մինչեւ երկրորդը՝ 1972ին, իր դործերը թիչ մը ակադեմիական, բայց արտայայտապաշտ ոճով լայն հանդերձաններ էին. մէկ ցուցահանդէսէն միւսը, ա՛յն՝ ինչ որ դիտողին ուղարութիւնը կը զրաւէր, Մանուկեանի անցումն էր մեղմ արտայայտապաշտութեանն տազնապններու, շփոթի եւ առանձնութեան մակարդակի մը: Երկրորդ ցուցահանդէսին ներկայացուած դործերը կորսնցուցած էին գոյները, ըսպիտակցած էր մթնոլորտը եւ արտայայտած վայրուճաններով, Փոխարէնը՝ պատաստաններ ստացած էին տեսակ մը համադրական ուժականութիւն, որ կը բխէր այդ շրջանին իր անցուցած տազնապններուն ուժգնութիւնէն: Նոյն շրջանին, տեղական (լիբանանեան) զեղարուեստական հրուպարակը վերածուած էր թոմաս

մանեան «Երաշալի լիբան» մը, հակադիր ուղղութեանց եւ դանդաղան արժեւորութեան տարօրինակ հաւաքովայրի մը: 1979ին (...) կը փորձէր գտնել հրկիզած բաղաբին գոյները. յարաբերական խաղաղութեան ժամանակներուն կը վերադառնար պարզ կացութեանց: Այս ցուցահանդէսին մէջ առնուազն, ձեւաբանական հարցերը կը դռնուէին անլոյծ վիճակի մէջ. լուսանկարներու յարատեւ օգտագործումը, պոռոտ գոյներու, փշովի (spray) միջոցներու գործածութիւնը, փոսքերներու յատուկ համադրումի ոճը, կտուները վերածած էին անփնջներու: Մեծ շափով նուազած էր անոնց բանաստեղծականութիւնը՝ իրբեւ նկարչական ստեղծագործութիւններ: Այս իրողութիւնը բացայայտօրէն կը զրկէր դիտողը նրկարչութեան հայթայթած վայելքէն, բա՛ն մը, որ կը փոխանցուի գոյներու, ձեւերու եւ զիծերու վարպետ ներդաշնակումէն նկարչական համադրութեան մը մէջ: ՍԵՂԱ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-SUSAՅԵԱՆ



ՀԱՆՐԱՊԵՏ ԳԻՏԻ ԳԱՏՐԱՍԷ «ՄԱՅՐԻԿ» ԽՈՐԱԳՐՈՎ ԺԱՊԱԽԷՆ ՄԸ

Շարաթ, 16 Յուլիս 1934ի երեկոյան, Ալ-Փորփին Հայ Մշակոյթի Տոհմը այցելած է Փշ-րանահան շարժապատկերի հանրամասնօթ թեմա-զրէլ Հանրի Վերնէոյ (Ալտո Մալաքեան), որ շուրջ 250 ներկաներու կողմէ արժանացած է Չեքո ընդունելութեան:

Հանդիպումն ներկայ զանուած է նաև Ալ-Փորփին քաղաքագետ, պետական նկարագրաու-ղար Ժոզէֆ Յուսէպեզի եւ անոր փոխանորդնե-րէն՝ Թոմէ Թէսէյը:

Մշակոյթի Տան վարչականներէն Արշալոյս Մարգրեանն կատարած է երեկոյնի բացումը, որ-մէ հաջ, հաստատութեան անօրէնուհի Յամիկ Գեանեանն խօսելու հրաւիրած է բեմադրիչը:

Առաջին ներթին, Ալտո Մալաքեան պատմած է, թէ լրագրող կզած շրջանին, իր կամքն առ-կախ, իր անտուք ինչպէ՛ս Հանրի Վերնէոյի փոխ-ւած է:

Ապա, իր յիշողութիւնը թարմացնելով՝ ան խօսած է իր մանկութեան մասին, փառաբանած է Հայ մօր անզուգական սիրտը եւ անուան սե-րը՝ իր զաւակներուն նկատմամբ: Եղբակցիներով, Փրանեսայ բեմադրիչը յայտնած է, թէ իր մօր եւ բոլոր Հայ մայրերուն մաքրամաքուր էութիւ-նը յուերժանելու նպատակով, մօտիկ ապագային պիտի պատրաստէ ժապաւն մը՝ «Մայրիկ» խո-րագրով:

ՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՆ ՆՈՒԱԳԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՄՈՅԹԻՆ ԵՆՈՅԹԸ

Մասկուայի Վիլնըայ երաժշտական պետական օրակէն մէջ, «Հայաստան» գեղարտական կեդ-րանին կից՝ Հանդէս եկած է Հայկական ազգագրա-կան Հին Նուագարաններու Համայնք: Խոճքը, ար-ուն Հիմնադիրն է Կարլին Միքայելեան, երկու տարուան անցեալ մը ունի անդամները առաւեռ-լաբար երիտասարդներ են:

Ներկայիս լայն տարածում ունեցող Հայկա-կան Հին Նուագարաններու՝ շուրջուկի, սրինգի, պիտի, Համէնի զուռնայի, սանթուրի, դափի, ըլուի, թամբուի եւ լլիի արդէ ժաւակները

Համայնքին կարեւորութիւնը ընծայած են՝ կազմե-լու ինքնատիպ եւ ճոխ յայտագիր մը: Մասկուայի երեկոյթին հեշած են ազգային մեղեդիներ՝ իրենց բազմաթիւ տարբերակներով, Հայկական միջնա-դարեան երգեր, զուռնաներու նուագներ եւ Հայ արդէ երաժիշտներու զօրծեր:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳԱՍԱԳԻՐԲ ՄԸ ԿԸ ՆՇԷ ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Գոնի մէջ զանազան թրջական գեպանատու-նը բողոքած է դեքման կառավարութեան եւ պո-հանլան՝ փոփոխութեան ենթարկել կրօնական դատարիք մը, որ «Ազատութիւն, անկախութիւն» զին բանք» խորագրի նախ անգրագրածն է 1915ի Մին Եղեռնին, արտասպանութիւնը կատարելով «Մուսա լեքան Բախաւի օրերը» անուն վէպէն:

Յիշեալ դատարիքը պատրաստած է Ապիւր Չէօֆէր, 1973ին եւ վաւերացուած՝ 8 նոտանդնե-րու մշակոյթի նախարարութիւններուն կողմէ: 1980ին անկէա արժանացած է իր Հինգերորդ Հրո-տարակութեան:

«1915ին գործադրուեցալ պատմութեամ ամե-ճամնն ցնդապաճուրիւններն մէկը, իր հարկը հազարաւոր իայեր թուրքերու կողմէ բնօրէն առ-տարուեցան իրենց պապեմական հողերն, որովհե-տն հայերը աշխատաւք էին եւ այդ մէկն ինչ-քաւ էր թուրքերու ատիութիւնը գրգռելու հաս-տատումը կատարելէ հաջ, Ա. Չէօֆէր կը ներ-կայացնէ Մուսա լեքան Հերոսամարտը կազմա-կերպած եւ վէպին պիտաւք Հերոս Գարբիլ Բաղ-րատեանի կերպարն ու յեղափոխական զործու-նէութիւնը՝ վեր անելով Մուսա լեքան Հերոսա-մարտի յանդուզն եւ ուսանելի բովանդակութիւ-նը:

ԱՌԱՆԴԱԿԱՆ ՑՈՒՅԱՀԱՆԴԵՍՆԵՐ

Նրեանի մէջ զանազան երեք ցուցարաններու մէջ, ամբան առաջին օրերուն, տեղի ունեցած են երիտասարդ նկարիչներու ստեղծագործութիւննե-րու ուսանողական ցուցահանդէսները: Ներկայաց-ւած են քանդակներ, գեղանկարչական ստեղծու-ղարիւթիւններ, գծանկարչական յղացումներ, կրտսիրներ, եւ այլն:

Ամէն ամառ տեղի կ'ունենան այս տեսակի ցուցահանդէսներ, որոնց կրեան մասնակից 254ն մինչև 35 տարեկան արուեստադէսներ:

Այս ձեռնարկներուն Համար, Թանգարանները տրամադրած են յատուկ սրահներ: Այս Հանդի-պումներուն զուգահեռ՝ տեղի կ'ունենան նաև բացօթեայ ցուցահանդէսներ, պուրակներու կամ գրօսալիներու մէջ:

Երիտասարդ արուեստադէսներու միութիւնը կը հաշուէ 300 անդամ:

**ՅԱԿՈՒՐ ՕՃԱԿԱՆԻ
100 ԱՄԵԱԿԻ
ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**



1.— Կայսերական յաղթերգութիւն
(Պատմաաճքներ, հեքիաթներ, արձակ էջեր)
• Պէյրուք, 1983, տպարան Ալթափրես, 212 էջ:

2.— Քնարախաղեր
(«Ոսկի ուռնակը», «Այն օրերուն»,
«Աստուծոյ շունչով», «Սասունցի Գաւիթ»)
• Պէյրուք, 1983, տպարան Ալթափրես, 112 էջ:

3.— Մայրիներու շուքին տակ
(Ամբողջական շարքը)
• Պէյրուք, 1983, տպարան Ալթափրես, 152 էջ:

4.— Երբ հիները կը կարդանք
(Գրիգոր Նարեկացի («Աղաչեմ պանփոփոխեի») եւ
Սայաթ-Նովա («Մէ խօսկ ունիմ»)
• Պէյրուք, 1983, տպարան Ալթափրես, 128 էջ:

5.— Նամականի
(Յիսուն նամակներ)
• Պէյրուք, 1983, տպարան Ալթափրես, 128 էջ:

6.— Միճչեւ ո՞ւր...
(Տրամախօսութիւն)
• Պէյրուք, 1983, տպարան Ալթափրես, 96 էջ:



Խմբագիր՝ Պ. ՄԱՍԳԵԱՆ

ԼԻԲԱՆԱՆ

Հատավաճառ 12 Լ. Ո.
Տարեկան բաժնեգին 125 Լ. Ո.

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ 15 Ս. Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տղար

بَاكِينُ
مجلة شهرية ، أدبية وفنية علمية
المدير المسؤول
السيد ارثين كارنيك قرانجيان
PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN
Բ Ա Կ Ի Ն
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԹԵԱՍԻ
Խմբագիր
ԳՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ
Խմբագրության անդամներ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԵՐԳԵՐԵԱՆ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
Վարչական պատասխանատու
ՎԱՉԷ ԲՐՈՒՏԵԱՆ
B. P. 11 - 8404 - Beyrouth - LIBAN
Tel. 296898

أيلول ١٩٨٤